# The Fox Book (1668 printing)
## Աղուեսագիրք

*This is a machine working draft produced by the Grabar Archive (Steps Ventures). Transcriptions are dual-model reads reconciled against the page images; English passages are machine drafts. Nothing in this file is a citation: consult the page scans linked from the site before quoting. Source scans: British Library Endangered Archives Programme / archive.org, public domain.*

EAP180-1-1-8_002R.jpg

HEAD

Աշխարհացոյց Մօսէսի խորենացւոյ:

TEXT

ՅԱ Ղ Ա Գ Ս Ա Շ Խ Ա Ր Հ Ի : գրութե՛ յԱծային գիրս ոչ ուրեք գտանեմք ո- ճով ասացեալ. այլ դոյզն ինչ՝ դուն ուրեք՝ և այն դժուարա-

NOTE

ա 2 հա

EAP180-1-1-8_003L.jpg

NOTE

4

TEXT

Հաս և տաժանելի: Արդ՝ վնզի ան Հասք դոցա եղեալ մեզ յարտաքին սըն Հարկաւորիմք ձեռնարկել: Որով զաշխարհագրութի յարմարե ցին ՚ի ճանապարհորդութէ և ՚ի նաւարկութէ՝ և ստուգեցին յերկ րաչափութէ : և ինքն երկրաչափու թին՝ գտաւ յաստեղաբաշխութէ : Քանզի՝ ուշ եղեալ առաջինքն խո կային, թէ որք տեղիք երկրի, ընդ որովք են կացեալք մասամբք երկ նայնոյ բոլորակին: Եւ զմեծութի տունջեան և գիշերոյ: և զոր իվր երկրի. և զոր իներքոյ երկնից միշտ բերելով: յայտնեն և զբնակութի մարդկան: ՚Ի միջօրական գծէն զդիրն առնելով ասպարիզական չա փու ըստ

ճանապարհորդութե և նաւարկութե : իմացեալ զկայ անսն և զփոփոխիլն: զայլ այլուր այլապէս երևեալ: քանզի իվր այրե ցածին բերին կենդանատեսակքն՝ մտանեն և ծագին: Բայց փոքր արջն

EAP180-1-1-8_003R.jpg

NOTE

7

TEXT

տուն երեք բնակութի մարդկան: Եւ զվերաչափութի առնելով ժա մադիտականաւն, իձեռն երևե լոյ աստղուօքսն և սկիթիուն գործ արանաց: բայց կարևոր է Դէո պետուայ առի ցամաքաչափութ որ է Պտղոմէոս և կղօդէոս: փեալ ասպարիզօք զամ բնակութի մարդկան: Երկայնութբ յԱրև մտից սկիզբն արարեալ՝ որ է ծով անծանօթ Ովկիանոս: ՚Ի ծայրէ անծանօթ աշխարհին մինչև յԱրև ելս՝ յեզր անծանօթ երկրի մասունս հարիւր ութսուն: Սոյնպէս և լայ նութի սկիզբն արարեալ յայրեցե լոյ գօտւոյն՝ չափեալ զՀիւսիսիւ. անծանօթ ծով և երկիր՝ մասունս վաթսուն և հինգ: և դարձեալ յայ րեալ գօտւոյն ՚ի Հարաւկոյս չա փեալ յանծանօթ երկիր՝ մասունս տասնևհինգ՝ լինիլ ամ լայնութե մասունս ութսուն: Եւ առաւել յարտաքսկոյս քան զայս՝ չէ ուրուք

NOTE

ա 4 զեզր

EAP180-1-1-8_004L.jpg

NOTE

8

TEXT

զեզր երկրի տեսեալ՝ և կամ գիտա ցեալ՝ ոպասէ Պտղոմէոս : Այլ ծա նօթ կոչի երկիր և ովկիանոս . յորս երկրագիր բոլորակին տիեզերա գրութեցն առեալ Պապայ Աղէք սանդրացւոյ

Համառօտաբար երկ ռագրութե : Յորմէ մեր ծայրա քաղ արարեալ զմեծամեծսն և զնշանաւորսն միայն . և զչափս որ չափութեցն . ոչ ըստ յատակի երկ րի՝ այլ ըստ բարձրացեալ լերանց տեսութե : ընդ օդս անցանելով ՚ի ձեռն գործարանաց . նկարելով զնշոյլս արեգական և լուսնի և աս տեղաց : ըստ տանց իւրեանց եօթն նահանգացն՝ փոփոխման սահմա նաց : Եւ է սահման բան կարճա ռօտ յայտնիչ բնութե ենթակայ իրողութե : որ զիւրն ՚ի ներքս փա կէ՝ և զայլն ՚ի բացորոշէ՝ և չափէ զմասն : Եւ է մասն ՀինգՀարիւր ասպարէզ : և ասպարէզն է Հեռա գնացութբ՝ այսինքն է վտաւան մի : Եւ

EAP180-1-1-8_004R.jpg

NOTE

9

TEXT

Եւ է ասպարէզն ըստ օդաչափու թե քայլս հարիւր: և քայլն վեց ոտն է . և ոտն վեց մատն: Մղոնն ասպարէզ մի: իսկ ասպարիզաց աս պարէզն հարիւրեքառասուներեք քայլ: և մղոնն է եօթն ասպարէ Ոպ լինիլ զետնաչափուբ մղոնն հա զար քայլ: Եւ փարսախն երեք մղոն է: Բայց օդաչափութբ՝ է մասն հինգ հարիւր ասպարէզ ՚ի լայն երկ րաչափուե, և նոյն չափ է երկայնու թին չորեքկուսի: ոպ զի լինիլ մասին եօթանասունմի մղոն: չորք եօթն, քսանևութն: Արդ՝ այս չափովս չափեցին զերկիր և զծով: սկիզբն արարեալ յայրեցելոյ գօտւոյն՝ զոր կոչեն միջօրական գիծ: յորում բնաւին ոչինչ բուսանի. յաղագս միշտ յաճախելոյ ընդ նմա արեգա կանն յամառնային եղանակն: զեղա նակ ձմերնային փոփոխեալ և անդ րէն դարձեալ: Վ ո որոյ ասացին զարեգակն շատ փոքրագոյն քան

NOTE

ա 5 զերկիրս

EAP180-1-1-8_005L.jpg

NOTE

10

TEXT

զերկիրս զայս լինիլ: քանզի՝ վեցեր որդ կամ երրորդ լինիլ արեգական: զերկուս նահանգսն ասելով բովան դակութի արեգական՝ այսինքն է օթևանս քառասուն: յորմէ ըստ հեղման օդոյն նրբացեալ բորբո քութե ասացին զայրեցական դօ տին. և աստ՝ և անդ : Եւ նորա զՈվկիանոս ընդմիջելով ՚ի բնա կութէն: և հարաւային կիսագն տին, զոր ընդդէմ երկրի կոչեցին, բնակելոյ երկրիս մեծութբ: ոչ ըստ սմա՝ այլ հիւսիսային կիսագն տին . զոր կոչեն զոյացեալ: քանզի ՚ի նմա ասացին փոքրագոյն գծա գրեալ՝ վե անձուկ գոլոյ բոլորա կին. և զդէմսն նմանապէս նորին հարաւային եզրն զոր կոչեն ցամա քեալ: Եւ ոչ միայն զայրեցեալ դօ տւոյն ասեն զովկիանոս՝ և զամ երկրաւն շուրջ գոլ: զոր և կոստան դինոս Անտիոքացի ՚ի քրիստոնէա կան տաղագրութեն ասէ՝ յաղագս

NOTE

621129

EAP180-1-1-8_005R.jpg

NOTE

11

TEXT

տապանակին անցելոյ՝ յարևելեան երկրէն առ մեզ՝ ՚ի մէջս կոյս : Բայց Պտղոմէոս՝ որոյ արք բազմաշրջու թբ զամ չափեցին : ոչ ասեն շուրջ լինիլ զովկիանոս այլ ՚ի միոյ կողմա նէ անկեան՝ Հիւսիսոյ արևմտից՝ և տարածի յարևելակոյս ընդ Հիւ սիսի: յերկուց մասանցն մասն մի ընդ արևմուտս : ՚Ի Հարաւակոյս ՚ի չորս մասանցն . երեք մասունքն որք ՚ի նմանէ սկսեալք

զանծանօթ երկրէ ասէ շրջապատեալ զբնա կութի մարդկայինս բնութե : Եւ զերից ծովուցն մեծամեծաց ըզ Հնդկայնոյն ասեմ. և զՅունակա նէն. և զ| ըկանին ծով: և երկիր բնակութի մարդկան ասէ շուրջ լինիլ զնոքօք՝ և է ճշմարիտ :

HEAD

Աշխարհագիր Հատուած երկրորդ :

TEXT

Քանզի զՅունականաւն և զկաս բիականաւն, և մերոց իսկ ա_ րանց պատահեցաւ շուրջ անցանիլ. յորոյ

EAP180-1-1-8_006L.jpg

NOTE

12

TEXT

յորոյ վարկանիմ և զՀնդկայնոյն նոյնպէս լինիլ: և ոչ ոպ ոմանք ա_ սացին Ովկիանոսի պարունակեալ զամ: այլ Հաւանեալ եմ Պտղօմեայ պատմութեն. որոյ արք զայրեցեալ զօտեաւն անցին ՚ի Հարաւոյ կոյս. և զազգսն զայնոսիկ ճշգրտեցին . և զսահմանս ճարակաց նց չափեալ՝ Յակիզիսիբրայ մինչև ՚ի լուսնի լեառն և անդր ևս՝ յանծանօթ եր կիր.և շուրջ եկեալ զանծանօթ երկ րաւն՝ յՈվկիանոսէ մինչև ցՈվկիա նոս՝ և զևսառաւելն լռեաց. զորս ոչ երբէք կոխեաց ոտն՝ և կամ ետես ակն մարդոյ. որում Ածային գրոց ՚ի ճահ զան վկայութիք. ոպ Յօբ ասէ . թէ ձգեաց զհիւսիս զոչըն չիւ. և եթէ հրաման պատեաց զե րեսս ջուրց, այսինքն եթէ հրամանն Տն բաւականէ ունիլ զեզր ջրոց ան ծանօթի ծովու.ոչ պիտոյացեալ ան ցանել երկրի. և ոչ եզր սպառուա ծի անծանօթի երկրի պիտոյացեալ ջրոյ.

EAP180-1-1-8_006R.jpg

NOTE

13

TEXT

բայց թէ և է զանծանօթ ու ծով. կամ շուրջ զանծանօ -ովու երկիր . մեք ոպ անհատ _ մտածութեց լռեմք. և - զայս միայն.զոր կոխեաց ոտն, -ս ակն մարդոյ : -՝ սկսցուք ըստ Պապայ Րղէք անդրացւոյ երկրագծութեն՝ -ո ինքնագիր բոլորակին կլօ Պտղոմեայ տիեզերագրու - չափուց. զոր սկսեալ յայրե գօտոյն կրկնակի, և հիւսիսի, -արաւոյ.բայց սկսանի յայրեալ ն յանծանօթէ երկրէն սիւնե անցանելով ը Տաբռոյքանի ոյ ստորոտն. և ընդ- ՛լ,եղոս գե տակն և ընդ ամ էթէօպայս Հարաւոյ կողմանէ Թէօբլիմաց ն . որ կոչի աստուծոց աթոռ. ձկնակեր էթէօպայեցիսն, -անօթ երկիր . իսկ յՈվկիանո զկողմամբք զեփիւռոս հողմոյ սկսա

EAP180-1-1-8_007L.jpg

NOTE

14

TEXT

սկսանի քսանևմէկ մասն է լայնուին առ ձկնկերովք Եթէօպայեցովքն և Թէոքիմաց լերամբք. և պատէ զարևմուտս, մինչև իսպառ լայնու թի չափու. և դառնայ առ հիւսի սի յարևելս մինչև վաթսուն մասն լայնութին.որէ հանդէպ Կարկինէ տեան ծոցոյն Պոնտոսի առ Բեռ սոնիւ. և անտի յառաջ անծանօթ եր կիր. և պատէ զմնացեալ մասունսն հիւսիսոյ. և զարևելս և զհարաւ քսան մասն յարևելից մինչև ցնոյն Ովկիանոս. իսկ զաւելիսն քան զայ սոսիկ չէ ուրուք տեսեալ և կամ ծա նուցեալ. վե այնորիկ անծանօթ կո չի երկիր և Ովկիանոս: և Ովկիանոս ծանօթ նաւագնացութե, և կզզիք երեք հնդէպ ներքսագոյն Լիբիոյ որք երանելեաց կզզիք կոչին. և դո ցա ը արևմտից վեց կզզի այլ է .և դո ցա ՚ի հիւսիսային չորս կզզիք հան դէպ Բրիտանեաց՝ և մի նեղուցն որ կոչի սեպտէ, այսինքն եօթնեակ՝

քան

EAP180-1-1-8_007R.jpg

NOTE

15

TEXT

քանզի զեօթն մղոն ունի լայնութի տեղւոյն՝ որ գետաբար ելանէ յՈվ կիանոսէ, և ծնանի զյունաց ծովն. որոյ յարևմտից կղզի կայ այլ մի ևս ։ Իսկ Ովկիանոս երթեալ ըն հիւսիսի և դարձեալ ըն արևելս առնէ երկուս կղզիս մեծամեծս. որք կոչին Բրի տանացւոց աշխարհք՝ և զԹուղիս մեծ կղզի. որոյ հասարակն անծա նօթ երկիր համարեալ է. և կղզի մի այլ՝ որ սկանդրէ անուանի . յորում դունթք լեալք են.և քն զայս կղզիս այլ նաւագնացութի չկայ՝ և ոչ հա սեալ է ոտն մարդոյ.վասյնորիկ կոչի անծանօթ ծով . մտանեն և գետք քաանևմէկ յարևմտէ յՈվկիանու ։ Իսկ երեք ծովք՝ որովք երկիր շուրջ է ։ Առաջին ծով՝ Հնդկայ ինն . որ կոչի կարմիր ծով՝ յորմէ ծո ցոյ ելանեն պարսից և արաբացւոց ծովք. և սահմանի ՚ի հարաւոյ ան բնակ և անծանօթ երկրաւ ։

NOTE

Իսկ

EAP180-1-1-8_008L.jpg

NOTE

16

TEXT

Իսկ յարևմտից՝ սինեցւոց աշխար հաւ. և ՚ի հիւսիսոյ՝ հնդկօք և պարսիւք և արաբացօք: Իսկ յարև մտից Եգիպտացօք և Եթէօպա ցօք: Երկրորդ ծովն Յունաց՝ որ ծնանի յՈվկիանոս է՝ և լայնացեալ ձգի մինչև յասորիս. և սահմանի յարևե լից ասորօք և փիւնիկեցօք: Իսկ յարևելից հրէաստանիւ՝ հարաւոյ մինչև

յեգիպտոս: իսկ յարևե լից հիւսիսոյ միջերկրոք մինչև ց Քաղկեդոն յորմէ ծոցոյ ելանէ Պոնտոսի ծովն: Իսկ ՚ի հիւսիսոյ Եւրօպի մինչև ց Սեպտէ: իսկ ՚ի հա րաւոյ Լիբիիւ մինչև ցնոյն Սեպտէ: Երրորդ ծով Վրկանի՝ որ կոչի Կաս բից ծով. և ձգի երկայնութի նր ՚ի բերանոյ երասխայ և կուր գետոյ մինչև ց մուտս Պօղէտիւէօմէտայ գետոյ. և սահմանի յարևմտից հայ օք. իսկ յարևմտից հիւսիսոյ աղվա նիւք.

NOTE

1 ա

EAP180-1-1-8_008R.jpg

NOTE

17

TEXT

նիւք՝ և Մազքթօք: Իսկ յարևելից հիւսիսոյ Սկիւթացօք· իսկ յարևե լից ազգաւն՝ որ կոչի Արիականք սմբոստակէք: իսկ յարևելից հա րաւոյ Վրկան աշխարհաւն: Իսկ ՚ի հարաւոյ Մարօք՝ Դելփօք՝ և Դէլ մօք՝ և Կասբիւք· մինչև ՚ի մուտս Երասխայ: Նոյնպ և զերկիր բա ժանեալ յերիս· յեւրօպիայ՝ ՚ի Լի բիայ՝ և յԱսիայ· և ունի զարևմտա կան հիւսիսային կողմանէ Եւրօ պիա մինչև ՚ի Տօնաւիս գետ: Եւ զա րևմտական հարաւայնով կողմամբ Լիբիայ մինչև ցկարմիր ծովն: Իսկ այսոցիկ սահմանաց յարևելա կողմ զհիւսիս և զհարաւ զմէջ Ասիա ունի մինչև ցանծանօթ եր կիր· վս որոյ մեծագոյն է քան զայլ հատուածսդ: Իսկ միջոց աշխար հի բնակուի մարդկան Պտղօմէոս զերջանիկն զԱրաբիայ ասէ· բայց ես ոչ հաւատամ: քանզի Աւետա րանն զերջանիկն Արաբիայ ծազս

NOTE

2 բ երկրի [oval stamp on right edge with text: ՀՍՍՌ ԳԱ * ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ]

EAP180-1-1-8_009L.jpg

NOTE

18

TEXT

երկրի կոչէ ուստի եկն դշխոյն Հա րաւոյ՝ բայց մէջ լսի՝ որ զմիաչափ Հեռակացութի ունի ՚ի ծայրիցն և յեզերացն. և այն է Եէմ, որում և աստուածայինք գիրք վկայեն. թէ պէտ զչափուցն Պտղոմեայ երկայ նատարած յարնելս կոյս: այլ զեր կուս չափս ՚ի մի դնելով նկարա գրեսցուք այսպէս. և Հարաւայինն ութ աւելի զայ.քանզ Հիւսիսայինն ըստ Պտղոմէական չափուն . զոր եր կու ՚ի մի եղեալ կերպագրեսցուք զերկայնութի չափուցն, ութսուն ամբողջ պահեսցուք՝ վն զի նեղ է.և զհարիւրն կրկնեսցուք լինի յիսուն, և այնպ նմանագրեսցուք: Նոյնգու նակ և ըստ Հարաւոյ յայրեցական գօտեաւն կրկնեսցուք զութն ՚ի չորս. և բերէ ստուգապ զնմանու թի զՊտղոմէական երկրագրութեն: Եւ արդ՝ որովհետև բովանդակե ցաք զհասարակախօսութիդ.այսու Հետև սկսցուք պատմել զաշխարհ

NOTE

առ

EAP180-1-1-8_009R.jpg

NOTE

191

TEXT

առանձինն ըստ գրից տեղագրու թեցն Պտղայ աղէքսանդրացւոյ. սկիզբն արարեալ յարևմտէ յՈվ կիանոսէ. ՚ի սպանիոյ աշխարհէ :

HEAD

Ասպանիօք աշխարհ Եւրօպիոյ :

TEXT

Սպանիա՝ է երեք անկիւնի իմնձև ով . կալով իմէջ ծովուց որպէս կղզի . սահմանի յարևմտից և հիւ սիսոյ Ովկիանոսիւ : իսկ յարևե լից Պիւռենէ լերամբ : իսկ ՚ի հա րաւոյ յունաց ծովուն : Եւ բաժա նի նայ յերիս աշխարհս փոքունս.որք ունին գաւառս բազումս՝ և քա ղաքս . զորս անուամբ յիշատակել աշխատութի անշահ համարեցաք . և ոչ միայն զգաւառս և զքաղաքս, այլև խորհեցաք միայն գրել զլե րինս անուանիս՝ և զգետս հզօրս՝ և զքաղաքս հոյակապս . և եթէ այլ ինչ նշանաւոր իցէ : Թողլով իբաց զթիւս և զչափս և զմանրամասնա բար պատմութիւն :

NOTE

բ 2. Իրե

EAP180-1-1-8_010L.jpg

NOTE

20

TEXT

Բրիտանացւոց՝ որք են երկու կըղ զիք՚ի հիւսիսայնոյ Ովկիանոսի ՚ի վերոյ կողմանէ Սպանիոյ. և ա նուն արևմտեան կղզւոյն ՚Նիում բառնիա . և է գարեհատաձև ճղճկէն՝ յորում գետք հզօրք տասն նվեց՝ և ազգք բազումք. իսկ անուն արևելեայն կղզւոյն՝ Որիուիտն . որ է մեծ քան զնա՝ և է տղրկաձև բազմաճիւղ. յորում գետք հզօրք քսանևհինգ. և յոյժ մեծածառք անտառք. և շուրջ զկղզեաւն մա նունք կղզիք քառասունևհինգ և թուղիս մեծ կղզի: Գաղղիա յարևելից կալով սպա նիոյ. և սահմանի ՚ի հիւսիսոյ, և յարևմտից Ովկիանոսիւ. իսկ ՚ի հարաւոյ յարևելից յունաց ծո վուն: և բաժանի Գաղղիայ աշ խարհս չորս: յորում լերինք մեծք՝ և գետք հզօրք քսանևինն.ևկղզիք շուրջ զիւրեաւ տասնևչորս: ունի քա

EAP180-1-1-8_010R.jpg

NOTE

21

TEXT

քաղաքս և ազգս բազումս՝ և հզօրս. զազգն ֆռանգաց: լինի ՚ի նմա գօ մէշ սպիտակ և սպանօղ: Գերմանիա, յելից կալով Գաղ ղիոյ առ հիւսիսային Ովկիանո սիւ • մինչև ցՍարմատացւոց լե րինսն. և ցԴանոբ գետ . որ է Յօ զու Ռուսաց. գայ և մտանէ ՚ի Պոն տոս ծովն: և սա մեծ է քան զՏօ նաիս: ունի Գերմանիա ազգս եօթն՝ յորոց մինն Գունդք. ունի լերինս անուանիս երեք: ունի և գետս հզօրս տասննմի՝ և կղզիս ինն. և անտառս չորս յոյժ մեծածառս. ունի և զերկաթակտրութի: Դաղմատիա յելից կալով Գաղ ղիոյ և առ երի Գերմանիոյ՝ և սահմանի յարևմտից ակամբք Դա նոբայ գետոյ . իսկ ՚ի հիւսիսոյ և յա րևելից նոյն Դանոբայ դարձուա ծօքն. իսկ ՚ի հարաւոյ՝ Յունիոն ծո

NOTE

բ 3 ցովն.

EAP180-1-1-8_011L.jpg

NOTE

22

TEXT

ցովն. և ունի Դաղմատիա աշ խարհս վեց՝ քաղաքս և գաւառս բազումս. ունի և լերինս վեց՝ և գետս քսան՝ և կղզիս եօթն: Եւ լի նի ՚ի Դաղմատիայ գազան ոպ զեզն՝ Բոնօնոս անուն. որ զկուռ ձգէ որսորդաց իւրոց, և այրէ: Իտալիայ է յարևելից Գաղղիոյ՝ և առ երի Դաղմատիոյ ՚ի հիւսի սոյ կուսէ. և սահմանի ըստ արև մտից և հիւսիսոյ՝ Ապաիացօք, և Ռէռէ լերամբք. իսկ ըստ հիւսիսոյ և արևելից, Յունական և Ադրիա կանաւ խորշիւն. իսկ ըստ հարաւոյ Սիւղենական Պիղագոսիւն: Եւ ունի Իտալիայ աշխարհս վեց. քա ղաքս և գաւառս բազումս: ունի և լերինս.և գետս տասննվեց:և կղզիս տասննեօթն. յորոց մինն Պոնտիայ՝

ուստի Պիղատոսն էր:Ունի և մայրա քաղաքս երկուս.զհռյակապն Ռենայ և զմեծն Հռոմ,բայց են յԻտալիայ և

EAP180-1-1-8_011R.jpg

NOTE

23

TEXT

և այլք աշխարհք կօսիկ անուն. ՚ի Սկիռնոս կղզւոջն. չորսհարիւր մղոնաւ շրջապատելով. յորում՝ գաւառք տասննչորք.ևգետք վեց. և մի Ոսկի անուն լեառն՝ ուր ոսկի և արծաթն Հատանի երկրաբու սակ իբրև ծնեբեկ: Սարդոնիա է մեծ կղզի. Հուպ կալով ՚ի Սկիռնոս կղզին ընդ Հարաւոյ. երկայն թևով ՚ի Հիւսի սոյ ՚ի Հարաւկոյս: Եւ ունի գետս չորս. և լերինս դժուարս, և ամուր տեղիս: յորում՝ քաղաքք ինն. և գաւառք քսան: մանունք կղզիք ինն. և շրջապատութի Սարդոնիոյ եօթնՀարիւր ութսուն մղոն: Սիկիլիա՝ է մեծ կղզի՝ յարևելից կալով Սարդոնիոյ կղզւոյն: Եւ է Սիկիլիայ երեք անկիւնի ձևով.՚ի ծայրէ ՚ի ծայր Հրիւր մղոն:յորում՝ գաւառք եօթն: քաղաքք ինն.

NOTE

բ 4 գետք

EAP180-1-1-8_012L.jpg

NOTE

24

TEXT

գետք տասննութն . կղզիք տասն և վեց : լերինք երկու, և Պաւթէ նոս՝ յորմէ գետք բղխին . և Ռառ կանոս՝ որոյ կատարն հրով տոչորի . և է Սիկիղիայ յոյժ արգևանդ : Սարմատացւոց՝ որոյ Հասարակն յարևելից կալով () աղուրայ որ է Պուղարք Գերմանացւոց՝ առ Հիւսիսային Ովկիանոսիւ՝ մինչև ցանծանօթ երկիր . զոր Պալաք կո չեն՝ և Յուպիա լեառն, յորմէ ելա նէ

Տօնաւիս գետ . և ունի Սար մատիա աշխարհս փոքունս՝ և քրիս տոնէից զՐեռսոն խրիմն, որ է ցա մաք կղզի . և ՚ի Հեթանոսաց բա զումս : Ունի լերինս Հինգ . գետս տասնևերեք . փոքրլիճ մի . և կղզիս երկուս : ունի և բագինս երկուս մինն կոչի ղեքսանդրու . և միւսն կեղարու : Թրակացւոց աշխարհն յարևելից կալով Դաղմատիոյ : և ունի թրա

EAP180-1-1-8_012R.jpg

NOTE

25

TEXT

րակիայ՝ փոքր աշխարհս հինգ, մի մեծ : յորում՝ են Սկալաւա -ոց ազգք քսանևհինգ . որոց փո անակ մտին Գունդք. ունի լե ինս՝ և գետս՝ և քաղաքս՝ և կղզիս՝ լիճս . և մայրաքաղաք զերջանիկն ոստանդնուպօլիս : Մակեդօնիայ ելից կալով յունա կան Պեղազոսին՝ առ երի Դահ ատիոյ՝ և թրակիոյ.'ի հարաւթող ով զէլլադայ: Եւ ունի Մակեդօ իայ լերինս վեց. և գետս չորս . աւառս երեսուն՝ քաղաքս տասն եօթն. ծովս երեք. կղզիս չորս : ւ լինի ՚ի Մակեդօնիայ մարմա իօն կանաչ սպիտակախայտ : էլլադայ առ երի կալով Մակեդօ նիոյ՝ իմէջ Պեղազոսացն : Եւ ունիէլլադայ փոքր աշխարհս վեց. զէպիւռուզ.զԱքաիայ.զԱտտի կէ.զեւբիայ զապառժ.զԵրիտէս

NOTE

Բ 5 մեծ

EAP180-1-1-8_013L.jpg

NOTE

26

TEXT

մեծ կղզի. և Սպելուռնիոս ցամաք կղզի: Ունի լերինս՝ և գետս՝ և զաւ առս՝ և քաղաքս՝ և կղզիս բազումս յոյժ . ունի և մեՀեանս

երիս, զ Իռայ և զ ըտեմիս և զՊօնէդր նոս՝ ունի և մայրաքաղաք զՀոյա կապն զ Թէնս . ունի և ջուրս ՚ի կղզւոջն զՍ՝նւոս՝ որ անպատ ճառ այսր անդր Հոսի, ուր խորա սոյզ եղև րիստոտէլ:

HEAD

Աշխարհ Լիբեացոց. ռ-ն :

TEXT

ռաջինն՝ է որ է Ուինկուրուրա. Մօրիտանիայ. Տինգանի տարա ծի ՚ի Սեպտէէ առ Հարաւակոյս արևմտեայ Ովկիանոսի: Եւ ունի Մօրիտանիայ լերինս վեց. գետս տասններէք: ազգս տասնևվեց . և զՊռոնիոն Պեգիոն, որ է Հրագոյն դաշտ: Մօրատաւնիայի, կիտւայն, Իսայն, յելից կալով Տիգոնւոյ՝ և տարածանի ՚ի Հարաւակոյս՝ առի Շ եղղելէօք: և ունի գետս տասնև եօթն՝

NOTE

Շահ

EAP180-1-1-8_013R.jpg

NOTE

27

TEXT

թն՝ և փոքր լիճս երեք՝ և լերինս ինգ : և քաղաքս բազումս՝ և գաւ ռս քսաննհինգ՝ և զպղնձափորա ոց երկիրն : լինի ՚ի լերինս այսմիկ ստիր Տինաբառիս. այսինքն է եղ կարմիր : Ափրիկէ յելից կալով Մօրիտա անիոյ առ ծովեզերբն . և բա ժանի Ափրիկէ յերկուս աշխարհս. և մի այլ առանձնակի, որ Տրապօ իս անուանի: Եւ ունի Ափրիկէ երինս ութն. գետս տասնևինն . գաւառս քառասունևմի : լիճս ութն. ծոցս եօթն. կղզիս տասն նվեց : և քաղաքս բազումս: և զկար կեղոնիայ մայրաքաղաք : Լինի յԱփրիկէ բանջար ինչ Լուտաս անուն . զոր եթէ ոք ուտէ, զհայրե նիս մոռանայ.լինի անդ և կարմիր յա կինդ՝ և եախուտ

լինի անդ սեսաթ: բոյս փափուկ՚ի ծովու՝ որ ելեալ յա րնէ յօդ կարծրացեալ քարանայ : Քիւ

EAP180-1-1-8_014L.jpg

NOTE

28

TEXT

Կիւռենականն, որ է Պենտապօլիս՝ յելից կալով Ափրիկոյ յերի ծով եզեր : Եւ ունի Պենտապօլիս՝ գաւառս տասնևհինգ : և գետս երեք. և լիճ մի. և կղզիս երկու. և քա ղաքս բազումս՝ և զՀերակլայն լեր ինս . և զԱնդաբեր երկիրն. և տե ղիս ինչ նորակերպս գազանուտս. և զերեկորնական պարտէզսն . և քար այրս Լակինեցւոց : Մարմարականն Լիբիա՝ և ամ Եգիպտոս յելից՝ կալով Կիւ ռենական աշխարհին՝ և առերի ծո վեզերն յարևմտէ՝ խորշ երկճղի կարմիր ծովուն. և ունի Եգիպտոս լերինս տասներկու. և գուբս եր կու շինուածոյս : և լիճս երեք ինք նեղս: և երեք լիճք այլք՝ զորս Նե ղօսի վտակքն առնեն. և գետ ունի զՆեղոս՝ որէ Գեհօն: ունի և գաւ առս քառասունևմի՝ և քաղաքս բազումս՝ և մայրաքաղաք զմեծն Աղէք

EAP180-1-1-8_014R.jpg

NOTE

29

TEXT

ղէքսանդրիոյ. ունի և կղզիս ՚ի Յունաց ծովուն տասնևմի. և ՚ի արմիր ծովուն երեք: ունի և աւազուտ, և զանանձրև երկիրն: նտոս Լիբի. որ թարգմանի ներքսագոյն Լիբի. յելից կա ով արևմտական Ովկիանոսի. յերի ալով Ափրիկոյ: և սահմանի ներք ագոյն Եթէօպաւ առ այրեցելով օտեաւն: Եւ ունի Ննտոս լի ի. լերինս ութն. գետս քսանև էկ՝ լիճս վեց. կղզիս տասներեք: - ճարակեն Ննտոս Լիբի՝ ազգք տասնևվեց: լինին և թզուկք մօտ

Ովկիանոսի ՚ի Սպիտակ լերինն. ան ցանեն ընդ Ննտոս Լիբիայ և բռն կեղջերք գազանք յՈվկիանոս ՚ի Նեղոս. ուր կոկորդիլոս գազանն, և այլք գազանք՝ անցանեն ընդ Նն տոս Լիբիա. որք կոչին Նափինթք. մարդակերպք են և գինէսէրք: Վերինն

EAP180-1-1-8_015L.jpg

NOTE

30

TEXT

Վերինն Եթէօպիա յերի կալով զՆնտոս Լիբիոյ. և վերնոյն Եգիպտոսի առ՝ կարմիր ծովուն. անցանելով զայրեցելով զօտեաւն ՚ի Հարաւակոյս առ ներսագոյն Եթէօպացօքն . ցնոյն սահման Նն տոս Լիբիոյ: Եւ ունի Եթէօպիա փոքր աշխարհս երեք. զԲառբառ նայ՝ և զԱզանիայ՝ և զԱռմօլօդս յերիկէ՝ և զաւառս ազգաց երե սունևվեց: ունի և գետս երեք. և լերինս տասն. ունի և կղզիս յԱրա բացւոց ծոցին քաննևհինգ: և ունի զՄմռնաբեր երկիր. և զԽնկաբեր՝ և զԿինամոմոնաբեր գաւառսն : Ներքին Եթէօպիայ սկսանի յա ընմտական անծանօթ երկրէ՝ յե րիկալով Ովկիանոսի՝ և Ննտոս Լի բիոյ. և ՚ի հարաւոյ սահմանի անծա նօթ երկրաւ. առ որով բնակեալք են երեկորնականքն Եթէօպայե ցիք՝ ՚ի հարաւոյ այրեցելոյ գօտւոյ կող

EAP180-1-1-8_015R.jpg

NOTE

31

TEXT

մանէ . մերկք, վիշապամարտք * րի նց ըստ Հիւսիսոյ առ Ովկիա իւ ձկնակեր Եթէօպացիքն . յո մ կենդանի ինչ Տուբուս ա_ ն՝ ոչխարանման՝ երկակենցաղ կնակեր . առ որով Սթակէնք թէօպացիք . յորում՝ առիւծն ն գազանն . որոյ ըստ Հիւսիսոյ ի Եղջերք Եթէօպացիք . յո մ կենդանի ինչ նման () անալու

մարդամարտոն և անուշահոտ. որով Դերպիկէ, և Դերմու ք .
յորում՝ աղծառասէրք՝ մար մարտք՝ ընձուղտք . որոց ՚ի Հա –ոյ
մինչև ցնեղոս աշխարհ մի թէօպացւոց՝ յորում՝ փիղք սպի կք •
եղջերակնճիթք . և վա րք . յորոց յարևելից լերինն՝ յո մ
վագրածիք, և այծամարդք, նձք գեղեցկախայտուցք: Եւսո ՚ի
Հարաւոյ աշխարհ մի առ ան նօթ երկրաւ . յորում՝ է գազան
կանացի ունելով զգլուխ և ձեռս՝

EAP180-1-1-8_016L.jpg

NOTE

32

TEXT

ձեռս՝ և զանձն չորսոտանի: այլ մարդակերպ ինչ մերկ գազան
շա նակնճիթ՝ և մեծականջ՝ ազնոր. ոպ զառիւծակապիկ. որոց
յելից բարձրազագաթունք Եթէօպա ցիք. և այլք մինչև ցլուսնի
լեառն. յորում՝ լինին քօշք սպիտակք՝ զօ րաւորք և բռնաւորք •
որոց յելից կուսէ Գաբսացիք՝ և իներքոյ սոցա մարդակեր Եթէ
օպացիք. յորում՝ գազան ինչ հրաշունչ վարազա նման. և
Սաղամանդր գազան՝ որ նմանէ կովի դիեցի. անցանէ ընդ հուր՝
և շիջուցանէ զնա :

HEAD

Աշխարհ ընդ հանոսը Ասիացոց :

TEXT

Առաջին բաժին երկրի ընդ հա նուր Ասիա է: և ունի կողմունս. և
նախ զկողմն միջերկրայս՝ որք մտա նեն ընդ մէջ Յունաց ծովուն
և Պոնտոսի: Բիւթանիայ, յելից կալով թա գաւորական քաղաքին
կոստան

NOTE

2 բ դի,

EAP180-1-1-8_016R.jpg

NOTE

33

TEXT

դինուպօլսի . և ունի Րիւթա նիայ՝ լերինս՝ և գետս՝ և լիճս՝ և կըղ զիս . ունի և մայրաքաղաքս մեծա մեծս երեք զՆիկկիայ . զՐաղկե դոն. զՆիկոմիդայ : որք ունին ընդ ինքեանս քաղաքս տասններեք . և զգիւղաքաղաքս ծովեզերայս՝ և վա ճառատեղիս . լինի և ՚ի Րիւթա նիայ Հող սպիտակ՝ զոր մանրաղա ցեալ և ցանեալ ՚ի քանդուկս իվր ցորենոյ, ճճի ոչ ուտէ : Միւսիայ՝ որ կոչի Ելիսպոնտոս. առ երիկալով Րիւթանիոյ . և ունի Միւսիայ՝ լերինս երեք՝ գետս Հինգ.կըղզիս երկու:քաղաքս քառա սունևմեկ: և մայրաքաղաք ծովե զերայ զկիզիկոն՝ յորում՝ տաճարն է 1.յ անուանեալ հրաշից : Ասիա առանձնակի յերի կալով Միւսիոյ առ ծովուն. և ու նի Ասիա փոքր աշխարհս չորս.

NOTE

3 զ զի

EAP180-1-1-8_017L.jpg

NOTE

34

TEXT

զ] եղիայ • զ| ւուդիո • զ ոյնս. զկաթիայ. ունի ( սիա լերինս եօթն՝ կղզիս տասն . գետս եօթն՝ քաղաքս տասնևհինգ. և Մայրաքա ղաք զ| փեսոս՝ և այլ ևս վեց: և լինի յ սիայ Ս՝ազտաքէ ՚ի խժէ ()՝առոց : | իկիայ յելից կալով ( սիոյ : և ու նի | իկիայ լերինս երկու.գետս երեք : կղզիս Հինգ : քաղաքս երիս : և մայրաքաղաք զ] իռնիայ.և լինի | իկիայ խունկ () իւղդին՝ և Տրա տէ • ՚ի ծառոյ ծորելոյ ոպ զխիժ՝ լոյծ ոպ մեղր . կամ ոպ մրուր : Փ ռիւգիայ յելից կալով առանձ նական ( սիոյ՝ յերի | իկիոյ . և ունի յինքեան

Փռիգիա աշխարհս երիս : զՊիսիդիայ՝ որ ունի մայրա քաղաք զ| նտիոքիայ՝ ուր ասեն շի նեաւլ զտապանն՝ ՙլ,ոյի, և այլ քաղաք քսանևվեց: նաև յորոց մայրաքա ղաք

NOTE

զե–զս– եայ

EAP180-1-1-8_017R.jpg

NOTE

35

TEXT

ղաք Լ աւոդիկայ՝ և այլք քաղաքք քառասուն՝ և աշխարհք երեք: Մաղուսալիայ. որոյ Մայրաքա ղաք Սիդօնիա. և այլ քաղաքք երեսունք. և ունի լեառն զԴի դիոն . և գետս հինգ . և լիճս տասն և չորս. և դաշտս մեծամեծս: Ոնորիա՝ յելից կալով Բիւթա նիոյ. և առ երի Փռիւգիոյ. մինչև ցՊոնտոսի ծովն. և ունի Ոնորայ մայրաքաղաքս զԿլօդիու պօլիս. ընդ որով այլ քաղաքք հինգ : և գետ ունի զՊարթենիոս զերեք վտակեան. յայսմ աղբեր երդ նուին դևք վն անչափ ցրտութեն: Փեղղագոնիայ. յելից կալով Ոնո րիոյ աշխարհին. որ է 'ի ծո վուն Պոնտոսի. ունի գետս երկու. և մայրաքաղաք զԳերմանու պօ լիս, որոյ բերդն Գանգր և քաղաքս հինգ.

NOTE

զ 2

EAP180-1-1-8_018L.jpg

NOTE

36

TEXT

հինգ. և բերդս տասնեմի . զաւ առս վաթսունևեմէկ : Գաղատիայ առաջինն յելից կա լով Փռիւգիոյ.և առ երի Պամ փիղագոնիոյ . և լեառն ունի զերկ րորդ Ուիդիմոն.և գետ O իոոն. որ

յառաջաասացեալ աշխարհս թափի : Գաղատիայ երկրորդ յելից կա լով Փռիւգիոյ . և առ երի ա ռաջնոյ Գաղատիոյ.մինչև 'ի Պամ փիլիայ : ունի լերինս՝ և գետս մա նունս.որք յառաջասացեալ գետն անկանին . և որք զլիճս առնեն : Պամփիլիայ յելից կալով Լիկիոյ. և առ երի Գաղմատիոյ . ունի յինքեան աշխարհս փոքունս հինգ. և լեառն մէկ, գետս երեք. և կղզիս երկու . և քաղաքս : լինի 'ի սմա խունկ Տիւռակիթոյ՝ 'ի փորոյ կե ռածոյ ճիճոյ : Սօրիայ

EAP180-1-1-8_018R.jpg

NOTE

37

TEXT

Իսրիայ յելից կալով Պամփիլիոյ. առ երի ծովուն Հանդէպ կիպ րոս կղզւոյ. և ունի լեառն զՏօրոս. և գետս զՍիմադոս. և է 'ինմա մայ րաքաղաք Սելևկիա. և այլք քա ղաքք քսանևչորս . և լինի յաշխար Հիս յայսմիկ խունկ դիւրակոճոպտ և պուգոմփիտ. կաղամբի . ամենե քեան 'ի ծառոյ ծորելոյ 'ի ճճոյ որոյ կերուածոյ : Լիկոնիա յելից կալով Գաղատիոյ և առերի Սօրիոյ ունելով զտա ռածումն իւր 'ի դաշտս ընդար ձակս . և զնոյն գետ. և լերինս փո քունս . և լիճս երեք : Կապադօկիայ երկրորդ յելից կա լով Գաղատիոյ՝ և առ երի Լիկո նիոյ . ունելով լերինս մանունս . և գետս . և լայնութի տարածեալ'ի դաշտս արձակս : Հենոպոնտոս յելից կալով Պամ փիլագոնիոյ. և առ երի կապա դոկիոյ

NOTE

գ 3

EAP180-1-1-8_019L.jpg

NOTE

38

TEXT

դոկիոյ և ծովու . ունի լերինս փո քունս բազումս. և գետս հզօրս . և ’Նիւռիս. և այլ մանունս : Կապադօկիայ առաջին յելից կա լով երկրորդ կապադօկիոյ . և առերի Պօլիմոնական Պոնտոսին : ունի լեառն զԱնտիտօրոս՝ և այլս փոքունս. և գետս զՄեղոս և զԱլիս: Պոնտոս Պելիսոնական յելից կա լով Ենոպոնտոսի՝ առ երի Պոն տոսի ծովու. ունի լերինս փոքունս և դժուարավայրս. և գետ զԹու մոնոս . և այլ մանունս : Կիլիկէ ըստ ինքեան առաջին և երկրորդ՝ յելից կալով Լիկոնիոյ և Սօրիոյ՝ յերի կապադօկիոյ առաջ նոյ. լեառն ունի զՏօրոս . և գետս վեց.և մայրաքաղաքս երկու. զՏար սոն.և զԱնարզաբայ՝ և այլ քաղաքս բազումս . և բերդս երեքհարիւր վաթսուննհինգ. և դրունս երկու՝ ելս

EAP180-1-1-8_019R.jpg

NOTE

39

TEXT

ելանելոյ ասորւոց. և կիլիկէ ամենա բեր. Հանգոյն երկրին յորդանանու: կիպրոս կղզի յելից կալով Պամ փիւլական Պեղագոսին առ երի Սօրիոյ և կիլիկիոյ. և ունի կիպ րոս լեառն զՈլեմպօս, և գետս երեք . լինի ’ի նմա աղանդանոյն ’ի ցօղոյ անկեալ զխոտով կռուի. թափիչ վարոցս՝ և մօրուս քօշից. և ունի կիպրոս զսահմանս իւր յերկայն մասունս երեքհարիւր երեսուն մղոն. իսկ ’ի լայնն մասն մի: Հայք յելից կալով Լիկիոյ առ Տորոս լերամբ. և ունի լերինս երիս. գետս չորս. և դրունս երկուս ելանելոյ Ասորւոց : Առաջին Հայք յելից կալով ա_ ռաջնոյ կապադօկիոյ՝ առ երի երրորդ Հայոց. և սահմանի յելից Եփրատայ՝ և լեառն ունի զԱր գէոս՝ և գետ զԱլիս. և այլ մանունս:

NOTE

գ 4 Երկ

EAP180-1-1-8_020L.jpg

NOTE

40

TEXT

Երկրորդ Հայք են. որք կան յելից կապադօկիոյ . և երկայն տա րածի մինչև ցեփրատ. և ունի այլ գետս երկու. և լերինս բա զումս մեծամեծս քաններկու :

NOTE

կապա տակաց

TEXT

Պօնտոս կապոդոկիոյ. յելից կա լով Պօղոմենական Պոնտոսին՝ առ երի ծովուն՚ի ցամաքական լե րինսն. որք բաժանեն ընդ նա, և ընդ Մեծ Հայս: ունի լերինս երիս. և գետս չորս :

HEAD

Ահա կատարեցան միջերկրայքս կոչեցեալք :

TEXT

Սարմատացւոց աշխարհին Հասս րակն է . որ բաժանեալ է արևե լեան ծայրիւն,և Յուպիաւ լերամբ. և Տօնիս գետով.և Միօտիս ծովա կաւ . և անտի ընդ կովկասային լե րինսն առ 1 րոք և ղուանիւք, մինչև ցկասբից ծովն . և ունի Սար մատիայ լերինս զԾ աթարինն.և ըզ Ձիա

EAP180-1-1-8_020R.jpg

NOTE

41

TEXT

Ձիակնն. և զայլ լերինս, և գետս բա զումս. զեօթանասնավտակն | Թիլ. յորում ամրանայ ազգն Բարսղաց : Եւ բնակին ՚ի Սարմատիայ ազգք բազումք. որք են այսոքիկ : Խազիրք. Բուլիք. Բարսեղք. Ափշեղք. Ափ խազք թագաւորական . Սարմատք. Ձիակերք . Նախճամատեանք. Ոջ լակերք. Սիւռիկացիք.

Սիւթուիգա ցիք . Ամազունք . Աղուանք . Խե բուրք. Քուգետք.
Սկիւմիք. Ար գաւետք . Մարգոյք . Թակուիք. Արգոզք. Դաճանք.
Փինչք. Դու ալք. Հոնք. Ոսփուրք. Ծանարք . յորում Աղուան դուռն.
և Ծաբն դուռն . Թուշք. Խուշք. Քուս տըք. Մարդակերք .
Ցիւաւատք . Գուդամակարք . Դուիճակք . Դիգայք . Պ էք .
կատապաստա կանք . Աղուտականք . Խենօթք . Շ իդայք .
Ճիւղայք . Խեղայք . կազբք . Փուխք . Շ րուանք . Խա րանք .
Թաւասպարոյք . Հէճմա տակք.

NOTE

գ 5

EAP180-1-1-8_021L.jpg

HEAD

42

TEXT

տակք· Խժմակք· Փասխք· Խուխս· Փիքոնսք· Րայքանք·
Մազքութք· մինչև ցկասբից ծովն· յորս և բա զուկն կովկասու
հպի· ուր աճեալ է պարիսպն Դարբանդայ· աշտա րակ ահագին
’ի ծովուն կացեալ· իսկ ’ի հիւսիսոյ նր’ հոնք· և քա ղաք նոցա վ
առաշան՝ և այլք ընդ նմա· և թագաւորն հիւսիսոյ է Խականն· որ է
խազրաց տէր· և դշխոյն թագուհի է խաթունն· որ է կինն
խականայ ’ի Բարսղաց ազ գէն: Կողքիսէ այսինքն է էգեր· յելից
կալով Պոնտոս ծովու՝ առ երի Սարմատիոյ· և ունի էգեր փոքր
աշխարհս չորս· զՄառնէղիտ· զԳ ուիլիկէ· զԽազիւ· զՃանիւ· որք
են Խաւտիք: ունի լերինս բա զումս· և գետս· և գաւառս· և քա
ղաքս՝ և բերդս· և այլ գիւղաքա ղաքս՝ և այլ վաճառատեղիս:

NOTE

Ս ե

EAP180-1-1-8_021R.jpg

HEAD

43

TEXT

| եռիայ այսինքն է || իրք յելից սկալով |ւգերայ. առ երի ||ար մատիոյ՝ առ կովկասու. մինչև ցա ղուանից սահման առ կուր գետով . ւ գաւառք են ՚ի || իրս այսոքիկ . ղարջք • ՚ | րտահան. Շ ուշէթ. Ջ աւախ • Սամցխէ • ճարա • ուրգա • || աթխիս • Տառնէ սիս • Մանկղեաց փոր • Քուէշ հօր • Փողնափոր • Թրեղք • կան -արք • Տաշիր. Խաչաւ. և Գուան. ստիմիս. Քօղիթ • կրիզիս • կոսխ. կածխումէթ • կռուէթ • Եր ծայ • Խերկ • Թիանէթ • կանիսխ. Յինասձմայ • Րաղալէթ • Ծա խան • Քեթ • Ձելթ • || ելիցխէ • Քուշէդա • Շ ալք • Պարուար. )օրբափոր. Ձորափոր• Սանցիխ. և Քաղաք || րաց Տփխիս. Շ ամ շողդէ • Մխիթայ • ուր սբ խաչն է . ունի և բերդս՝ և գետս՝ և ծովս լի ձկամբք :

NOTE

Ա2

EAP180-1-1-8_022L.jpg

NOTE

44

TEXT

Աղբանիայ. այսինքն Աղուանք յե լից կալով Վրաց. առ երի Սար մատիոյ՝ առ Կովկասաւ մինչև ցԿաս բից ծով՝ և ցՀայոց սահման առ Կուր գետով: և ունի աղուանք դաշտս արգաւանդս . և գետս բա զումս, և եղէգունս հզօրս. և քա ղաքս՝ և բերդս. և գաւառք են այսոքիկ. Նիբուխ. Քանբիճան. Հողմազ. Շաքէդ՝ Լաւու. Շա քէ ոստան. Համբասի. Մարծպա նան. Քաղաղաշտ. Խբաղական. և այլք գաւառք. զորս ՚ի Հայոց Հանեալ են. Շիկաշէն. Գարգա ման. Կողթ. Քուստի. Փառնէզ. Կաղթազուռէ. Օ աւէ. Թուկքա տակ. Ուտուոստակ. Ռոտպայիրակ. Մեծ Կափանք. Մեծիրանք. Պար ծկանք. Մոխանք. Պիանք. Հարջ լանք. Սակունիք. Փոքր

Համանդ. Ռստիսականն. Ռոտտաստառուի. Բերձորս. Ստաստուռս. մինչև ց խառնումն Երասխայ ՚ի Կուր գետ: Մեծ

EAP180-1-1-8_022R.jpg

NOTE

45

TEXT

Մեծ Հայք յելից կալով կապու տակիոյ և փոքու Հայոց՝ առ Եփրատ գետով. մերձ 'ի Տօրոս լեառն, որ բաժանէ զնա 'ի միջագե տաց. և 'ի Հարաւոյ սահմանի առ Ասորեստանիւ. և դառնայ առ Ատրպատականաւ ըն Մարս մինչև 'ի մուտս Երասխայ 'ի կասբից ծով: Իսկ ըստ Հիւսիսոյ առ երի կալով Աղուանից և Վ րաց. և Եգերայ՝ մինչև ցնոյն դարձուածն Եփրա տայ 'ի Հարաւ կոյս: և ունի Հայք լերինս անուանիս, և գետս մե ծամեծս և մանունս, և ծովակս երեք. Եւ ունի Մեծ Հայք փոքր աշխարհս տասնևվեց. որք են այ սոքիկ: Առաջին Բարձր Հայք. այսինքն Կարնոյ կողմն: Չորրորդ Հայք: Աղձնիք. Տուրուբերան. Մոկք. Կորճայք. Պարսկահայք. Վ ասպու րականք. Սիւնիք. Արցախ. Փայ

NOTE

տա

EAP180-1-1-8_023L.jpg

HEAD

46

TEXT

տակարան Ուտիաց· Գուգարք· Տայք· Արարատ: Արդ կամիմ զսոսա մասնամասնաբար պատ մել· թէ է սակաւ ինչ աշխատիցեմ ՚ի գիր և ՚ի քարտէս: Արդ ունի բարձր հայք դաւառս ինն՝ Դարանաղի· Աղիւծ· Մնձուր· Եկեղեաց· Մանանա ղի, Դերջան· Սպեր· Շատգոմք· կարին· և ըստ անուանդ արդարև

բարձր է հայք քան զամ երկիր· քանզի ընդ չորս կողմունս արձա կէ գետս· ունի և լերինս երեք· և էրէս բազումս· և հաւս պիտա նիս, և ջերմուկս, և աղս, և զայլ պարարտութիս՝ և քաղաք զկարնոյ· որ է Թէոդուպօլիս: Չորրորդ հայք յերի կայ բարձր հայոց· և գաւառք են ՚ի նմա ութն: Խորձէն· Հաշտիանք· Բաղ նատուն· Բալահովիտք· Ծոփք· Շաղախ· Հանձիթ· Գորէք· Դէ գիկ:

EAP180-1-1-8_023R.jpg

NOTE

47

TEXT

դիկ: և ունի չորրորդ Հայք բերդս. և գետս, և լերինս.և բիւրեղս: ունի և երէս՝ և Հաւս՝ և ձկունս. և ՚ի գազանաց զԱռիւծ : Աղձնիք առ Տիգրիս գետով կայ. գաւառս ունի տասն . զԱրզն . զՆփրկերտ. զԲեղ. զկեթէկ. զՏատիկ . զԱղնուաց ձոր. զԽէր Հէթս.զԴզէխ. զՍալնոյ ձոր. զՍա սուն: ունի զնաւթ և զերկաթ. ա ռաւել ևս զխթոր.և Հաւ զդեզակ : Տուրուբերան յերի կայ չորրորդ Հայոց, և գաւառք են ՚ի նմա տասնևվեց: Խոյթ. Ասպակունիք. Տարօն . Աշմունիք. Մարդաղի . Դասնաւորք. Տուարածատափ . Դալառ: Հարք.Վարաժնունիք. Բզնունիք . Երևարք. Աղիովիտ. Ապահունիք:Տկորի.Խորխորունիք: ունի և ծով զԲզնունեաց . յերկայն Հարիւր մղոն. և ՚ի լայնն վաթսուն: ունի

EAP180-1-1-8_024L.jpg

NOTE

48

TEXT

ունի և զզաղպէ . և զմեղր . և զմաշկամիրզ : և զսպիտակ նաւթ. և զերկաթ : Մոկք յելից կալով Աղձնեաց՝ ունի ամուրս Տօրոս լերինն . գաւառս ունի ինն. զԻշայր. զՄիւս զիշայր. և զԻշոց գաւառ. զԱռու ենից ձոր . զՄիջա . զԱռանձնակ մոկս. զԱրքայից

գաւառ. զԱր գաստովիտ . զՋերմաձոր : ունի և մրգաց զՇրշակ. և զմանրագոր . և ՚ի գազանաց զԻնձ գեղեցկախայ տուց . և ՚ի Հաւուց զկաքաւ : Կորճայք յելից կայ Մոկաց առ Ասորեստանիւ : և Գաւառս ունի տասնևմէկ. զկորդուս . զկո գրիս. զԱտրունանս. զՄոդողանս. զՊսիրանս . զկարթունիս . զՃա Հակ . զՓոքրաղբակ . և ունի զԱռիկ . և ՚ի պտղաց Շագա նակ :

NOTE

գահրա շակ 3 4 Պարս

EAP180-1-1-8_024R.jpg

HEAD

49

TEXT

Պարսկհայք յելից կայ կորճէից. և առ Ատրպատականաւ: Գաւ առս ունի ինն. Րայլի. որ է կոճի ճան. Մարի՝ Թրակի. Ացուերս. Րոնա. Տանբեր. Ջարեհուան. Ծարուանդ. Հէր. և ունի էրէ զձիռ. և զԱյծեամն: Վասպուրական է ՚ի մտից Պարս կահայոց և առ երի կորճէից. Գաւառք են նր երեսունևնեօթն. և են այսոքիկ. Ռշտունիք. Տոսբ. Բուդունիք. ՚՚ ըրճիշակովիտ. Աղաւիս. Բառիզակովիտ. կա ղանովիտ. Գառնի. Բալախովիտ. առ Բերանի. Բաժունիք. Առ նոյոտն. Անձեւացիք. ՚ ՚ ըտրպատու նիք. Երուանդունիք. Մարդաս տան. Արտազակէ. Աղբակմեծ. Անձախաձոր. Թառնաւան. Ճուա շռոտ. կրճունիք. Մեծնունիք. Պալունիք. Գուկան. Աղուանդ ռոտ. Պարսպարունիք. Արտաշի

NOTE

4 Դ սան.

EAP180-1-1-8_025L.jpg

HEAD

50

TEXT

տան· Արտաւանեան· Ռաքան· Գաբիթեան· Պաղբեգէն· Տանկ րիայն· ||արաժնունիք· Գողթն գիննեւէտ· Նախջուան· յորում քա ղաքն է և Մարանդ: Սիւնիք յելից կայ Արարատոյ ընդ մէջ Երասխայ և Արցախայ· և ունի գաւառս երկոտասան· Երնջակ· Ջահուկ· ||այոցձոր· Գեղարքունի· և ծովն Սոդք· Աղահէճք· Ծղուկք· Ռբանդ· Բաղքձորք· Արեւիք· Սիսական· լինի ՚ի նմա մուրտ· և գեբերի· և նուռն, և ամուր տեղիք: Արցախ յերի կայ Սիւնեաց· և գաւառք են նր̄ տասններկու· զոր աղուանք ունին: միւս Հա բանդ· ||ակունիք· Բերդաձոր· մեծ Իրանք· մեծ կողանք· Հարճ լանք· Սուխանք· Պիանք· Պայծ կանք· Սիսական· Քուստակ· Փաս

NOTE

տիմ·

EAP180-1-1-8_025R.jpg

HEAD

51

TEXT

տիմ. Փառնէս. Եոխթ . յորում լինի քարախունկ: Փայտակարան յելից կայ Ուտիոյ առ Երասխաւ: գաւառս ունի. տասններկու: զոր այժմ Ատրպա տականք ունին : Հրաքոտ: Պերոժ: Վարդանակերտ : Եօթնփորա կեան բագինք : ունի Ռոտիբաղայ: Բաղանռոտ : Առոս : Խիժան հան հանի : Աթլի: Բազաւան : Սպան դարանպերոժ : Որմզդպերոժ : Ալևան . լինի ՚ի նմա Բամբակ ան քաւ և Գարի ինքնաբոյս : Ուտի առ մտի կայ Երասխայ՚ ընդ մէջ Արցախայ և կուր գետոյ : ունի գաւառս՚ զոր Աղուանք ու նին եօթն: Աթանռոտ : Տռի : Տոպացեան: Աղուէ: Տուչքատակ Գարդման : Շիկաշէն : Ուտի առանձնական . յորում Պարտաւ քաղաք . լինի ՚ի նմա Ջիթենի, Վարնկենի . և ՚ի հաւուց Կատակ : Դու

NOTE

դ 2

EAP180-1-1-8_026L.jpg

HEAD

52

TEXT

Գուգարք՚ի մտից կայ Ուտիոյ : և ունի գաւառս ինն՝ զոր Վիրք ունին : Ձորոց փոր : Ծոբոփոր : Կողբոփոր: Տաշիր : Թռեղք: Կան զարք : Արտահանք : Ջաւաղք : Կղարջք : լինի ՚ի նմա Անալութ : և Հաճարածառ . և Սերգևիլ՝ և Տօ սախ : Տայք առ երի կայ Գուգարայ՝ ամրոցօք և բերդօք կառուցեալ. և ունի գաւառս ինն . զԿողբ : ըզ Բերդաց փոր : և զպարտիզաց փոր : զՃակատս : զԲուխայ : զՈքաղէ : զԱզորդ : զԿափոր : և լինի ՚ի տայս. Թուզ՝ և Նուռն : Աղտոր : Սեր կևիլ . Պտղախակ և Նուշ: Արարատ ՚ի մէջ կայ յառաջասա ցեալ աշխարհացդ. և գաւառք են ՚ի նմա քսան : Բասէնք : Գաբե ղեանք : Աբեղեանք : Վահազու նիք : Արշարունիք : Բագրևանդ : Ծաղ

EAP180-1-1-8_026R.jpg

NOTE

Արարատ լեռներ 53

TEXT

Ծաղկոտն: Շիրակ: Վանանդ: Արագածոտն: Ճակատք: Մա սեացոտն: Կոգովիտ: Աշոցք: Նիգ: Կոտայք: Մազազ: Վարժնունիք: Ոստանն դվնայ՝ մինչև ցդաշտն Շարուր: Եւ ունի Արարատ լե րինս և դաշտս՝ և զամ պարարտու թի: և ծովակն Գայլոտոյ: և որդն սիզաբերեալ յարմատոյ առի զարդ կարմրութե գունոյ: և զմայր եկեղեցեացն, ՚ի թագաւորաբնակ՝ և յարքայանիստ Վաղարշապատ քաղաքի:

HEAD

Ահա կատարեցան ամ Հայք:

TEXT

Ասորիք յելից կալով իւրեանց ծովուն՝ և հիսիսոյ հրէաստա նի: և ունին Ասորիք փոքր աշխարհս ութն. և լերինս անուանիս զԼի բանան. և զկարմեղոս. և գետ հզօր զՅորդանան. և քաղաքս բազումս. և Մայրաքաղաք զԱնտիոք. և ըզ Դամասկոս. զԵնշրիմ. զՍամարիայ.

NOTE

դ 3 և

EAP180-1-1-8_027L.jpg

NOTE

54

TEXT

և դրունս երկու. և վայրս ընդար ձակս՝ և պիտանիս՝ և բարիս : Հրէաստան յելից կալով Փւնի կական Պեղագոսին և սահմանի Եգիպտոսիւ . և ապառաժ րա բիաւ.և ունի Հրէաստան աշխարհս երեք . զԳալիլեայ . զՍամարիայ . զիդօմայ.և | իճս երկու. զՏիբե րադա և զՄեռեալ ծովն . և գետ զՅորդանան . և մայրաքաղաք ըզ սբն Եէմ. և է Հրէաստան քաղց րաբեր և պտղալից . և է անուշա Հոտ. որ բղխէ զկաթն և զմեղը : Ապառաժն րաբիայ յելից կա լով Եգիպտոսի . և արևմտեան ճղիւ կարմիր ծովուն. ընդ որ անցն է Ելի . յերի կալով սորւոց և Հրէաստանի . և ունի րաբիայ պառաժ փոքր աշխարհս Հինգ . զՏաճկաստան . և զՓառնիաիս ուր զտուն բրահամու բաշա դէն .

EAP180-1-1-8_027R.jpg

NOTE

55

TEXT

ջեն. և այլևս երեք աշխարհս. և գետս ոչ մի: Միջագէտ յելից կալով Ասորւոց առ Եփրատ գետով. և մտից Ասորեստանի.առ Դղաղ գետովն. յերի կալով մեծ Հայոց. ունի լե րինս երկու . և գետս երկու . և քա ղաքս բազումս. յորոց մինն է Յուռ Հայ. ուր անձեռագործ պատկեր փրկչին: Բաբիլօն յերի կալով Միջագե տաց առ կղօղաւ.մինչև ցՊարս կային ծոցն. և ունի աշխարհս չորս. զԽոզա. զՊասրա. և զԲաբիլօն. զՏիաբոն. և գետս ունի զեփրա տայ վտակսն. և զԴկղաթայ. ունի և այլ քաղաքս բազումս՝ և գաւ առս. և լինի 'ի սահմանս այսոսիկ ակն Սարդիոն և Ոսկէքար. և է Բասրա ամենալից վաճառօք, և եկք նաւուց 'ի Հնդկաց և յամ կողմանց յարևելից:

NOTE

դ 4 Անա

EAP180-1-1-8_028L.jpg

NOTE

56

TEXT

Անապատն Արաբիա յերի կա լով միջագետաց ընդ հիւսիսոյ. յելից կալով Ապառաժ Արաբիոյ և ՚ի մտից Խուժաստանի: և ունի Արաբիա ազգս ինն . բայց լեառն, գետ և ոչ մի: Երջանիկն Արաբիա. յերի կա լով Ապառաժ և Անապատն Արաբիոյ. մտանէ ընդ մէջ խոր շից Կարմիր ծովուն որպէս ցամաք կղզի. և ունի յինքեան ազգ մի. և գաւառս տասննչորս . լերինս տասն . գետս չորս . աղբիւրս մի. և կղզիս բազումս. և աշխարհ ամենա բեր և ամենազիւտ. և է որ յիւրմէ աշխարհէն է. և է որ ՚ի վաճառոց ե կելոց.՚ի Ճենաց և՚ի Հնդկաց.գտանի անդ ոսկի և ակունք պատուականք. խունկք բազումք. և իւղք անու շունք. փայտք անփուտք. և անտի էր Տիկինն Սաբայ. և բնակիչք աշխարհին ոմանք քաջասէք, և ո մանք

EAP180-1-1-8_028R.jpg

HEAD

57

TEXT

մանք սպիտակասևք. թխագոյնք քան զմեզ. և իւղք անոյշք ՚ի նմա և ծաղիկք տասնևվեց. ղՀալի. Ջ ափու. Մաղապ. Խտխակ. Բե դի. Ախունա. Խտլար. Բուխ տակ. Նարդոս. Բալասան. Բան. Յասմիկ. Նարդան. Վ արդ. Մա նուշակ. Մարզգուշ: Մարք որք կոչին Քուօտիքապ կոխք՝ յերի կալով Հայոց. և առ երի կազբից ծովուն: ունի աշ խարհս զայսոսիկ . զԱտրպատա կան. զ Ռէ. զԳիլան. զՄուկան. զԴիլումս. զՄհմատան. զԴամբ վար. զՍպարաստան. զՄմլ. ըզ Քօշօշ. զՌուճան. ունի և լերինս և գետս. և զծովակն որ կոչի Քա պոտան. ունի և քաղաքս բազումս. յորոց մինն զանձակ շահաստան: Արուճաստան՝ որք կոչին Ասորես տան. այսինքն Մուծղ. յելից

NOTE

Դ 5 կալով

EAP180-1-1-8_029L.jpg

NOTE

58

TEXT

կալով Միջագետաց՝ առ երի Հայոց: ունի լերինս և գետս. և քաղաք զՆինուէ : Ելիմացիք են . որք կոչին Քուս տիխորաստան . յելից կալով Դկլադայ. և ՚ի մտից Պարսից. և ունին Ելիմացիք աշխարհս փո քունս զայսոսիկ . զԽուժաստան . զՄած. զՄասպան. զՄիհրան. զՔրտակ. զՔաշտար. զԳարմա կան. զ| ռամաստան. զկարկաւատ. զ| ոտարտ . զՇ իրական . զՄար ձին. զՈրհէն. ունի և քաղաքս Հինգս. և գետս չորս . յորոց մինն է Գունդի շապուհ. յորում ազնիւ Շ աքարն գործեն . ունի և կղզիս

երկու Հանդէպ իւր 'ի Պարսկային ծոցին ։ Պարսք՝ որք կոչին Քուռտինեմ ռոզ. յելից կալով Խուժաստա նի.և առ երի Սարաց.ունի յինքեան փոքր

EAP180-1-1-8_029R.jpg

NOTE

59

TEXT

փոքր աշխարհս քսան. զՊարս. զԱսպահան. զՄէշուն. զՀակար. զՊանայիտ. զԵրման. զԵուրան. զՄակուրան. զՍնդ. զՀնդ. ըզ Մրան. զՊէտ վաշտ. զՍազաս տան. զԱպլաստան. զԴեր. զՄեղ. զՄոհիկ. զՄաուն. զԽոճէհրաս տան. զՊալէ. զԵբուհայ. ունի և զետս և քաղաքս բազումս. յորոց մինն է Ռեշիր պարհսան քաղաք. յորում ազնիւ Մարգարիտն ելա նէ. և Գօհարք մարգարտին՝ այս է. դրակ վեցդանգեան. արժէ քառասուն հազար Ղումիայ. հինգ հարիւր. միչայիս երեք դանկա. չորս Պարմուշքա. Պարմուշիտ. Հաւթադրամ. Հաշտադրամ. Դահադրամ: Արիք. որք կոչին Քուստի Խորա սան. յերիկալով Մարաց. և Պար սից, մինչև ցՀնդիկս. և յերի Վրկա նի ծովուն. և աշխարհք են Արաց

NOTE

այսօ

EAP180-1-1-8_030L.jpg

NOTE

60

TEXT

այսոքիկ. կոմշ. Ս րկան. ապշահր. Սրում. Արուտատ. Հրեկատե շան. Նստիմանակ. Բժնիւ. Սաղ կան. Դովկան. Անազլէ. Հրում. զՄմեիւրոս. Նախճեր. Դզին. Աւազակ. Ս արջան. Սանտան. Ֆ ակստան. Բահղ. որք են Պար թևք. Դովմատ. Կ արիմանակ. Շ ի

րի. Բարիկան. Դովքոն: և ունի արիք. լերինս և գետս և կղզիս բա
զումս. լինի հրամուշկ. թէպէտ և ոչ ազնիւ. և կղզի մի է հանդէպ
Արեաց 'ի Հնդկաց ծովուն. յո րում Թզուկք, լինին երեք թզեան
հասակաւ. որք և պատերազմին ընդ խորթոց հաւուց վն ճարակե
լոյ նոցա զանդաստանս Թզկաց: Սկիւթիա՝ որք են Ապախտարք.
այսինքն Թուրք. որք սկսանին էթիլ գետոյ մինչև ցԻմաւօն լեառն.
և անդր ձգի մինչև ցՃենս: և Իմաւօն է լեառն բարձր և եր կայն

EAP180-1-1-8_030R.jpg

NOTE

61

TEXT

կայն քան զամ լերինս . և ունի Սկի թիա ազգս քառասունևչորս:
Սօ գիք • Թուխարիք • Հեպթաղք • և այլք խուժադուժք անուանք:
և ունի Սկիթիա լերինս . և գետս բա զումս և հզօրս. և դաշտս
անա պատս . և ջերմ երկիր և անջուր. և է 'ի նմա հրագոյն դաշտ.
և են Սօ գիք հարուստք և արուեստաւորք. վաճառականք, որք
բնակեալք են իմէջ Թուրքաստանի և Արեաց աշխարհին :
Հնդկաստան յելից կալով Արեաց աշխարհին . և առ երի Սկիւթա
ցւոցն . և է Հնդիկք բաժանեալ յերկուս աշխարհս . զորս բաժանէ
Գանգէս գետ. որ է Փիսօն. և արևմտեան կողմն ունի ազգս յի
սունևհինգ. իսկ արևելեանն եօթա նասունևերկու. ոմանք
Մարդա կերք են . և ոմանք Ս այրենակերք. ոմանք Ագևորք, և
այլք կորճահա սակք,

EAP180-1-1-8_031L.jpg

NOTE

62

TEXT

սակք, Տափակաքիթք. լայներեսք. Սպիտակք : և ոմանք Մերկք
իմաստակք • որք գործս անիրաւու թե ոչ գործեն. և զմարմինս

կեն դանեաց ոչ ուտեն. ունին Հըն դիկք լերինս, և գետս, և կղզիս բազումս. լինի ՚ի Հնդիկս երէ Յամորանման սրեղջեր. որ սպանա նէ զԱռիւծ. և Հրէշ էջէ. և այլ գազան նման Առիւծու՝ բայց կըն ճիթն նուրբ է և երկայն. և Րնձ ուղտք՝ և կորեանք . և կապիկք . և Աքաղաղք փետրամօրուք. և Փիղք. և 1 ագրք. և 1 իշագք. մեծ Արջմունք. և Մրջմնառիւծք. և Մկունք. Րէշկ մշկոյ. և կո կորդիլ գազան. և Միեղջերու . որ է մեծ քան զամ գազանս. և իվերայ ողինն ճանը. և զՓիլն լե զուովն Սպանանէ . և Պասկուճ Հաւ. և Սնուշկերէ . և 1 շեղջե րաւոր : լինի անդ Ոսկի. Արծաթ. Պղինձ. Անագ • Մարգարիտ. և ակն

EAP180-1-1-8_031R.jpg

NOTE

63

TEXT

ակն ամենագօհար. լինի և պըղ պիղ. և մնդրուէղ. և ամ Րովա ճառք: Հալուէս. Փաղանգամուշկ. Քաֆուր. Ջ անդան. Նայիբու ակ. Հրբուակ. Պապերբուակ. Գոյիբուակ. կասիմոն. Գովա դակ. Շ ահաւոր. Մարգարիշար. և բազումք դեղք բժշկականք. և գուհարք հալուէից չորս, ինգրէ : Սանդր. Ըտարագ. Ժեւաւոր. Ծակոտկէն. լիտրն արժէ եօթն դահեկան. Ծամփիմարխայ. նման է Ծանր. լիտրն արժէ չորս դա հեկան: Քողակ. շէկ է և թե թև. և արժէ լիտրն չորս դահե կան: Տ պառոբանիս է մեծ կղզի քան զամ կղզի. հազարևհարիւր մղոն երկայն է. հինգհրիւրևտասն ՚ի լայնն, յելից կալով. և ունի այլ կղզիս շուրջ զիւրեաւ մանունս. հազար երեքհարիւր եօթանասուն ներ

EAP180-1-1-8_032L.jpg

NOTE

64

TEXT

և երկու. ունի և լերինս՝ և գետս՝ և ազգս տասներկու . լինի ՚ի նմա Ոսկի և րծաթ և կունք պատու ականք, և Րովինճայք.Փիղք և 1 ա գերք. և արք աշխարհին վարսիւք կնոջ պսակեն զգլուխս իւրեանց • աստ ասեն զանկումն սատանայի : Ճենաստան յելից կոլով սկիւ թիոյ մինչև յանծանօթ երկիր • և է Ճենաստան ընդարձակ դաշտ տարածեալ և են՚ի նմա ազգք քսան և ինն . յորոց մինն մարդակերք: Եւ ունի Ճենք լերինս՝ և գետս բազումս. լինի ՚ի ճենաց աշխար Հեն Դարիճենիկ. և Հոշտբոսկ. և բուի ճենիկ. և կասիմոն. և սրիկոն. ունի և հրէշ՝ և մուշկ. և սիրամարգ շատ • քրքում՝ անբաւ. ապրիշում՝ շատ և ազնիւ . վե որոյ և բնակիչքն արուեստաւորք՝ կերպասագործք. Հարուստք՝ ընչեղք. որոց արքայն կոչի Ճենբակուր • որ նստի ՚ի քա

NOTE

4 դ դաքին

EAP180-1-1-8_032R.jpg

NOTE

65

TEXT

քին սիւռիայ առ անծանօթ եր կաւ : էնեացւոցն առ երի կտլով Ճե նաց մինչև ցանծանօթ երկիր. րում բնակեալք են ազգք եօթն. նի լերինս՝ և գետս բազումս. այց անտի յանծանօթ երկիրն՝ որ պատմի անհաւատալի է: զա նք անծանօթք մարդակերպք՝ սանձնեայք. երդկիմիք՝ վեց ունիք՝ փոկոտունք՝ վիշապա տունք՝ կիսահաւք՝ կիսանգամք՝ գլուխք:

HEAD

Հակադարձցան ամ տիեզերք՝ նա պատ մո-նիք խօսից :

TEXT

Հա կամիմ զչափ աշխարհիս Համառօտել մղոնախաղաց ոտ չափութբ ուղղեկաբար. աս սրիզաճեմ դրութբ: դուճնայ մղոն երկուհարիւր'ի կարնոյ քաղաք:

NOTE

5 ե Անտի

EAP180-1-1-8_033L.jpg

NOTE

66

TEXT

Անտի մղոն Հարիւրեքսան 'ի փոս աշխարհն Հայոց և Յունաց: Անտի մղոն իննսուն 'ի Կողր նիոյ բերդն : Անտի մղոն Հարիւր 'ի Նիկի սար : Անտի մղոն ութսուն յԱմա սիայ : Անտի մղոն Հարիւրներեսուն 'ի Գանգրայ : Անտի մղոն ութսուն յԱնկիւ րիայ : Անտի մղոն երեքհարիւր քսան 'ի Կոստանդինուպօլիս : Անտի մղոն վեց հազար'ի Հռօմ: 'ի Դոճնայ մղոն Հարիւրնեօթանա սուն 'ի Խլաթ : Անտի մղոն ութսուն 'ի Քղի մար : Անտի մղոն Հարիւրնութսուն 'ի յՈւռհայ : Անտի մղոն քառասուն յեփ րատ գետ : Անտի

EAP180-1-1-8_033R.jpg

NOTE

67

TEXT

Անտի մղոն Հարիւրեյիսուն յԱմասիայ: Անտի մղոն Հարիւր 'ի Դամաս կոս : Անտի մղոն իննսուն 'ի Թաբօր լեառն : Անտի մղոն Հարիւր 'ի քաղաքն յԵրէմ: 'ի Դուռնայ մղոն վաթսուն 'ի Բերդկունսն: Անտի մղոն Հարիւրեվաթսուն 'ի Պարտաւ : Անտի մղոն իննսուն 'ի ծովն Կասպից : 'ի Դուռնայ մղոն եօթանասուն 'ի Նախչուան : Անտի մղոն Հարիւրեքսան 'ի Գանձակ Շ ահաստան: Անտի մղոն երեքհարիւր և եօ թանասուն 'ի Տապոն : Անտի մղոն

եօթանասուն 'ի Յակոկոն ։ Անտի մղոն Հարիւրեքառասուն 'ի Պասրայ ։

NOTE

ե 2

TEXT

Անտի

EAP180-1-1-8_034L.jpg

NOTE

68

TEXT

Անտի մղոն քսան'ի ծովն Պարս կային ։ Դարձեալ'ի Գանձակայ մղոն Հարիւր 'ի Նինուէ ։ Անտի մղոն Հարիւրեյիսուն Յուռհայ: 'ի Դուռնայ մղոն յիսուն'ի կողբ ։ Անտի մղոն ՀարիւրեՀինգ 'ի կոտ գեղ: Անտի մղոն Հարիւրեքառա սուն 'ի Տպխիս ։ Անտի մղոն եօթանասուն 'ի Հունարկերտ ։ Անտի մղոն Հարիւր'ի Պարտայ ։ Դարձեալ է յԵէմէ մղոն Հինգ Հարիւր յԱղէքսանդրիայ: Անտի մղոն Հազար 'ի Պենտա պօլիս ։ Անտի մղոն երեքՀարիւր'ի Տրա պօլիս ։ Անտի մղոն Հազարևերեսուն յԱփրիկայ ։ Անտի մղոն իննՀարիւր 'ի Սեպ տէ ։ Անտի

EAP180-1-1-8_034R.jpg

NOTE

69

TEXT

Ընդի մղոն Հազար յՈվկիանոս ծովն անծանօթ ։

HEAD

Չորս Գետքն են:

TEXT

Փիսոն'ի Հնդկաց և յեթէօպաց՝ Գանգէս կոչի.իսկ Յոյնք Հընդ կաց գետ ասեն, ելանէ Յէմաւօն լեռնէ՝ և զամ երկիրն Եւելատայ

շրջապատէ. այսինքն զփոքր Եթէօ պիայ և զմեծ . և զկողմանս Եւեմա ցւոց. և յանցանելն ընդ մեծն Եթէօպիայ՝ իջանէ ընդ Հարաւ յա րևմուտս ՚ի ներքոյ Գանգիրայ՝ յՈվկիանոս ծովն :
Գեհոն յեթէօպիոյ փոքուէ իջա նէ ՚ի Տոբացիսն. և ընդ Բղէ միտացիսն՝ և Յօքոմետիս . և ուռ գանէ զԵթէօպիայ. և յԵգիպտոս ցւոց ծովն մտանէ՝ ըստ Երեմիայի : զի՞ կայ քո և երկրին Եգիպտացւոց ըմպել զջուր ՚ի Գեհոն գետոյ ՚ի պղտորելոյ :

NOTE

Ե 3 Տիգ

EAP180-1-1-8_035L.jpg

NOTE

70

TEXT

Տիգրիս ՚ի Կորդուաց լերանց ելա նէ . և գնայ ընդ կողմանս Ասո րեստանեաց . քանզի՝ ձևէ զկող մանս արևելից . ընկղմի յերկիր՝ և ելանէ ՚ի Կորդիս . և Հայք ՚ի մի ջի մնայ : Եփրատ դոյնպէս ելանէ ՚ի դրախ տէն . մտանէ ընդ երկրաւ . և ելանէ ՚ի Հայք, ՚ի Բագրևանդայ և ՚ի Կարնոյ լերանց . մօտ ՚ի յարծն քաղաք :

HEAD

Գետք . և գնացք նոցա Մեծ և անու անիք : քառասունևերկու :

TEXT

Նաբանայ և Փարփայ՝ ՚ի Դամաս կոս ելանեն, և անցանեն ընդ Բաժան քաղաք՝ և անկանին ՚ի ծովն Արաբացւոց : Յորդանան երկու ակունք են, իջանեն ՚ի Սանիրայ և ՚ի Հերմոն լերանց . և միաւորեալ անկանին ՚ի ծովն Արաբացւոց :

NOTE

տիեզե րական Տօ

EAP180-1-1-8_035R.jpg

NOTE

71

TEXT

Տօնաւիս՝ ’ի Պալպաքայ ելանէ, և անցանէ ընդ Տիւրոս և ընդ Սի դոն. և անկանի ’ի ծովն Արաբա ցւոց մերձ Յիւնիկուրոն: Տիգրիս՝ ելանէ ’ի Կօրդուաց լերանց՝ և անցանէ ընդ Մօսլ՝ և ’ի Թրակիսայ. և Հերձակոտոր առնէ զաշխարհն Ասորեստանեաց՝ և ան կանի ’ի ծովն Հնդկաց՝ անդ քան զՈւիճիկօրօն: Արածանի ’ի Հայոց ելանէ ’ի Մելլերկրացն. և միաւորի ընդ Եփրատայ: Եփրատ՝ ’ի կարնոյ ելանէ՝ և ան ցանէ ընդ Խաղուառճ. բանայ զԵկեղեաց՝ զայ ’ի Սամուսատ. իջանէ ’ի Ճուրեպիօն. և անցանէ ընդ կառայ. և գնայ ’ի Բաբիլօն. միաւորի ընդ Տիգրիսի. բաժանի ’ի Բարտսայ. և անկանի ’ի ծով: Գեհոն ’ի դրախտէն ելանէ՝ և անցանէ ընդ սահմանաւն Հնդ կաց՝ և անցանի ’ի Սլիւան. և անկա նի

NOTE

Բասրայ ե 4

EAP180-1-1-8_036L.jpg

NOTE

72

TEXT

նի ’ի Սողոնիայ . իջանէ յԵգիպ տոս . և անցանէ ’ի լոյս՝ որ թարգ մանի արևակաբուղխ . և մտանէ ’ի ծովն Հարաւոյ : Եքսիոս՝ և Փիսօն՝ ’ի դրախտէն ելանեն . և կոչեն նմա Հնդիկէս գետ . և Եթէօպացիք՝ Գանգէս գետ . և Յօտին ծովակ Հատանէ . ընդ Ախփինատէս քաղաք անցա նէ՝ և ընդ Սիբինատէս անցանի՝ և անկանի ’ի ծովն Աղտոսիկայ : Թիւամիս գետ՝ ’ի Ռաբուայ ելա նէ . և ընդ մըսր՝ և ընդ Ռաբիլօն անցանի . և ձգի ’ի Գանգգիրօն ’ի ծովն Հարաւոյ : Արտակազիս գետ՝ ’ի Մարմարի տէս քաղաքէ ելանէ . նա ոչ ունի կերպարանս գետոյ՝ այլ ծովու նմա նակ է . զի

տասն վտաւան է խո րութի նորա՝ և եօթն վտաւան լայ նութի նորա՝ և ընդ Բիւրիտոն ան ցանէ մերձ յեթէօպիայ՝ և անկանի ՚ի ծովն Հարաւոյ :

NOTE

Տու

EAP180-1-1-8_036R.jpg

NOTE

73

TEXT

Տուռէս՝ և Հեղինիկոս արքայ՝ ՚ի պարսից ՚ի Րակտիրոնայ ելանեն. և անցանեն ընդ ( սմուրիայն՝ և ան կանին ՚ի ծովն կասբից: Ղանդէս և Էլիմոս գետք. որոց խորութին մինչև յանդունդս է՝ և Րալ ծառացեալ մինչև յերկինս. և լայնութի նորա երեսուն մղոն . անցանէ ընդ Ճենաս քաղաք. եր թայ ՚ի Սապռապիոն ՚ի Սագո՝ և Յակեապոն . անցանէ ՚ի խորին Հնդիկս՝ մերձ ՚ի խոթէքաստն՝ ՚ի Համազունսն՝ որ թարգմանի կա նանց աշխարհ՝ մօտ յանծանօթ եր կիրն. և անկանին ՚ի Հետոռմիտոն ծովն: Ակոն՝ և Հինէս՝ և Քերմիս տէս՝ սոքա երեքեանս ՚ի մի ՚ի հիւ սիսային լերանց ելանեն. և ()պաս՝ ՚ի մօրեաց ՚ի վայր իջանեն՝ և ընդ միմեանս խառնեալ ընդ աշխարհն Աղուանից՝ անցանին մերձ ՚ի 1 ի կէթ՝ և անկանին ՚ի ծովն ( պրապա տիկոս:

NOTE

Ե 5 Տար

EAP180-1-1-8_037L.jpg

NOTE

74

TEXT

Տարտարիկոս՝ և Ստըկատս՝ Պատ կիրոս՝ և Օքոս ։ Սոքա չորեքեանս յարևմտից իջանեն ՚ի Պերիմոս լեռ նէ . որ կոչի այրեցեալ զօտի արե գականն՝ և անցանին ընդ | իկոն և ընդ Սպանիայ . մերձ ՚ի Քետ րոն՝ և անկանին ՚ի ծովն երեկոյին ։ Երասխ՝ ՚ի Րասինու ելանէ . Մե ծամօրն՝ ՚ի դունայ ելանէ . կուր գետ յակուռն ելանէ . Ճօրօխ գետ՝ ՚ի Սենիաց ելանէ . Հուրաս տան գետ՝ Գեղարքունաց ելանէ . Դինէզոյն գետ՝ յԱննռոյ ելանէ։ Սոքա ամենեքեան ընթանան և յե րասխ խառնին ՚ի նախչուան՝ և ՚ի Մօրանդ ՚ի Շ արուանդ՝ ՚ի Թու րէշ. ՚ի Պարսաւխիտուս . ՚ի Սա զաստան. յԱպլաստան.՚ի Տուանս. ՚ի Սատուրան . ՚ի Սամուրան . ՚ի Դիլմաստան . ՚ի Դարական . ՚ի Փայտակարան . և անկանին՝ ՚ի ծովն երեկորին՝ արևմտից երե կոյին ։ Ապ

EAP180-1-1-8_037R.jpg

NOTE

75

TEXT

Րսզղիկէս՝ և Ր լիս՝ ՚ի Սեբաս տիոյ ելանեն՝ և ընդ Պամրաց աշ խարհն անցանեն՝ և երթան մերձ ՚ի Նիկոմիդայ քաղաք յարևմուտս կոյս . և ոլորի ընդ հիւսիսային կող մանն . և անկանի ՚ի ծովն Պոնտոս ։ Օ ախառիկոն գետ՝ յէկոնիոն գաւառէ ելանէ՝ և ընդ Տրապօ լիս երթայ ՚ի 1 իդիայ՝ մերձ ՚ի Հելլէնս. և անկանի ՚ի ծովն Րու զան ։ կաւվուս՝ և 1 ուկապրիա՝ գիոն՝ ՚ի Խոնասոյ ելանեն՝ և ընդ Թրա կէս անցանին . մերձ ՚ի 1] առնիայ . և անկանին ՚ի ծովն էփեսացւոց ։ Դանուբիկ՝ որ ընդհոսէ ելա նէ . և Տօնաւիս Յակալոնացւոց՝ և զան յանդիման արևելից մինչև յաշխարհն Րուլխրաց՝ և առ Պ օ վօրն . և Լուտուալիան. և ւսա զասալիծն. և անցանի յաշխարհն Պօթաց՝ և մտանէ ՚ի ծովն Րաս ղաց ։

NOTE

Տիբէ

EAP180-1-1-8_038L.jpg

NOTE

76

TEXT

Տիբերիոս գետ՝ ելանէ ՚ի կա պուտ լերանց հիւսիսոյ՝ և անցանէ ընդմէջ Հռօմայ՝ և անկանի յիտա ղիայ . և մտանէ ՚ի ծովն արևմտից ։ Սկամանդոս գետ՝ ՚ի ֆռանկաց ելանէ . և ծովամուտ լինի մասն մերձ ՚ի Տապրիկ. և ՚ի Ս րիկա նիք . և մտանէ ՚ի ծովն երեկորի արևմտից ։ Տանաշիս՝ և Պօնտոս՝ և Հեղինա պօնտոս յանծանօթ երկրէն ելա նեն . և ընդ անմարդ անապատ ան ցանեն ընդ Քարանձաւս . և ընդ Բերդուկս . ընդ խուփունս . և ընդ Քարաքիթս՝ ի վայր վայթին. և անկանին ՚ի ծովն Համատարած . որ է ովկիանոս . և պատէ զչորեք ծագեան աշխարհս ամ. Ընդ ամ միահամուռն . են գետք քառա սունևերկու՝ մեծամեծք . որք ելա նեն ՚ի ծովէ՝ և չորս ՚ի դրախտէն ելանեն՝ շրջին ընդ աշխարհս ամ. և դարձեալ մտանեն անդրէն առ ծնօղն

EAP180-1-1-8_038R.jpg

NOTE

77

TEXT

ծնօղն և մայրն իւրեանց Համատա րած ծովն ։ Սքանչելագործ արարչին ամի փառք ։

HEAD

Անուանք Քաղաքացն Հնդկաց և Պարսից ։

TEXT

Պանխան քաղաք՝ ութ աւուրց ճա նապարհ ընդ ցամաք պիտոյէ ընթանալ. Պանխանու գաւառքն Հնդիկք են . բայց ՚ի Խազնոյ թեմն խօսի . զի ՚ի վաղնջուց Հաւանեցու ցեալէ պարսիկն և

առեալ. այլ երկ րին բնակիչքն Հնդիկք են : Տիգնաւոյ քաղաքն է մեծ՝ և ինքն ՚ի Խզնոյ խօսի՝ և երկրին բնա կօղքն Հնդիկք են .
կան և ազգ մի պարսիկք՝ վեց աւուր քան զԽազ նիայ ՚ի վայր է :
Պոյստ քաղաք է մեծ՝ մեծա գանձ և մեծահարկ. և ունի զթէմ ընդարձակ. և ճանապարհ չորից աւուրց է ՚ի Տիգնաւէ ՚ի Բոստ՝ և այս

EAP180-1-1-8_039L.jpg

NOTE

78

TEXT

այս երկրիս բնակիչքն Հնդիկք են և ՚ի Խաղնի խօսին :
Պուրշայուր մեծաշահ քաղաք՝ և թեմ ընդարձակ . եւանէ յիւրմէ շատ | եղակ. և Հինա աղէկ. ՚ի Խազանոյ ՚ի Պուրշայուր տասնն Հինգ աւուր ճանապարհ է: Քապուլէ՝ է քաղաք մեծ և մե ծաշահ և մեծահարկ . եւանէ յիւր մէ Հլէլիճ և Քապուլի. և այլ օգտակար դեղք . քառասուն ֆար սախէ ՚ի Պուրշայուրէ մինչև ՚ի Տիգնաւէ : | ահուր քաղաք է մեծ՝ և մե ծագանձ աշխարհ՝ և երկիր ընդար ձակ. գեղեր ունի չորսհարիւրհա զար: Մահմուտ սուլտանն է զիւ րեանքն Հարկատու արարեր՝ և Հաւանեցուցեր. են ամք վեցհա րիւր. է մեծաշնորհ քաղաք. և որինչ յամ երկիր պատուական և Հարկաւոր իրք լինին՝ ամէնն ՚ի քա ղաքն գտանի . զի անդ բերեալ ծա խեն

EAP180-1-1-8_039R.jpg

NOTE

79

TEXT

խեն վաճառականքն . և ամ վաճա ռականքն անտի քաղեն զամ ինչ՝ զի իվր ճանապարհին է քաղաքն և թագաւոր է մեծազօր :
Խշմիր քաղաք մեծ է . և զաւ առս ունի Հարուստս՝ և մեծա շահս .

’ի Լահուրէն քառասուն օրն երթան ’ի Խշմիր . մուշինի խիա լի
ասեն ցած մուշք է . նա անդ շատ գտանի . ելանէ Սնֆուլ. և
Խարաֆուլ. և այլ որ ինչ պիտոյ է մարդոյ՝ դեղեր մարդկան
Համար . քաղաքն լեռն է և մորի և կապոնի : Պանկլար՝ քաղաք է
մեծ՝ և բնա կիչք քղաքին Հնդիկք Հարուստք՝ և մեծաշահք.և
մայրին ինքեան մօտ է . և մայրւոյն փայտն ամէնն ծխա նելի է . և
բնակիչք երկրին գտա նեն զաղէկ ծխանելին’ի ցեխսն թա դած :
իւրեանց թագաւորն ութն Հազար ֆիլս ունի : մեծ թագաւոր է և
Հարուստ՝ և ամ պատուական իր գտանի ’ի յիւր քաղաքն : ’ի
Խշմի

EAP180-1-1-8_040L.jpg

NOTE

80

TEXT

’ի Խշմիրայէ երեսուն աւուր ճա նապարհ է մինչև ’ի Պանկլար.
երբ մարդ այլ ճանփով ’ի Նահրուալայ կամի գնալ քսանևհինգ
օրն երթայ ’ի Մոլթան քաղաք: Նահրուալայ և Մոլթան՝ քա ղաքք
են մեծամեծք և մեծա շահք . ունին ընդարձակ գաւառս՝ և գեօղս
երեքհազարս. և ’ի խազ նի խօսին՝ և բնակիչք երկրին Հըն դիկք
են: Սելուլ քաղաք է մեծ՝ և մեծա գանձ. քառասուն աւուր ճանա
պարհ է ’ի Տէպուլայ ’ի Սնդիկ:քա ղաք է Տէպուլ՝ և մայրիքն դժու
ար՝ և ճանապարհքն՝ և կասլան նի՝ և լերինք. և իվր փոքր Ճելուլ
գետոյն է շինեալ Սելուլ քաղաք. բայց ’ի Նահրուալայ թեմն
խօսի: Սումնաթ՝ քաղաք է Հնդիկ՝ ’ի ծով եզերին Հնդկաց՝ և է
բազմա գանձ քաղաք և մեծաշահ. Հընդ կաց

NOTE

5 և

EAP180-1-1-8_040R.jpg

NOTE

81

TEXT

կաց Հաճիքն'ի Հօն զան յուխտ. իւ րեանց երիցանց և ալոկերոյն Րահ րամայ կոչեն . ամէն քաղաքն նք են : 'ի Սօմնաթայ շատ գողեր ելանեն նաւով. և իվ ր ծովու շատ ծեծ առնեն . և'ի Նահրուալայ խօսին : Պտրաստ քաղաք է փոքր և ծով եզեր . և մօտ է 'ի Նահրուալայ : Քամպաթ քաղաք է 'ի ծովե զեր . և մերձ է 'ի պտրաստ քաղաք : Պուրճ քաղաք է ծովեզեր՝ և Նահրուալայ խօսին . և մերձ է 'ի Քամպաթ. և երկու աւուր ճա նապարհ հեռի են'ի միմեանց : 'ի Պուրճ քաղաքն յամէն չորս տարի Ած մի պաշտեն. և 'ի յաւար տել չորս ամին,փոխեն.նք բարբան ջեն թէ ջրհեղեղն առ մեզ չէ եկել: Րայոլ մեծ քաղաք է՝ և ծովե զեր է՝ և մեծաշահ . շատ շաքար և շատ լեղակ ելանէ յիւրմէ . և շատ պատուական իրք գտանին անդ : 'ի Պուրճ քաղաքէ երթայ մարդ

NOTE

6 զ 'ի Ջոլ

EAP180-1-1-8_041L.jpg

NOTE

82

TEXT

'ի Ջ ըմուտրայ . և անտի երթայ ճանապարհորդն 'ի Պլստրայ : Պլստրայ քաղաք է ծովեզերի . մեծ , և մեծաշահ՝ և բազմազանձ . այս քաղաքնիս Նահրուալայ խօ սին. հարիւրհազար զեօղ ունի այս քաղաքս . և ամէնն շուրջ ծովեզե րովն շինած . այս քաղաքքս և իւրց վաճառական նաւերն ընդ ամ եր կարութի ծովու վաճառով ընթա նան. Այս քաղաքնիս և այս զեղերս՝ երկուհարիւրհազար շաքմի են . և Հնդիկ լեզուաւ են . և ամէնն շաք մի խօսին : Սնէպարն քաղաք է մեծ . մեծա զանձ՝ և մեծաշահ , և առաջին քաղաք: 'ի Սնէպարէ երթայ ճանա

պարհորդն'ի Տարաւի՝ որ է մեծ քա ղաք . աստի երթայ 'ի Սուֆրայ . 'ի Սուվրայէ երթայ 'ի Թանայ . ան տի 'ի Փունաւէ . և 'ի Փունաւոյ 'ի Սանդապուր՝ ուր շատ պղպեղն լի նի՝

EAP180-1-1-8_041R.jpg

NOTE

83

TEXT

նի՝ և այլ պիտանի Համեմունք. և ամէն Քաղաքնիս Հետ իրաց են : 'ի Սանդապուրէն երթայ ճանա պարՀորդն 'ի Պանքուր քաղաք. և անտի 'ի Պանկլուր. և անտի Յէսլն պնիթոն. և անտի 'ի 9 ըլլայ. և անտի 'ի Փանդրիանէ . և անտի 'ի Շ ինկլ. 'ի Շ ինկլի շատ Քրիստո նեայք կան՝ և շատ եկեղեցիք. և ամէնն Մէլէպան գաւառի խօ սին. Օղլիանդ անուն է թեմին.'ի յայս թեմս է սբ առաքեալն Թօմա վկայեալ. թեմին առաջին քաղաք Պլինճ՝ մեծ և մեծաշահ. 'ի Պլինճու երթայ ճանապարՀորդն 'ի Պնիպոթէն'ի տասն օրն. անտի 'ի Խուտոյն քաղաք օր մի . անտի 'ի Նախէպտթին օր մի: Նախէպտթին քաղաք է մեծ . շատ եկեղեցիս և շատ Քրիստո նեայս ունի ընդ ինքեամբ. և ամ քաղաքնիս ծովեզերք են: 'ի Նախէպտոյն երթայ երկու

NOTE

Զ 2 օրն

EAP180-1-1-8_042L.jpg

NOTE

84

TEXT

օրն'ի Շ ահպաթին. անտի երթայ 'ի սբ Առաքելոյ գերեզմանն. և ասեն անուն քաղաքին Մալապ. ծովեզեր է քաղաքն. և մնացեալ է յինքն սակաւ մի քրիստոնեայ: 'ի Մալպայէ երթայ մարդ 'ի Զուճր. Այս քաղաք է մեծ՝ և մեծագանձ և մեծաշահ.'ի Մլլապ

քաղաք ուր սբ առաքելոյն գերեզմանն է Թու մայի. աղբիւրքն ամէնն տղրուկ եռացուցանեն. բայց միայն յայն աղբերէն.որ մերձ է ՚ի գերեզմանն Թումայի. Այն աղբեր ջուրն յիս տակ է և բարեհամ. և սբ է ՚ի տղըր կէ . այս ամ քաղաքս Չօլիան կոչի : Ս ելան կղզի՝ Հնդիկ անուամբ է. և Սառնտիպ՝ տաճիկ անու ամբ . ՚ի յայս կղզիս ասեն Հնդիկք՝ թէ երբ էհան Ած զադամ ՚ի դրախտէն. նա աստ բնակեցոյց . պատուական զօհար ելանէ յայն կղզւոյն. և կարմիր Յակունդ բա զում.

EAP180-1-1-8_042R.jpg

NOTE

85

TEXT

ում. և ակն որոյ ասեն Հնդկերէն պտուի . իսկ տաճկերէն ( յնիլ հօռ : և այլ ակն ելանէ. զոր պարս երէն ասեն Օաշմիգուրպայ. և յլ ակն ելանէ որոյ անունն է Իլէ. ւր գոյնն կապուտ լինի . և անուա են Հնդիկք՝ Նիլսէ:և այլ ակն ելա է դեղին . Պոտրոյ ասեն իւրն . և արմիր Յակունդ ելանէ . որ քան ամ ակունս և յակունդս Հարկնոր և մեծագին . և այլ պատուական ՝ որ թագաւորաց անգ է : Ո սկէգետին գաւառն Րեմինզար ասեն իւրն. զի բազում ոսկի ելա է յիւրմէն՝ քանի աշխատիլ ոք արէ . և Ոսկէգետնին են անու նքս այս : Առաջին քաղաք և կղզի՝ | ամ ն. աստի ելանէ շատ Որդն.փայտ կամ. և այլ պատուականք իրք . ստի երթայ մարդ՝ ի Պարչուր.այն աղաք է և կղզի մեծաշահ . պա

NOTE

է 3 տուա

EAP180-1-1-8_043L.jpg

NOTE

86

TEXT

տուճակն Քաֆուրն անտի ելանէ: 'ի Լամբրու մօտ կղզի կայ՝ զանուն Քրուտ ասեն. Հընէր թեթևա զին անտի ելանէ՝ և անդ կազմի: Քրուդայի քաղաք է մեծ . և մերձ 'ի նա կղզի մի է Սամաւի ասեն. մեծադիր, և մեծաշահ. և իւր ներ քոյ այլ կղզի կայ՝ որ կոչի Պուրէ. և զամ պատուճական իր՝ զորինչ ուզէ մարդն գտանէ 'ի կղզւոջն: և իւր ներքոյ, Լփանէս կղզի . 'ի յայն կղզւոյն ելանէ բազում Քա ֆուր. և 'ի ներքոյ Պլայոյ է թագաւ որն Ոսկէզետնին. 'ի Պլայոյ կղզին նստի Օապիճաց թագաւորն. երբ իւր Հայրն մեռանի կամ մայրն . փո խան ծնողացն 'ի չափս նոցին կուռս շինէ Ոսկի. սոցա ազգքն կռապաշտք են. և չեն Հնդիկք. սոքա Օապէճ կոչին. և միս մեռելոտի՝ զոր գտա նեն, ուտեն. և զիւրեանց մեռեալս, և զայլ սահմանաց մարդ, զորս կալ նուլ կարեն. որս Համարին:

NOTE

Եւ

EAP180-1-1-8_043R.jpg

NOTE

87

TEXT

Եւ յորժամ ըն այլազգի կռուին, և յաղթեն. զորոյ կոտորեալսն զոր իւրց է՝ և զոր թշնամեացն՝ զամէնն ուտեն. բայց վաճառականի և ճանա պարհորդի ոչ մեղանչեն. զի իւրց ապուրն 'ի վաճառականաց լինի: Ռամբի կղզի է . և իւր ներքոյ այլ կղզի կայ՝ Քաղաքվանչի ասեն. մերձ 'ի սա կղզի մի այլ. յայս կղզիքս ելանէ կլայեկ շատ. և ամ պատուա կան իր Հօն գտանի. Հանց որ թա զաւորաց վայելէ . և մերձ այս կըղ զիս է Յալա. և Քալա. և կակուլէ: Այս է Ոսկէզետնի քաղաքքն, և կղզիքն, և զաւառքն. և ազգքն որք բնակեալ են Օ ապէճ լեզու են: Չին և մաչին երեքհազար և ութ հարիւր քաղաքք են՝ և բազմաբա րիք

գաւառք. ամէնն կռապաշտք են. և երկիրն ցամաք է. բայց չեն հաւա նիլ ոչոք ազգի. զի իւր թագաւորն բազում և գազանաբարոյ հեծեալս ունի. և սիրեն զքրիստոնեայսն. և լաւ

EAP180-1-1-8_044L.jpg

NOTE

88

TEXT

լաւ ընդունին՝ յԱղէքսանդր թա գաւորէն ՚ի վեր. զի ՚ի նմանէ շատ աղէկ են գտեալ և ազատութի. և զՀոռոմն խիստ սիրեն: Եւ այն տերևն զոր Հնդիկք ու տեն. զիւր անունն թմբուլ ասեն. իւրեանց նուղլ և ապուր այն է . և առողջութի տայ. և մեծրիկ է և կարմիր՝ և անունն Ջուձը ասեն: և Մոզան ծառոյն ասեն. որ իւր տերևն Հինգ կանգուն է. ասեն բնակիչքն, թէ նր տերևովն ծած կեցաւ Ադամ, յորժամ ՚ի դրախ տէն ելաւ: Հնդիկք երիցանցն բահրամայ կոչեն. և կռոցն դև: Այլ քաղաք է ՚ի Թուրքաս տան. ամուր լեառն. և շատ քրիս տոնեայք կան ՚ի յայն գաւառն. Սունդրի ասեն քաղաք. ելանէ յիւր մէ Խունկ և Սապռ. Սկունդրի այս քաղաքք են Հնդկաց և Պար սից: Եւ Յի Քի արարչին ամ արարածոց փառք յաւեց յւտնս:

NOTE

6 զ

EAP180-1-1-8_044R.jpg

HEAD

Գ Ի Ր Ք ԱՌԱՍՊԵԼԱ ԲԱՆՈՒԹԵԱՆՑ: Որ ասի ԱՂՈՒԷՍԱԳԻՐՔ: Արարեալ սակս խրատու և զգուշութեան:

TEXT

Թագաւոր մի կազմեաց սե ղան դեսպանաց. և առեալ մսագործացն զկաշին ե դին յաղոց իմէջ շուկային: Եւ իմէջ գիշերին ժողովեցան շունք քաղաքին յուտել զկաշին: Եւ ասէ

միումն

NOTE

ա I ա

EAP180-1-1-8_045L.jpg

TEXT

միումն ՚ի նոցանէ՝ որ մեծն էր և ի մաստուն. ասէ, եկէք նախ զջուրն լակեսցուք՝ և ապայ կերիցուք զկա շին. և սկսան լակել՝ և պատառե ցան . և ոչ ժամանեցին յուտել զկա շին: Այսպէս զայ մահն իվերայ մեր . և հեղձուցանէ զմեզ. զի ոչ կարեմք հասանիլ այն կենաց : Թագաւոր մի բարի և բարեմիտ ճա շարարեալ յեզր գետոյն.և շուն մի սոված եկն առ թագաւորն: և նա ետ հաց մի նբ: Եւ առեալ շանն գնայր ընդ եզր գետոյն . ետես ՚ի ջուրն զիւր շուքն իբրև զայլ շուն . և զհացն ՚ի բերան նորա : Եւ շունն ագահեալ մոռացաւ զհացն որ ՚ի բերանն էր.վազեաց ՚ի գետն զի առ ցէ զհացն ՚ի միւս շանէն.և ոչ էգիտ՝ զի շուքն էր: Եւ զայն հացն՝ զոր ու նէր՝ գետն տարաւ . և շունն ելեալ երթայր սովամահ . Ցուցանէ թէ թագաւորն Քս է.և սովեալ շունն ազգ

NOTE

Բ

EAP180-1-1-8_045R.jpg

NOTE

3

TEXT

ազգ մարդկան է . և սբ հացն իւր շնորհն, և պատուիրանն, և իւր սբ մարմինն: Եւ սատանայ կերպա րանէ առաջօք մեր առաջի զսէր աշխարհի, և զամ մեղս . զագահու թի, զարծաթսիրութի: Եւ մեք ջա նամք մեծ աշխատութբ զհետ փա ռաց և մեծութե . և զհետ ստոց՝ և անցաւորաց ջանամք: Թէ և առ նումք, մահն հանէ ՚ի մէնջ . և մեք լինիմք ողորմելիք. զի կորուսանեմք զայս կեանս և

զայն: Թագաւոր մի յարևմուտս բազմե ցաւ յաթոռ: և եկին բազում դեսպանք առաջի նր: Եւ ահա շուղ ինչ կայր ՚ի մօրուս նր. և սպասաւ որք նր ասեն . ով թագաւոր, ահա տեսանեմք ոսկի բազայ իվր ոսկի ճղին.և նա ոչ իմացաւ զառակն: Եւ գնց առնուլ զշիւղն՚ի մորուացն.և նա մահ արար նմա.և սպասաւորն է հար զերեսս նր և ասէ. մեք գիտեմք եթէ

NOTE

գ ա 2

EAP180-1-1-8_046L.jpg

TEXT

եթէ ած հաւասար թագաւոր ես, նա նման արջոյ կամիս թափել զիս: Ցուցանէ . թէ այսպ պարտէ յան դիմանել զթագաւորն՝ և զառաջ նորդն՝ և զդատաւորն. թէ ելա նեն յիրաւանցն. և թիւրին ՚ի կա մացն այ: Թագաւորի միոյ որդի էհաս ՚ի վերջին աղքատութի. և յոլով ժամանակս ծառայեաց խնկօք և ճրագօք կռոց հօր իւրոյ: Եւ աղա չէր զնա՝ զի փարթամացուցէ զնա. իսկ նա ևս քանզևս աղքատանայր: Եւ նա բարկացեալ յաւուր միում եհար ուռամբ զգլուխ կռոցն, և հերձաւ. և բազում զանձս հոսե ցաւ ՚ի գլխոյ կռոցն՝ զոր հայրն պա հեալ էր: Ո՜վ որդեակ՝ վայ ինձ ողորմելի մեղաւորիս . քանզի այս պէս ցուցանէ առակս. թէ որքան ծառայես մարմնոյ քոյ հեշտու թբ և հանգստութբ. և պարար

NOTE

դ

EAP180-1-1-8_046R.jpg

NOTE

5

TEXT

տութբ . և մեղօք • դու ևս քանզև աղքատանաս Հոգւով. և ողորմե լի լինիս: ( պաթէ տանջես զմար մինդ, չարչարես, և սպանես ամ բա րեգործութբ. ապա կարես փար թամանալ Հոգւով. և փրկիլ'ի դը ժոխոցն :

NOTE

Ե

TEXT

Թագաւոր մի սաստիկ նեղացաւ 'ի լուէն. և արուեստիւ կալաւ զնա: ( սէ լուն. աղաչեմ զքեզ՝ մի սպանաներ զիս.զի փոքր է վնաս իմ՝ զոր արարի քեզ: (ւ նա ասէ՝ դու ինչ 'ի քո ուժդ կայր՝ արարեր : այժմ 'ի ձեռաց իմոց մեռանիս : Ցուցանէ . թէ բնաւ'ի կեանս քո չար ումեք մարդոյ մի առնել: (ւ դարձեալ ասէ . թէ պարտէ իշխա նաց և դատաւորաց զփոքր չարա գործն Հոգալ և տանջել. զի երկի ցեն մեծամեծ չարագործքն:

NOTE

ա 3 Թա

EAP180-1-1-8_047L.jpg

NOTE

6

NOTE

Զ

TEXT

Թագաւոր մի մեծ և բարեմիտ : ունէր խոզմի սիրուն 'ի տան իւրում. և խորհեցաւ մեծարել զնա՝ և փառաւորել. կազմեաց նմա զինտ մի յոսկւոյ հազար դահեկա նի. և մետաքս ոսկէզօդ՝ սպիտակ բեհեզ՝ ուստիկ ծանրագին էած իվերայ նր. և զգինտն էած 'ի քիթն նր. և նա առաւօտու ժամուն շրջէր ըն քաղաքն. և զամենայնն 'ի տիղմն թաւալէր. և զգինտն ոսկիոր կայր 'ի քիթ

նր: Ցուցանէ : Ր, մ մեղաւորք մեղս առնեն. և յամժամ թաւա լին ՚ի տիղմն մեղաց. և աղտեղեն զլուսափայլ պատմուճան սրբոյ աւ ազանին. և ամ ընդ աղբ, և շարաւ մեղաց շփեն զգինտն նբ՝ որ ՚ի միտս և հոգիս նց պատկերն նբ :

NOTE

Է

TEXT

Թագաւորն կոստանդիանոս ՚ի բազմաց ժամանակաց ցանկա ցաւ տեսանել զճգնաւոր ոմն . որ է անապատական՝ և յոյժ անուանի. և օրհ

EAP180-1-1-8_047R.jpg

NOTE

7

TEXT

օրհնիլ՚ինմանէ. և խրատ առնուլ և ոչ կարէր երթալ՚ի բազում զբա ղանացն: Եւ օր մի յանկարծակի որ սոյ պատճառաւ գնացեալ յանա պատն: Եւ սպասաւորք թագաւո րին յառաջընթացեալ ազդեցին ճգնաւորին զգալուստ թագաւո րին . և նա ելեալ աւելեաց զխցիկն. և զաւելածն կուտեաց իմէջ տանն. Եւ ինքն մերկացաւ, և կտոր մի վա լայ իվերայ թիկանցն կապեաց՝ և նստաւ իվերայ սեմոց դրանն մերկ. մէկ ոտքն ՚ի ներս և մէկ ոտքն ՚ի դուրս. և եդ զմէկ ձեռն իվր բե րանոյն՝ և զմիւսն իվերայ ծածուկ մարմնոյն: Եւ եկեալ թագաւորն ետես, և զարմացաւ. և փութանա կի յետ դարձաւ. իշխանացն հար ցեալ զպատճառն շտապ դառնա լոյն: Ասաց, թէ տասն տարի՚ի մօտն էի կացեալ այնչափ խրատ չէի կա րել ուսանիլ՝ որչափ այսմէկ պահս: Եւ ասացին զինչ էր խրատն ու սեալ

EAP180-1-1-8_048L.jpg

NOTE

8

TEXT

սեալ՝ զի ոչ դու խօսեցար՝ և ոչ նա: Եւ ասաց, թէ այն որ զաւելուքսն կուտել էր. զայս ուսուցանէ, թէ աշխարհիս ինչքն իբրև զայս աղբս է: Եւ այն որ մերկ էր, զվալան իվր թիկանցն էր կապեր. զայն ուսուցա նէ, թէ յաշխարհէս զայս չափ իրքս պիտի տանիմք՝ քանի շատապրիմք ու ժողովեմք: Եւ այն որ իվր շեմոյն էր նստեալ. զայն ուսոյց՝ թէ մար դոյս մէկ ոտքն ՚ի յայս կեանքս է՝ և մէկ ոտն յայն: Եւ այն որ մէկ ձեռն իվր բերանոյն էր եդեալ և զմէկ իվր ծածուկ մարմնոյն՝ զայս կու նշանակէր. թէ մարդ որ ուզէ աստ առ մարդիկք պարզ երեւս լինիլ և անդ առ Աձ, թող զայս երկու դուռնս պահէ: Այր մի ելանէր ՚ի դժուար դաղ մի վեր. ՚ի տօթ ժամանակի. յոյժ աշխատեցաւ. և սկսաւ բամ բասել զԱդամ և զԵւայ. թէ էր

NOTE

Բ 1 ա

EAP180-1-1-8_048R.jpg

NOTE

9

TEXT

էր անկայք ՚ի դրախտէն անհամ բերութբ ձերով: և երևեալ հրեշ տակին ասաց: Թէ տանիմ ըզ քեզ ՚ի դրախտն, դու համբերեւս: և ասաց, թէ երբ լինի այդ: Եւ յան կարծակի քուն իվերայն անկաւ: Եւ տեսեալ զինքն ՚ի դրախտին ու րախացաւ: Եւ ետես զի մարդիք զտղայ ծառերն ՚ի վայրտային . և չհամբերեաց, և ասաց թէ այդ ինչ աներկիւղ մարդիք էք. որ ըզ չորն և զգօսացածն թողեալէք՝ և զտղայ և զմատղաշ ծառերն ՚ի վայր կու տայք. որ զտղայոց մահն նշա նակէ: Եւ բացեալ զաչսն ետես զինքն ՚ի դարն ՚ի վեր՝ և զաղն ՚ի շա լակն ջոճալով. և սկսաւ լալ: Դար

ձեալ ետես զհրեշտակն, և ասաց . այլ չի խօսիմ. և տեսեալ զինքն ’ի դրախտին . և տեսանէր զմարդիկք զի զփուշ և զճիւղս ծառոց շալակ դնէին. և չէին կարել շալկել՝ նա կու շատցնէին. որ զմեղս նշանա

NOTE

2 բ կէ:

EAP180-1-1-8_049L.jpg

NOTE

10

TEXT

կէ . որ չափ շատանայ նա այլ գոր ծէ . և չհամբերեաց . և ասաց, ով անմիտք թեթևացուցէք, որ կա րէք շալկել: Եւ տեսեալ զինքն այլ ևս’ի դրախտին : և տեսեալ վէմ մի մեծ . և երկոտասան լուծք լծեալ ’ի նմա: և ամէնմէկ յիւր դիմացն քարշէր. և վէմն չէր շարժիլ: Եւ չհամբերեաց՝ և ասաց, ով անմիտք, ամէնքդ ’ի մէկ դիմաց լծեցէք : զի խախտել կարիցէք: Եւ վէմն էր ինքն Քն, և լուծքն լծեալք, են Հաւատք ուղղափառաց երկո տասան ազգաց քրիստոնէից. իւրա քանչիւր յինքն ձգելով. և բացեալ զաչսն ետես զինքն ’ի դարն ’ի վեր՝ և զադն ’ի շալակն :

NOTE

թ

TEXT

կին մի երթայր յԵէմ բազում զօրօք՝ և բազում ընչիւք: Եւ ’ի ճանապարհին Հանդիպեալ յեզեր միոյ եկեղեցւոյ. և այն եկեղեցւոյ դուռն երկու ծառ կայր . բուսած մէկ

EAP180-1-1-8_049R.jpg

NOTE

11

TEXT

մէկ’ի յաջ դիէն. և մէկ’ի ձախն. և յանկարծակի յիրեար եկեալ Համբուրեցին զիրեար: Եւ գիտա ցեալ զի երէց մի կայր անդ ’ի պա տարագն. և ’ի միջք յերախայիցն Համբուրեցին զիրեար: Եւ ասաց կինն յերէցն. թէ մէկ ջորէքեռն մալ քեզ՝ Հանց պատարագ մի ինձ շինէ.և մէկայլ օրն շինեաց. և չհամ բուրեցին զիրեար ծառքն:Եւ իմա ցեալ զպատճառն. ասաց երէցն, թէ յայնժամու խորհուրդ անկաւ ’ի սիրտս իմ, թէ զջորին այլ պիտի տայ՝ թէ ոչ: Խոստմամբ երդումն արար. թէ ջորին այլ քեզ. լուր Հանց ժամ շինէ: Եւ մէկ այլ օրն շինեաց. և ծառքն Համբուրեցին զիրեար: և ճշմարիտ եղեալ է և ոչ է սուտ : Միայնակեց մի նստեալ իվր վի մի միոյ. և կայր յառաջեն աղ բիւր մի: Եկն առ աղբիւրն զօրա կան

NOTE

ժ բ 2

EAP180-1-1-8_050L.jpg

NOTE

12

TEXT

կան մի, և նստաւ անդ. եկեր զհաց, և ըմպեաց զջուր. և հինգ հարիւր սպիտակ ’ի տեղն եթող՝ և գնաց : Եկն մարդ մի այլ խմեաց ջուր՝ և էառ զդրամն, և գնաց: Եւ զօրա կանն դարձաւ ’ի խնդիր դրամին և չգտաւ զդրամն, և մարդ մի այլ ե կեալ էր ’ի ջուրն: Եւ իսպահին ասաց տուր զիմ դրամն. և նա ոչ էր առեալ զդրամն : էզարկ և սպան զայն մարդ : Եւ միայնակեացն զարմացաւ. թէ այս ինչ գործ էր. որ գործեցաւ: և ’ի զարմացմանէն ’ի քուն լեալ: Եկն հրեշտակ Ա յ. և ասաց. թէ այն իսպահու հայրն այն մարդոյ հօրն հինգ հարիւր սպի տակ պարտէր. նա զիւր պարտքն էառ, և գնաց : Եւ այն մէկայլ մար դոյ հայրն այն զօրականի հայրն սպանեալ էր. նա զիր արիւն

էառ. և նա զիւր պարտքն, զի Քի դա տաստանն ճշմարիտ է աստ և ՚ի հանդերձեալն:

NOTE

Իշխա

EAP180-1-1-8_050R.jpg

NOTE

13

TEXT

Իշխանի միոյ որդին մեռաւ. և բերին զխաչն իվր սպասաւորք խաչին. և յերեաւ որդի իշխանին. զի էին ընտիրք սպասաւորքն այնո քիկ: Եւ եղև զի այլումեմն իշխանի որդի մեռաւ. և բերին զնոյն խաչն իվր՝ և ոչ յարեաւ: Եւ աղաղակէր Հայր մանկանն, և ասէր. թէ խաչս այն խաչն է. և Ած այն Ած է. զի արդ ոչ յարեաւ մեռեալս: Եւ Հրեշտակն երևեալ ասաց. թէ խաչս այն է, և Ած այն է: բեր զայն աջն, որ բռնէ զայս խաչս:

NOTE

ժա

TEXT

Ի բան աւետարանին, որ ասէ. ուր գանձք ձեր են անդ և սիրտք ձեր եղիցին: Մեռաւ ոմն իշխան, որ ունէր բազում գանձս ոսկւոյ և արծաթոյ՝ և յականց. և ոչ ասաց խոստովանահօրն: Եւ ՚ի լուանալն գտին բալանի մի յանթատակն. և տարան առ վարդապետն, և բա ցեալ զսնդուկն տեսին՝ զի սիրտ

NOTE

ժբ բ 3 արիւն

EAP180-1-1-8_051L.jpg

NOTE

14

TEXT

արիւն աթաթախ կայր իվր ընչիցն՝ զի ճշմարտեալ է :

NOTE

ժզ

TEXT

Եղբ այր ոմն գնաց առ Հայրն . և զամենայն յանցանս իւր խոստովանեցաւ. և տեսեալ յանուրջս Հայրն զդատաստան եղեալ. և այրն այն մերկ, և մարմինն ամենայն Հրալից՝ սլաքով ՚ի լի. և յորժամ խոստովանէր հրեշտակն աքցա նով մէկ մէկ քաշէր զսլաքսն . զա մէնն քարշեալ մի ևս այլ մնաց . և զարթեաւ Հայրն, և պատմեաց . և ասաց, թէ այլ մեղք է մնացեալ որ չես ասացեալ. և ասէր այր, օր մի զկոյր մի կատակ արարի. զի ցեխն ՚ի ներս ըղորդեցի, և զցամաքն թողի:

NOTE

ժդ

TEXT

՚Ի պատմութէ ժամանակի ասի, թէ ՚ի դալաթայն այր մի աղքա տացաւ՝ և զարտ մի ունէր վաճա ռեաց. և այր ոմն գնեաց զարտն զայն .

EAP180-1-1-8_051R.jpg

NOTE

15

TEXT

զայն . եգիտ երեք կարաս ոսկի . և յըղարկեաց առ տէր արտին : և ասէր. ե՛կ, առ զոսկին . զի վարե ցից զարտս . և ասաց ոչ է իմ, այլ քո է : և նա ասէր, ես զարտն եմ գնեալ: և վիճէին ընդ միմեանս զքարւոք մարտն . և ձայն եղև ՚ի պալատ թագաւորին, և թագաւ որն, և պատրիարգն, և իշխանք քաղաքին եկին, և տեսին ամենե քեան . և դատաստան արարեալ՝ ետուն զմէկ

կարասն յարքունիս . և զմէկն յեկեղեցիսն և յաղքատս՝ և զմէկն ՚ի պէտս երկոցունցն : և ետուն զնր դուստր ուստեր նր՝ և զարտն պռուքօ . և սիրով միաբանե ցն . և ցանեալ զարտն ցարեան. և ՚ի ժամանակի հնձոցն երթեալ տեսին զի մարգարիտ էր պտղաբերեալ. և քաղեցին տրցակ մի . և տարեալ ՚ի կոստադիանուպօլիս եդին ՚ի յարկ թագաւորին վե յիշելոյ : և գտեալ զայն յայլում ժամանակի

NOTE

բ 4 և

EAP180-1-1-8_052L.jpg

NOTE

16

TEXT

և խնդիր արարեալ գտին ծեր զմի պատմեալ զամ՝ միըստմիոջէ . և փառս ետուն ած :

NOTE

ժԵ

TEXT

Թագաւոր ոմն մեռաւ . և մնաց երեք որդի.և պատուական ակն մի.որ դիմաց թագաւորութեն էր : Եւ անդարձ արար . թէ վիճակաւ յով անկանի ակն , զթագաւորուին այն որդին վայելէ : Եւ գողացեալ կրսեր որդին պահեաց:Եւ յորժամ՝ թաղեցին զթագաւորն՝ ոչ գտին զակն,և ոչինչ հնարիւք:Եւ ասեն իշ խանքն, թէ յայս անուն աշխարհ թա գաւոր մի կայ իմաստսէր՝ նա պիտի գտանէ զակն : Եւ երեք եղբարքն գնացին յաշխարհն յայն . և Հանդի պեալ՚ի ճանապարհին թագաւորի ըղտապանին : Եւ ասաց ըղտպանն. թէ չէք տեսեալ զուղտ թագաւ րին՝ զի կորուսեալ է . ասցին, թէ երթ ընդ ճանապարհդ պիտի գտա նես :

և իմացեալ զպատճառս նց : Եւ

EAP180-1-1-8_052R.jpg

NOTE

17

TEXT

Եւ նք ասացին թէ ուղտն քո կաղ է : Եւ մէկ եղբայրն ասաց, թէ միա կանի է ուղտն: Եւ միւսն ասաց. մի դիհի ատամունքն խոռ են: Եւ զար մացաւ ըղտպանն, թէ զուղտն չէք տեսեալ: Եւ զիարդ զարատն զի տէք: Եւ նք ասացին . թէ ՚ի ճանա պարհին կաղ ոտն Հետ ոչ էր արա րեալ: Եւ ՚ի մէկ կողմն էր արածել. և այն դիհն որ ատամունքն խոռէին լեալ զխոտն չէր Հաւասար կտրեալ. և Հիացաւ ըղտպանն ընդ իմաստու թինց: Եւ գտեալ զուղտն գնաց ՚ի քաղաքն, և պատմեաց թագաւորին զիմաստութի նց: Եւ եկին որդիք թագաւորին ՚ի քաղաքն. և թագաւ որ քաղաքին ուղարկեաց նց զուլ մի խորոված, և գինի՝ և խապզի Հաց: Եւ նց տեսեալ՝ մին եղբայրն ասաց թէ ուլս շուն է ծծել: Եւ մէկ եղ բայրն ասաց . թէ թագաւորն ձեր խապզի որդի է եղեալ: Եւ միւսն թէ ՚ի գինիս մարդոյ արիւն կայ: և

NOTE

Բ 5 եր

EAP180-1-1-8_053L.jpg

NOTE

18

TEXT

երթեալ պատմեցին թագաւորին. և նա զարմացաւ յոյժ : Եւ յետոյ Հարցեալ. թէ զիարդ գիտացիք • և նոքա ասացին թէ շան միսն կծկտի երբ խորովեն: և մարդոյ արեան փրփուրն սպիտակ լինի: և Հացն ՚ի խապզէն էր: Եւ թագաւորն Հիացեալ կոչեաց զՀովիւն. էհարց զպատճառն . և նա ասաց թէ ուլն այն, մեռեալէր մայրն,

սովորեալ ծծէր զքած շուն մի. և Հարցեալ զայգէպանն. և ասաց. ՚ի կիթ այ գույն կորեալ դանակմի՝ անկաւ ՚ի խաղողն. և ՚ի կոխելն կտրեաց զոտն կոխողին, և արիւնն խառ նեցաւ ՚ի գինին. և մայր թագաւո րին ասէ . թէ քո Հօր ժամանակն յամ օր խապազն Հաց կուբերէր. և անկայ ընդ նմա ՚ի պոռնկութի, և դու ՚ի նմանէ ծնար: Եւ թա գաւորն բերեալ վաղիւն զերիս եղբարսն. և նոքա ասացին զիւ րեանց գանգատն: Եւ ասաց թա գաւ

EAP180-1-1-8_053R.jpg

NOTE

19

TEXT

գաւորն թէ աղջիկ մի խօսեցեալ երիտասարդի միոյ նշանեալ՝ և հար սանեացն զամ ինչ պատրաստեալ մինչ ՚ի պսակն : Եւ այր ոմն երիտա սարդ բռնութբ խլեաց զաղջիկն՝ և տարեալ պսակեցաւ : և արար Հարսանիս, և մտին յառագաստն. և ոչ մերձեցաւ ՚ի նա. և ետ տանիլ առաջնոյ առն իւրոյ ոսկւով՝ և մար գարտով՝ և ամիւ զարդարեալ: և ոչինչ էառ ՚ի նմանէ : Եւ ոք ՚ի նո ցանէ թուի ձեզ ինսէֆով . և ասաց մեծ եղբայրն, թէ առաջինն . զի ասաց թէ նր խսմաթէր. և ոչ ՚ի Հետ գնաց : Եւ ասաց միջնեկն, թէ ոչ . այլ յետին էր ինսէֆով . զի կա րողացաւ մինչ ՚ի պսակն, և յառա գաստին ոչ մերձեցաւ ՚ի նա : Իսկ յետին եղբայրն ասաց թէ առաւել այն է զարմանալի՝ որ զոչինչ էառ ամենևին յոսկւոյ կամ յարծաթոյ կամ յականց : Եւ ասաց թագաւորն թէ զակն դու ունիս: և գնա տուր ՚ի

EAP180-1-1-8_054L.jpg

NOTE

20

TEXT

՚ի տէրն. իբրև լուան գնացին խա ղաղութբ՚ի տունս իւրեանց:

NOTE

ժզ

TEXT

Աղէկսանդր յամ տեղիս ինքն եր թայր էլչի: Օր մի գնաց՚ի պօպ լիոս թագաւորն՚ի մօտ. և նա ետ ղութ թասովն պախ ետ նմա . նա խմեաց զգինին, և զպախն՚ի ծոցն եդ. ասաց թէ էր արարեր՝ ասաց թէ իմ թագաւորի սահմանքն Հանց է. և պօպլիոս Հնազանդե ցաւ. և քոյր պօպլիոսի իմաստա սէր էր. ճանաչեաց զԱղէկսանդր՝ և ասաց, թէ արի, փախիր. թէ չէ յայս պահս կու բռնեն. և նա Հե ծաւ՚ի ցլազլուխ ձին, և փախեաւ :

NOTE

ժէ

TEXT

Յորժամ մեռանէր աղէկսանդր. անդարձ արար թէ զիս յիմ տունն տարէք, և յիմ ճնիժին յառ ջնն, Հազար մարդ ոսկի սինիով ակն և մարգարիտ առէք. և Հազար մարդ մերկ և չուլ Հագուցէք. և Հա

EAP180-1-1-8_054R.jpg

NOTE

21

TEXT

Հազար ձի զագին և զբաշն կտրե ցէք. և քէշ և բէլիկ կապեցէք. և բռումբ՝ և աղէղունք.և հարիւրհա զար սրտւոր յառաջ յղարկեցէք. նոյնպէս արարեալ տարան: Եւ տե սեալ կնոջն և մօրն ոչ արարին սուգ. իշխանացն հարցեալ թէ ըն դէր ոչ արարիք սուգ: Ասաց մայրն, թէ իմ որդին պատուիրել է՝ թէ ճար կայր՚ի մահուն փրկիլ. ես զայս ամէնս իղէմ յղարկեցի. և ոչ մռեց մահն, և սուգն պիտի մռէ: Աղէկսանդր հանդիպեցաւ յեզր աշխարհիս. եգիտ իմաստա սէրս յաշխարհէս փախուցեալս մերկ. և կերակուր

նոցա էր կաթն երինձ: Եւ ասաց թագաւորն աղէքսանդր՝ եկէք ընդ իս, և տամ ձեզ բազում ինչս. և ասացին իմաս տասէրքն. թէ մէկ խնդիր ունիմք. թէ զայն կարես տալ մեք հետ քեզ կուգամք: Ասէ թագաւորն զինչ: նոքա

NOTE

ժը

EAP180-1-1-8_055L.jpg

NOTE

22

TEXT

նոքա ասեն, թէ անմահութի կարես տալ: ասաց թագաւորն զայրա ցեալ՝ ոչ էք իմաստասէրք. ես մարդ եմ մահկանացու. զիարդ տամ զան մահութի: Մարդ զոր ունի զայն կարէ տալ. զոր չունի զի արդ կարէ տալ: Եւ ասացին իմաստասէրքն. թէ յիրաւի գիտես որ մահկանա ցու ես. և զիարդ զաշխարհս կու աւերես: Եւ ասէ թագաւորն ես չեմ աւերել: Ած ետես որ ամ մարդ ՚ի ճանապարհէ ելաւ. չար և վատ չկայր. նա զիս ՚ի ձեռն էառ Ած՝ և զաշխարհս ինև կու խրատէ. որ ՚ի ճանապարհ գան. և հաւա նեալ իմաստասիրացն լռեցին:

NOTE

ժԹ

TEXT

Հանդիպեալ աղէկսանդր յեզր տեղի մի հեծելովն՝ և բերեալ նուռն մի կոտորեցին, և ելից զթափ սին. և կտրէին զնուռն օրթուն. և կուժն լցաւ զինւով: Եւ իմա ցեալ աղէկսանդր. հարցաւ՝ թէ ում

EAP180-1-1-8_055R.jpg

NOTE

23

TEXT

ում է այս տեղս. և ասացին աղէկ սանդրի: Եւ խորհեցաւ չարիս առ նել. և բարին այն խափանեցաւ. և չորսհինգ նուռն զթափսին այլ չէր լնուլ. և այլ՚ի նռնէն կուժն չէր լցվիլ: Եւ ասացին թէ մեր թա գաւորին սիրտն ծռելէ հետ մեզ: Աղէկսանդր բազում զօրօք իջեալ ՚ի կղզի մի ծովուն ամենէքեան կրակ վառեցին: Եւ սկսաւ կղզին ՚ի շարժիլ. և իմացեալ՚ի նաւ մը տին . զի կրիա էր: Օ ի ասեն իմաս տասէրքն. թէ յաշխարհս երեք կենդանի կայ . որքանն շատ ապրի մեծանայ՝ մէկ կրիայն. մէկ օձն. մէկ ձուկն՝ որ վիշապ լինի: Աղէկսանդր բազում զօրօք պա տահեցաւ ՚ի տեղի մի, և եղև ձիւն մեծ : և սկսան զօրքն՚ի սովու կոտորիլ:Եւ ասաց թագաւորն.թէ այժմ զայժմուս զվաղիւն պարտէ հոգալ. յորժամ յաստից ազատիմք

NOTE

Ի զայլ

EAP180-1-1-8_056L.jpg

NOTE

24

TEXT

զայլ վաղիւն Հոգամք : կոտորեցէք զձիանդ, և կերէք: Ոմանք ասեն թէ մահումէտն է ասացել՝ վասն այնո րիկ զձիու միսն կուտէ մսլման ազգն :

NOTE

խա

TEXT

Այր մի ըմբռնեցին վս գողութե. երկու շաբաթ խիստ չարչարե ցին ոչ ՚ի խոստ երեկ: Եւ յորժամ զիւր զաւակն կախեցին, և մէկ փայտ զարկին. և գոչեաց Հայրն և ՚ի խոստ եկն զգողուին : Եւ

ասացին, թէ եր կու շաբաթ զքեզ չարչարեցինք . և դու ոչ ասացեր . և վս մէկ փայտի զաւակի քոյ վաղվաղակի ասացեր: Եւ նա ասաց՝ թէ իմ մարմինս յիմ ծնողացն էր, ոչ ցաւէր՝ ոպ յոր ժամ զիմ որդին ծեծէին: Մարմին նորա յիմ յաղեացս էր՝ խարշեցաւ աղիքս՝ և ասացի: Եւ գութ ծնո ղացն և Այ Համեմատք են . զի յոր ժամ ծնօղն զզաւակն ծնանի: թէ գութն չէր, յորժամ մէկ ծնօղ ծնա նէր,

NOTE

2 բ

EAP180-1-1-8_056R.jpg

NOTE

25

TEXT

նէր, այլ ոչ ծնանէր . և ոչ հոգայր հեշտութեն, ա՛խ, աւաղ ես: Մարդ մի գերեզմանակտը. օրմի զխաթուն մի թաղեցին շատ ըն չիւք: և ՚ի գիշերին եբաց զգերեզ մանն, և մերկացոյց մինչ ՚ի ներքին հանդերձն: Եւ կինն ափցէ յերեսն էզարկ, և ասաց: Թէ եօթն տղայի մայր եմ, և զարնն յերդիքն իվեր եմ տեսեալ: Եւ դու չես վախել յԱ յ. որ զիս հրապարակ կառնես: Եւ ասաց՝ թէ աղքատ եմ. և ապրոնք չունիմ: Եւ ասաց՝ թէ հետ ինձ զե ըեզման մի կայ՝ երեք գանգ կայ՝ առ և տարեալ ծախէ, և քեզ ապրոնք արա: տարաւ ՚ի ծախել: Եւ առեալ սառաֆն շինեաց ոսկի շիշ՝ և էած ՚ի մէկին ականջն, նա ՚ի մէկայլ ականջն ՚ի դուրս ելաւ: Եւ մէկ ալին էած գնաց մինչև ՚ի կէսն: Եւ ՚ի մէկայլն էած ամէնևին ոչ մտաւ: և զայն այլ իբացընկէց: Եւ ասաց

NOTE

լբ 3 գ ինք

EAP180-1-1-8_057L.jpg

NOTE

26

TEXT

ինչ գին կուզես. և մէկին տասնՀա րիւր դրամ երետ: և ասաց զխաս լիաթն: Թէ այն որ շիշն'ի մէկալ դիէն ելաւ. ամեննին բանն յա կանջն չէ պահել. 'ի մէկ դիէն'ի ներս է մտել. 'ի մէկայլն'ի դուրս ելեր: Եւ մէկալն ամեննին բանի տեղիք չէ տուել: Եւ այս մէկալիս գին չկայ. զինչ բարի բան լսեր է զամէնն պահեր է. և այս զանգս ամէն ցաւոց դեղ է:

NOTE

Խզ

TEXT

Յաշխարհիս Հինգ բն'ի մարդկա նէ անգիտելի է: Մէկ որ մարդ զմարդոյ խորհուրդն չի գիտել. և ոչ հրեշտակք, և ոչ դևք: Երկու որ յաւուրս 'ի վաղն չգիտեմք թէ ինչ պիտի լինի: Երէք որ զինչ որ սկսնումք չգիտեմք թէ յինչ իրք պիտի աւարտի'ի բարի թէ'ի չար: Չորս որ մահու օրն անգիտելի է: Հինգ զկատարածի օրն չգիտեմք: Երէք իրք որ զմարդն'ի չարէն 'ի

NOTE

շատ

EAP180-1-1-8_057R.jpg

NOTE

27

TEXT

զատ կուպահէ.խիղճմտացն՝ և երե սին ջուրն. և բնական խելքն . իբրև զառաջնորդ և ղլաուզ է: Թագաւոր մի յիւր խազինան հա զար ակն ունէր պատուական: և մէկն առաւել պատուական էր: Եւ ունէր միամիտ խազնադար մի. և օր մի խազինադարն զայն ակն փո խեց. և թագաւորն եկեալ տեսա նել զակներն. և ետես՝

որ մէկ ակն փոխած էր. և զխազինադարն բա զում ժամանակ չարչարեաց. և ՚ի խոստ ոչ եկաւ . և չէր դիմիշ առ նել որ սպաննէր:և ոչ զակին թարկն տալ կարէր : և իմաստասէր մի ասաց՝ ես առնում զակն . և տարաւ յանգէտ մարդոյ իմօտ զնդան ձգեց. և հարցաւ անգէտն զպատ ճառն: և ասաց: Եւ նա ասաց,թէ քարին համար ինչու զնդան ես մտել: և ձանձրացաւ, և ետ զակն ՚ի խօջայ մի: Աղքատացաւ, ոչ

NOTE

Խդ դ 2. արու

EAP180-1-1-8_058L.jpg

NOTE

28

TEXT

արուեստ գիտէր, և ոչ կարէր մու րալ: գնաց ՚ի խօջայի մի մօտ, և ասաց. թէ հազար ստակ ՚ի փոխ տուր. նա չէ րետ. նայեց որ չերետ: ՙՆա գնաց ՚ի դատին. և ասաց թէ այս անուն խօճայ՝ տասնհազար ըս տակ պարտի ինձ. ոչ թուխթ ունիմ և ոչ վկայ: բեր որ դըստեմ. ղրկեց, և եբեր: Եւ ասաց, թէ երեսին ջրի գինն զինչ է: Ասաց դադին. տասն հազար ստակ. ասաց թէ երեք տար պայ զիմ երեսին ջուրն ձգելեմ. և ասաց դադին, թէ տուր տասնհա զար ըստակ:

NOTE

ԻԵ

TEXT

Մարդոյ մի բազրկանի զբեռներն տարան, և աղքատացաւ. և դոնէ իդուռն կու մուրայր. և սովորեցաւ ՚ի յայն: Օր մի ՚ի տեղ մի օթեցաւ. և զօմէշ մի քենով զիւ րեն ժողոված հացիկն կերաւ, և ելաւ զզօմէշն ջլատեց: Եւ ելեալ վաղջնէն տեսին, և բռնեցին ըզ

մար

EAP180-1-1-8_058R.jpg

NOTE

29

TEXT

մարդիկքն.թէ ով արել է: և եկեալ աղքատն ասաց, թէ եսեմ արել. և ասաց զիւրեն աղքատութե պատ ճառն. և ասաց՝ թէ յորժամ մու րացած Հացն ՚ի փորն մտաւ այլ ՚ի տուն չի պիտէր կենար. և Հալալ վաստակ առնէր. ոպ որ ես յիմ տունն չգնացի : Մարդ մի յէէմ կերթյր. և հրիւր ֆլօրի մարդոյ մի մօտ ամանաթ եդ և գնաց: Երբ եկ՝ ասաց տուր զիմ ամանաթն՝ նա ուրացաւ թէ տուեալ եմ. և տարաւ յեր դումն: և զֆլօրին ՚ի գաւազանին մէջն էր դրել. և ետ զգաւա զանն ՚ի ֆլօրուն տէրն. և եդ զձեռն իվր մեծ խաչին, և երդուաւ՝ և ոչ ինչ նշան եղև: Եւ տրտմեցաւ այրն՝ և ՚ի քուն եղև. և տեսաւ յե րազի. զի ասաց փոքր խաչն ՚ի մեծն՝ թէ յէր ոչ պատուհասեցեր. և ասաց մեծ խաչն թէ Այ դատաստանին

NOTE

իզ գ 3 եմ

EAP180-1-1-8_059L.jpg

NOTE

30

TEXT

եմ թողեր: Եւ ասաց փոքր խաչն, թէ ինչ Այ դատաստան է, այն մարդն կու թերահաւատի . և զար թեաւ՝ և ուրախացաւ: Եւ ասաց թէ արեկ՚ի փոքր խաչն երդումը: Եւ եկեալ եդ զձեռն իվր փոքր խա չին, և փակեցաւ ՚ի ձեռն. և իբրև զհուր վառեցաւ, և կանչեց թէ Հանդ ֆլօրին՚ի գաւազանիս մէջն է : էառ, և ուրախացաւ:

NOTE

ԻԷ

TEXT

Թագաւոր մի իվր իւրոյ աշխար հին’ի ժուռ գայր,և տեսանէր. և եկն’ի քաղաքի մի եզեր: Եւ ահա տասն այր և կին, ունէին զհաց, և զկաթն,և զգինի. և թողեալ զանոյշ կաթն, և զգինին, և զհացն . և զաղբն ուտէին. և զգողն խմէին: և Թագաւորն ետես իւրեանց ան մտութին՝ և բարկացաւ . հրամայ եաց թէ սպանէք զդոսա, և սպա նին: Ցուցանէ : Թագաւորն Ած է . և այնք որք զկաթն, և զգինին, և

EAP180-1-1-8_059R.jpg

NOTE

31

TEXT

և զհացն թողեալ էին . զաղբն ու տէին, և զգոջն խմէին: ‘Նոքա են. որք թողուն զսուրբ պսակն . և զսբ ամուսնութին. և երթան պոռն կին, և շնան: Եւ ամենայն որ թո ղու զիւր սբ ամուսնութին . և զպա տուական անկողինն . և երթայ յայլ կին. որ ոչէ իւրն: ‘Նոքա զերդ զայն տասն այրն և կինն են. որք զաղբն ուտէին. և զգոջն խմէին: Եւ թագաւորն Ած է . որ յաւուր դատաստանին զպոռնիկն և զշնա ցօղն, ընդ մարդասպանսն, և ընդ ա_ րիւնահեղսն տանջէ, թէ ոչ դառ նան և ապաշխարեն: Ոպ ասէ Պօղոս. զշուն և զպոռնիկս դատէ Ած: Թագաւոր մի զբարձր և զուղորդ զսիւն մի կանգնեաց. և մարգա րիտ մի զեղեցիկ և մեծագին իվր սեանն եդ.և ասէ, թէ մարդ որ ընդ այս սիւնս ’ի վեր ելանէ և առնու զմարգարիտն . ես տամ նմա զմար

NOTE

Խը դա դ 4

EAP180-1-1-8_060L.jpg

NOTE

32

TEXT

գարիտն: Եւ ժողովեցան բազում մարդիկ, և ոչ կարէին ելանել ընդ սիւնն ՚ի վեր: Եւ եկն այր մի և խած զսրունսն, և զանդամն, և զձեռսն . և զբազուկսն, և պատառեաց՝ և ա րիւնն հեղաւ. և խածատած տեղին եղև զերդ սանդուխտ . և ձգեալ զձեռն գրկեաց զսիւնն, և ել. և էառ զմարգարիտն . Թագաւորն գովեաց զայրն, և ետ նմա զմարգա րիտն : Ցուցանէ : Թագաւորն Աժ է. և այն սիւնն զոր կանգնեաց մարդ կան, է պատուիրանն Այ. զի մար դիկ սակաւ պահեն զօրէնսն . ոպ մարդիկքն այնոքիկ՝ որք ոչ կարէին ելանել ը սիւնն : Եւ մարգարիտն այն է, զի Աժ պարգև խոստացաւ մարդկան . որ և բազումք ցանկան գտանել զմարգարիտն զայն, և ոչ կարեն : Բայց նոքա առնուն զմար գարիտն . որք զիւրեանց մարմինն սպանին վասն արքայութեն Այ. Մարտիրոսքն, և արդարքն, որք հե դին

EAP180-1-1-8_060R.jpg

NOTE

33

TEXT

դին զարիւնս իւրեանց վե Տն. ոպ այրն այն որ բազում նեղութբ ել ընդ սիւնն, և էառ զմարգարիտն և զանանց բարին : Թագաւոր մի ունէր գեղեցիկ այգի . և յեզերն խոր խանդակ. և փայտիւ և տախտակով կամուրջ իվր ձգած . բայց ՚ի գիշերն քար շէին զկամուրջն: Եւ որ ՚ի գիշերն գայր ՚ի վիհն անկանէր. և ով ՚ի ցո րեկն գայր յայգին մտանէր: յգին է րքայութին, և վիհն դժոխք. և կամուրջն բարի գործն. և ցո րեկն այս կեանքս: իսկ գիշերն մահն. ովոր ունի զբարի գործս նա անցանի յարքայութին. և որ ոչ ունի, իջանէ ՚ի դժոխս : Թագաւոր ոմն ետես տեսիլ. զի իբրև զանձրև իջնէր աղուէս: Եւ քարոզ հրամայեաց կարդալ. եթէ ոք զիմս մեկնեսցէ տեսիլ. հա

NOTE

իթ լ դ 5 զար

EAP180-1-1-8_061L.jpg

NOTE

34

TEXT

զար դահեկան տաց նմա. և լու եալ այր ոմն աղքատ: Եւ երթեալ ասաց. եթէ երիս աւուրս տացես ինձ ներումն, յայտնեցից: Եւ եր թեալ շրջէր յանապատի խոկա լով. և վիշապ մի տեսեալ զայր տա րակուսեալ՝ ասաց. զինչ ինձ տա ցես, եթէ զտեսիլ թագաւորին քեզ յայտնեցից: Եւ նա ասէ . զոր ինչ խոստացաւ թագաւորն, քեզ կէսն եղիցի: Եւ ասէ,ե՛րթ, և ասա. թէ ժամանակ է այսուհետև, զի մարդիկք ենգաւորք եղիցին. և խաբեբայք իբրև զաղուէս. և եր թեալ ասաց. և հաճոյ ասացեալն թուեցաւ, զի նման այնմ իսկ էին մարդիկքն . իսկ ետ հազար խոստա ցեալ դահեկանսն. և այրն ստեաց վիշապին, և ոչ դարձաւ անդրէն: Եւ զկնի դարձեալ զայլ ետես տե սիլ. զի իբրև զանձրև իջանէր ոչ խար. և հրամայեաց կոչել զայրն . զի նման առաջնոյն մեկնեսցէ: Եւ

EAP180-1-1-8_061R.jpg

NOTE

35

TEXT

Եւ նր զնոյն խնդրեալ ներումն . և ամաչէր իբրև զապերախտ. և եր թեալ առ վիշապն զանձն պար տաւորելով. ասաց՝ մեղայ քեզ. յայտնեա զերկրորդս. և մեկնեաց նմա ոչ յիշելով զյանցումն: Եւ ասաց, երթ, և ասա. թէ ժամանակ գայ. և եկեալ է. զի մարդիկք իբրև զոչխար պարզամիտք իցեն. և ե կեալ պատմեաց: Եւ այնմ ևս հաւ անեալ ետ նմա Հազար ևս դահե կան: և առեալ առն

տարաւ վիշա պին. ընդ առաջնոյն, և ընդ վերջ նոյն Հազար դահեկան: () կնի այ նորիկ դարձեալ այլ ևս ետես տեսիլ. և ահա իբրև զանձրև իջանէր սու սեր: Եւ հրամայեաց դարձեալ զայրն կոչել՝ զի զայն ևս մեկնեսցէ . և առն զնոյն խնդրեալ ժամա նակ. և երթեալ առ վիշապն . և նա առ ժամայն մեկնեալ իբրև բարե կամի: Երթ, և ասա թէ ժամանա կէ . զի մարդիկք յարիցեն բռնաւ որք

EAP180-1-1-8_062L.jpg

NOTE

36

TEXT

որք՝ և սուսերաւորք: Եւ զայս ու սեալ առն ասաց . ընդէր այժմ թո ղից վիշապիս վեցհազար դահե կանս. և կամ հինգհարիւր այլ ևս բերից: Հարից զվիշապս, և սա տակեցից: և ջանաց հարկանել զվի շապն՝ և ոչ յաջողեցաւ նմա . զի խոյս ետ՚ինմանէ վիշապն: Եւ առն զղջացեալ խորհէր թէ չարիս գոր ծեցի. զի թէ այլևս հարկ հասանի ցէ . ով եկից առ սա: Եւ տեսեալ վիշապն զայրն ստրջացեալ ասաց նմա . այր դու մի տրտմիր . զի յանձ նէ ինչ ոչ արարեր. այլ՚ի բերմանէ ժամանակի: () ի ստելն քո՚ի կեղ ծաւորաց ժամանակն է . և զղջա նալն, և տալն զհազար դահեկանն ՚ի միամտաց ժամանակն: և կամիլն սպանանել ՚ի բռնաւորաց ժամա նակն: Ո՛չ այլ ինչ առակս ցուցանէ. բայց զժամանակին գիտել զմար դիկք. և զգուշանալ յանձանց . զի զզանազան բերէ ժամանակս զմարդ.

EAP180-1-1-8_062R.jpg

NOTE

37

TEXT

զմարդ . և երբեմն նենգաւորս . և երբեմն պարզամիտս. և երբեմն բռնակալս . և նման այսորիկ այլս բազումս : Թագաւոր մի կայր՝ և չունէր ժա ռանգ աթոռոյն իւրոյ.ոչ դուս տրը՝ և ո՛չ որդի. բայց քրոջ որդի մի միայն ունէր: Եւ կամեցաւ զնա թագաւորեցուցանել. և ժառանգ առնել աթոռոյն իւրոյ: Եւ թա գաւորն զնա յոյժ սիրէր . զի էր իմ աստուն մանուկն այն՝ և կարի աղօ թասէր. և չարացաւ ընդ նմա մեծ նայիպ մի : Հնարս իմացաւ, թէ ով չարախօսեսցէ զքրոջ որդին առ թագաւորն . զի ինքն կալցէ զթա գաւորութի նր յետ թագաւորին : Եւ յաւուր միում ասէ ընդ քրոջ որդւոյ թագաւորին. թէ բերան քո Հոտեալ է, և դու ոչ գիտես. եր թաս, և նստիս առ թագաւորն . և զէշ Հոտերթայ առ թագաւորն :

NOTE

շա և

EAP180-1-1-8_063L.jpg

NOTE

38

TEXT

և նա բարկանայ քեզ. և քուրոջ որ դին ասէ՝ ապա զինչ առնեմ: 1 սէ նայիսլն, թէ յորժամ նստիս զե րեսդ յայլ դիհ արա.և նա ասէ այո: 1 րթայ նայիսլն առ թագաւորն . և չարախօսէ՝ և ասէ . թէ քուրոջ որդիդ քեզ չար կու խորհի: յւ նա ասէ . զինչ գիտես. և նայիսլն ասէ . թէ յորժամ հետ քեզ նստի, զերեսն յայլ դիհ պիտի դարձնէ . զի կամի զքո թագաւութիդ առ նուլ՝ մինչ դեռ կենդանի ես: յւ թագաւորն ըստ իւրում՝ սովորու թեն կոչեաց քուրոջ զորդին առ ինքն, և նա ոչ գնաց վն բերանոյ Հո տոյն՝ զոր ասաց նայիսլն: յւ իբրև ստիպեաց, գնացեալ նստաւ առ թագաւորն . և զերեսն յայլ դիհ ա րար: յւ թագաւորն երկմիտ եղև՝ և կամէր սպանանել զքուրոջ որ դին . և յայտնի ոչ կարէր, զի քու րոջ որդի

էր: այլ գիր ուղար կեաց նովաւ առ վերակացու երկա թի

EAP180-1-1-8_063R.jpg

NOTE

39

TEXT

թիքանին. և գիրն այս էր գրեալ: Թէ առաջին մարդն՝ որ առ ձեզ գայ՝ ՚ի կրակն ձգեցէք, որ այրի. և թէ ասէ՝ թէ ես թագաւորին քրոջ որդի եմ՝ կամ նայիսպն. մի լսէք. ՚ի կրակն արկէք՝ որ այրի: Եւ յուղարկեցին զքրոջ որդի թագաւ որին յերկաթի քանն՝ զի արկցեն ՚ի քուրայն որ այրի: Եւ յորժամ էհաս երեկոյին ժամն. իմէջ լե րինն անմարդաբնակ տեղի լսեց զձայն ժամահարի. և ասաց ՚ի միտս իւր՝ թէ Ած թագաւորաց թա գաւոր է. զԱյ հրամանն պարտէ կատարել յառաջ, ապայ զիմ քե ռուն: Եւ գնացեալ եկաց յաղօթս և եկաց գիշերն անդ. և աղօթեաց առ Ած: Եւ ելեալ չարախօս նայ իպն ՚ի ձի գնաց յերկաթի քանին դուռն. թէ ոչ է ձգած՝ ինքն տայ ձգել: Յայնժամ առին զինքն և արկին ՚ի կրակն: Եւ յորժամ լու սացաւ եկն քուրոջ որդի թագաւո րին

EAP180-1-1-8_064L.jpg

NOTE

40

TEXT

րին. և տեսեալ զեղեալ գործն զարմացաւ ՚ի սքանչելիսն Այ. զի աղօթք են իւր պահապան: Ցուցա նէ առակս: Թէ աղօթիւք ազա տի մարդ յամ չարէ. ող երեք մանկունքն իմէջ հնոցին. և Դա նիէլ յառիւծուցն. և Երեմիայ իմէջ տղմին. և սբն Գրիգոր ՚ի խոր վիրապին իմէջ թունաւոր յօ ձիցն: Եւ ինչ աղօթ արար կայ. իւր աղօթքն զինքն արժանի Այ առ նէ. և յամ փորձանաց պահէ Քն Ած մեր ամէն:

NOTE

Հբ

TEXT

Թագաւոր մի անիրաւութի առ նէր. և ունէր զորդի մի բարի. որ ասէր, և խրատէր զհայրն թէ զանիրաւութի մի առնէր. և նա ոչ լսէր որդւոյ իւրոյ: Եւ որդին ասէր թէ չերկնչիս դու յԱյ զա նիրաւ դատաստան առնելով. զի աւետարանն հրամայէ վասն թա զաւորաց. թէ որով դատաստա նաւ

NOTE

3 զ

EAP180-1-1-8_064R.jpg

NOTE

41

TEXT

նաւ դատէք դատելոցէք. և ամ Աճաշունչ գիրք զայս ասեն: Եւ յաւուր միում՝ բարկացաւ, և աք սորեաց զորդին իւր՝ և զկին որ դւոյ իւրոյ զնալ յօտար աշխարհ : Եւ առեալ որդի թագաւորին ըզ կինն իւր՝ և գնաց ոչինչ ունելով զհետ իւր: Եւ երթայր ՚ի քաղաք մի. և ետես զնա ումն իմաստասէր. զի գեղեցիկ էր տեսլեամբ. և ասէ ՚ի միտս իւր : սա կամ թագաւոր է, կամ թագաւորի որդի: Եւ գնաց յառաջ՝ և մեծարեաց ՚ի տուն իւր . և ասէ: Ուստի գաս, և կամ յո՞ երթաս. և նա զիրաւն ասաց: Եւ տուեալ նմա դարպաս մի մեծ զի կացցէ անդ՝ մինչև հայրն խնդիր ա_ րասցէ . և զի ոչինչ ունէր որդի թա գաւորին, զի զպէտս տանն գնէր. զի կարի դատարկէր: Եւ ելեալ գնաց ՚ի մշականոցն՝ զի կալցեն զնա ՚ի վարձու՝ և ոչ կալան զնա: Եւ նա գնաց ՚ի հանգուցեալ եկեղեցին.

NOTE

4 դ և

EAP180-1-1-8_065L.jpg

NOTE

42

TEXT

և անդ աղօթեաց մինչև յերեկոյ, և գնաց դատարկ’ի տուն իւր: Եւ ասէ կինն, թէ ուստի գաս. զի այնպ գիտէր թէ կերակուր ունէր: Եւ ասաց որդի թագաւորին. թէ այն մարդն, որ զիս’ի վարձու տարաւ. նա ասաց թէ վաղն եկ բանեց՝ որ եր կու աւուր վրձն մէկ տարպայ տամ: Եւ ասաց կինն բարի է: Եւ գնաց վաղիւն,և ոչ կալան զնա’ի վարձու. և նա գնաց յեկեղեցին, այն և աղօ թեաց մինչև երեկոյ. և գնաց դա տարկ’ի տուն: Եւ Համարէր կին նր թէ կերակուր ունէր՝ զի երկու օր էր որ անօթի էր: Եւ ասաց այրն դար ձեալ՝ թէ այն մարդն որ զիս’ի վար ձու կալաւ. նա ասաց թէ վաղն այլ եկ բնեց.և առ երեք աւուր վարձն, և գնա: Եւ կինն ասաց թէ բարի է. և գնաց վաղուեան օրն՝ և ոչ կա լան զնա’ի վարձու. Եւ նա գնաց յեկեղեցին, և աղօթեաց. և յոր ժամ ճաշք եղև եկեալ լուսակերպ այր

EAP180-1-1-8_065R.jpg

NOTE

43

TEXT

այր մի, որ էր եկեղեցին այն . և բե րեալ ետ երեք ակն պատուական և գեղեցիկ՝ երից աւուրց վարձն, և ետ ’ի կինն : Եւ ասաց լուսաւոր այրն . թէ զմէկն ծախէ, և զտան պետն տես, ասաց որդի թագաւո րին: Եւ երկուքն պահէ. զի ա_ մէն ակն երկու հարիւր դահեկան ածէ, որ է կարմիր . և արար նոյն պէս՝ զոր պատուիրեաց լուսակերպ այրն . և յորժամ եկն որդի թա գաւորին. ետես, զի կինն երկու ակն ետ ինքն: Եւ ասաց որդի թա գաւորին. այս ինչ է: Եւ նա ասէ, դու ուղարկեալ էիր զլուսաւոր

այր մի: Եւ ունէր զերիս ակունս զե րից աւուրց վարձն. և զոր պատուի րեալ էիր դու ինձ զայն արարի, նոյնպէս եղև: Յայնժամ գիտաց որդի թագաւորին զքանչելին. և ետ փառս Ա յ: Ցուցանէ առակս. Թէ որ ածակոյս կողմանէ լինի և համբերէ . նա ած ոչ թողու զնա.

NOTE

դ 2 ոպ

EAP180-1-1-8_066L.jpg

NOTE

44

TEXT

ոպ զաբրահամ. և զիսահակ. և զյակօբ և զամ սբս. որք համբե րեցին վասն անուան Տն և պսակե ցան յԱյ. նոյնպէս և ամ մարդ:

NOTE

ԼԴ

TEXT

Ագռաւաւ մի պանիր ունէր ՚ի բերանն, և նստէր ՚ի բարձրաւ անդակ տեղւոջ: Իսկ աղուէսն փորձ առնոյր ՚ի նմանէ հանել զպա նիրն: Եւ մատուցեալ մօտ անդր և զակն ՚ի նա հարեալ. երանի տայր բնութեն. զի սևաթոյր գունով և գիշերոյ մանուկ. և վայելէ քեզ ծաղկիլ ՚ի գունոյդ: Այլ և զօրու թիդ քո ՚ի քեզ. որչափ ոչ այլում բայցև իմաստութիդ. և ոչինչ ևս արգել ունէր զթագաւորութի. զարծուով զանց արարեալ ամե նևին: Եւ թագաւոր հաւուց եթէ ձայն գոյր, և ոչ ամենևին կարօտ գտեալէիր յիրիդ: Դրդուեցաւ ՚ի գովութէն ագռաւն. և զմեծա ձայնութի ցուցանել կամեցեալ. եբաց

EAP180-1-1-8_066R.jpg

NOTE

45

TEXT

եբաց զբերանն, և գոչեաց յոյժ մեծ. և պանիրն 'ի վայր անկեալ որս լինէր աղուէսուն: Եւ նա առ լցեալ կերակրովն . ձայն քո 'ի քեզ սաէ, կարի քաջ ով ագռաւ . բայց 'ի մտաց պակաս ես: Օ այս առաս պելս գիտելով. մի երբէք պատրի ցիս 'ի սուտակասպաս գովութէ: Ասի յառակաց. արծուին և կա քաւն խիստ չարկամացան և ար ծուին անդադար նեղէր զկաքաւն. և անհանգիստ պահէր: Գնաց կա քաւն և եբեր իւրն բարեխօս որ չափ թռչունք կայր առ արծուին. և նա չէառ յանձն՝ և ոչ հաշտեցաւ հետ կաքաւուն. կաքաւն նստեալ կայր. լայր, և հանէր արտասուս պըղ տոր: Եկն բզէզն . և ասաց կաքաւն զիւր զանգատն. և էառ տարաւ զբզէզն առ արծուին բարեխօս: Եւ արծուին ոչ լուաւ աղաչանաց բզէզին. զայնեցաւ բզէզն. և ոխա ցաւ

NOTE

ԼԴ Դ 3

EAP180-1-1-8_067L.jpg

NOTE

46

TEXT

ցաւ Հետ արծուոյն . քանի արծու ին զձուն Հանէր . երթեալ բզէզն ելանէր 'ի բոյն արծուոյն . և դը րէր և ձգէր 'ի վայր զձուն . և կոտո րէր: Եւ բազում ժամանակս անոր դի առնէր զարծուին. Եւ գնա ցեալ արծուին էած զձուն իւր 'ի գոգ թագաւորին.և իմացեալ բզէզն եմուտ իմէջ ոտից նր.և էխած զծայր երանաց նր . և նա իվեր վազեաց . և ընկեցեալ բեկաւ ձուն: Ցուցանէ: Որ թէ Հնար իցէ բնաւ մի առնէր քեզ թշնամի զոք 'ի մարդկանէ . թէ պէտ և աղքատ և տկար լինի :

NOTE

լե

TEXT

Որսորդ մի կալաւ զկաքաւ մի, և կամէր զենուլ. և ասէ կա քաւն մի սպանաներ զիս . զի ես խա բեցից զբազում կաքաւս , և առից յակնատս քո : Եւ ասէ որսորդն . և այժ ստուգիւ մեռցիս 'ի ձեռաց իմոց: Օ ի զսիրելիս քո՝ և զազգա կանս մատնես 'ի մահ: Ցուցանէ :

NOTE

Թէ

EAP180-1-1-8_067R.jpg

NOTE

47

TEXT

Թէ մի կազմէր զորոզայթ սիրե լւոյ. զի ոչ հաճի Ած 'ի գործս քո. և դարձեալ քեզ պատրաստէ զնա : Աղուէս մի քաղցեաւ՝ և եգիտ սառն. և սկսաւ խռնտալ և ու տել: Եւ ասէ վա՛յ ինձ. զի ահագին է զոլ զայլոյն և աղաղակս 'ի գլուխս իմ. և փորս իմ ոչինչ իջանէ : Ցուցանէ : Փառք և մեծութի աշ խարհիս զերդ երազ է . և միայն զա ղաղակ ունի, և զզբաղումն . յետոյ ոչ երևի, զի անցաւոր, և խաբօղ է : Հարցին ընդ աղուէսն թէ քա նի ցեղ արուեստ գիտես . Պնաց կկզեցաւ, և ասէ . հազար ցեղ արուեստ գիտեմ. երեսուն ազւովս առաջի շանն՝ թողթ է քա նի անձամբս : Բայց մեծ արուեստս այն է . որ ոչ ես զշունն տեսնում, և ոչ նա զիս : Ցուցանէ : թէ ան թիւք են, որք ապաշխարեն զմեղս

NOTE

ըզ ըէ դ 4 և

EAP180-1-1-8_068L.jpg

NOTE

48

TEXT

և Ա. յ լինին: Ապա նա է կատա րեալ մարդ՝ որ ոչ մեղանչէ :

NOTE

Շբ

TEXT

Այրի կին մի ունէր տղայ մի: Եւ սկսաւ տղայն գողանալ միրգ և բանջար: Եւ մայրն առեալ ճաշա կէր և ոչ խրատէր զտղայն ՚ի կամս Ա. յ: Եւ նա ևս աճեցոյց զգողու թին. եբեր անասունս, և անօթս. և այր եղեալ՝ եղև աւազակապետ՚ի լերինս. և բազում չարիս առնէր: Եւ կալեալ տարան զնա՚ի կախել: և ասէ բերէք զմայր իմ զի Համբուրե ցից զնա. և յորժամ բերին խա ծեալ էհատ զքիթ մօրն : Եւ ասէ թագաւորն. ո չար, ընդէր Հատեր զքիթ մօր քոյ: Եւ նա ասէ, զի ոչ խրատեաց զիս ՚ի տղայութե ՚ի կամս Ա. յ. որ չէի յայս վիշտս ան կեալ. յիրաւի արարի զայն. և թա գաւորն Հրամայեաց զնա արձակել՝ և զմայրն կախել: Ցուցանէ : Թէ ամ ծնօղք, որք ոչ խրատեն զոր դիս

EAP180-1-1-8_068R.jpg

NOTE

49

TEXT

զիս իւրեանց ՚ի կամս Այ. նա մեղք որդւոցն ՚ի գլուխ ծնողացն է յաւուր դատաստանին: Աղուէսն և խեցգետինն եղեն եղ բարք, և արարին ցան. հնձե ցին, և կապեալ կուտեցին: Ասէ ա_ ղուէսն ելցուք ՚ի բլուրս այս. և ով շուտ իջանէ նա առնու զցորեանն: Յորժամ ելին, ասէ խեցգետինն. արա ինձ սէր: Եւ յորժամ կամիցիս վազել զարկ զագիդ առաջի իմ. որ ես իմանամ, և զամ զկնի քո: Եզարկ աղուէսն զագին և վազեաց. և խա չափառն

փակաւ աղուէսուն: և յոր ժամ էհաս աղուէսն ՚ի շեղջն. և դարձաւ յետս թէ յուր է խեց գետինն: Եւ խեցգետինն ՚ի վայր անկաւ իվր շեղջին, և ասաց. ա_ նուն Այ. այս ինձ երեք մող և կէս. զարմացաւ աղուէսն և ասէ. ով դու չար՝ երբ եկիր դու այսր: Ցուցանէ: Թէ բան և գործ առ

NOTE

ըթ դ 5 նեն

EAP180-1-1-8_069L.jpg

NOTE

50

TEXT

նեն նենգաւոր մարդիկք, որ ՚ի կո րուստ լինի իւրց անձանց. և տկարք յաղթեն նց: Դարձեալ շատ մե դաւոր՝ այս տկար մարմնովս ջանայ . իմաստութբ և արտասուօք քաւէ զմեղս. և տէր լինի երկնից Հացին :

NOTE

խ

TEXT

Առիւծն կալաւ իւր սպասաւոր զաղուէսն, և ետ նշան. թէ յորժամ արիւն տեսանես յաչս իմ. յիմացիր որ իմ որսոյ ժամն այն է . առիւծն և աղուէսն ուրախ լի նէին: Եւ Հպարտացեալ աղուէսն ելաւ յառիւծէն, և գնաց առ գայլն: Եւ արար իւր սպասաւոր. և ասէ ցգայլն յորժամ լինի յաչս իմ արիւն, և թէ ոչ լինի. երբ Հար ցանեմ, դու ասա այսպ: Եւ ասաց գայլն թանձրագոյն արիւն կայ յաչս քո. և նա ուրախացաւ, և նըս տաւ յանցս եզանց: Եւ ասէ գայլն դու բախեա իվր իմ. և ՚ի գնալն եզանց նա վազեաց յառաջ նց ոպ տե

EAP180-1-1-8_069R.jpg

NOTE

51

TEXT

տեսեալ էր յառիւծէն. և եղջուրքն հարին զգլուխ աղուէսուն և սա տակեցաւ: Եւ ասէ գայլն՝ յոտնկաց, այժմ ստուգապէս թանձրացաւ արիւն յաչս քո: Ցուցանէ: Թէ ոչ վայելէ մարդոյ ճգտիլ աւելի քան զկարն իւր. ոչ ՚ի հոգևորն և ոչ ՚ի մարմնաւորն: Ասի յառակաց թէ ապուզէն ա րար թագւորուի վատսուն տա րի. յորժամ ծերացաւ հանին զնա և բերին զայլ մանկագոյն. և եդին իւրեանց թագաւոր: Եւ նա եր թայր լալով ՚ի ծովեզերն. և ահա պատահեցաւ նմա ծառ մի թզենի լի պտղով. և ելեալ ՚ի ծառն բնա կեցաւ. և ուտէր ՚ի պտղոյն. և գոհանայր զԱյ: Եկեալ առ նա մեծ կրիայ մի, սովորեցաւ և գայր ոտս ծառոյն. և ապուզէն ձգէր ՚ի ծառոյն զթուզ. և նա ուտէր. և գոհանայր զնմանէ: Եւ յետ բա զում

NOTE

խա

EAP180-1-1-8_070L.jpg

NOTE

52

TEXT

զում ժամանակաց ասէ կրիայն ընդ ապուզէն, արեկ, որ տանիմ ըզ քեզ ՚ի կղզին առ ազգն իմ, որ պա տուեն զքեզ. և քո աղէկին աղէկ առնեմ. զի գոհացեալ եմ զքէն, առ ազգն իմ: Եւ ապուզէն հաւա տաց նմա վասն երախտեացն զոր արարեալ էր ընդ նմա: էջ ՚ի ծա ռէն, և նստաւ իվերայ թիկանց կրիային. և սկսաւ գնալ ՚ի ծովն ՚ի ներս: Եւ իբրև հեռացան ՚ի ցա մաքէն. ասէ կրիայն: Գիտա ցիր սիրելի եղբայր իմ կապիկ. զի կին իմ հիւանդ է. և ասացին բժշիկքն. թէ զկապկի սիրտն և զերիկամունսն եփեցէք, ու զջուրն առէք որ խմէ. որ ողջանայ. ըզ քեզ այնոր համար

կուտանիմ: կա պիկն իբրև լուաւ կանչեց իւր ամէն զօրութբն՝ և ասէ. հազար վայ զիս, և շատ աւաղ է՝ որ չկայ ՚ի հետս: Դարձիր եղբայր, դարձիր. որ արենտէր չլինիմ: Որ առնում զսիրտն

EAP180-1-1-8_070R.jpg

NOTE

53

TEXT

զսիրտն իմ և զերիկամունսն իմ. զի մեր սովորութի է որ ՚ի ծառն կա խեմք՝ յորժամ ՚ի ճանապարհ եր թամք. և շատոց առողջութի է ելեալ 1.է: Եւ կրիայն Հաւատաց ապուզնային. դարձաւ և գնաց ՚ի ծառի տակն. և ապուզնայն վա զեց և ՚ի ծառն ելաւ: Եւ ասէ կրիայն՝ փութա՛ և եկ ճարտար՝ որ ժամանեմք հիւանդին: Ասէ կա պիկն. թէ ես այլ հաւատամ քեզ՝ և իջնում ՚ի ծառէս. քան զէշն անմիտ լինիմ. որ զերծաւ ՚ի բերա նոյ առիւծոյն. և անկաւ դար ձեալ ՚ի ձեռն կամաւ՝ և սատակե ցաւ: Եւ ասէ կրիայն, դատիս յԱ յ՝ զի սուտ ասացեր. և կապիկն ասէ . դու դատիս յԱ յ, որ ինձ զստութի ուսուցեր: Եւ ասէ,վարձք է որ ստով ապրեցայ ես ոպ կաքաւն,և չիտն.որք խաբեցին, և ապրեցան: Ցուցանէ: Թէ բարեմոռացն Ածամոռաց է. և թէ բարի առնես մարդոյ. և նա ջանայ

EAP180-1-1-8_071L.jpg

NOTE

54

TEXT

ջանայ քեզ չար առնել. դու Հե ռացիր ՚ի նմանէ :

NOTE

խբ

TEXT

է զազան մի յանմարդաբնակ տե ղիս. և են եղջիւրք իւր ոպ սղոց. և մտանէ 'ի մորենին և սկսա նի խաղալ եղջերօք ընդ ծայրս ծա ռոց . և ճուղք բարակք պատա ռին և կապին յեղջիւրս նր, և ոչ կարէ արձակել՝սկսանի գոչել. լսեն որսորդքն, և գան սպանանեն զնա ։ Ցուցանէ ։ Թէ կապիմք 'ի սէր և 'ի փառս աշխարհի. և Հեշտանամք 'ի մեղս, և 'ի պիղծ ցանկութիս . դիւրաւ գտանէ զմեզ սատանայ՝ և սպանանէ ։

NOTE

խզ

TEXT

է զազան մի 'ի ծովն . որ Հուր ու տէ . զան որսորդք նր և վա ռեն կրակ յեզր ծովուն. և իւ րեանքն թաքչին. նա ելանէ 'ի ծո վէն և փափազանօք լափէ զկայծա կունսն . և անկեալ թմբրի 'ի զօրու թէ

EAP180-1-1-8_071R.jpg

NOTE

55

TEXT

թէ հրոյն. և որսորդքն յարուցեալ հարուն զնա ունայն. և այս է, որ ասեն թէ մորթ նր 'ի կրակն ձգեն, և չայրի: Ցուցանէ: Թէ մարդ բնա կեալ է 'ի ծով մեղաց և հեշտու թե. և անզեղջ սրտիւ ուտէ զմեղս ջերմացեալս հրով ցանկութբ դիւ աց: Եւ թմբրեալ կայ 'ի մեղս մեծա մեծս. նա որսորդն սատանայ ան յաղթ զայ. և սպանանէ զհոգիս մեր:

NOTE

խդ

TEXT

է գազան մի, որ ձուռնր դեղ է ՚ի պէտս բժշկուե: Եւ յորժամ տեսանէ զորսորդն զի նեղէ զնա. նա իւր ատամօքն հատանէ զձուն իւր և ձգէ յորսորդին. և ինքն փախ չի: Ցուցանէ: Թէ զորինչ սատա նայ սիրէ, և որով գայ զհետ քո. դու զայն կտրէ և հան ՚ի քէն. որ յիւր սերմանցն չգտանէ ՚ի քեզ. և դու փախիր ՚ի նմանէ բարեգոր ծութբ:

NOTE

է զա

EAP180-1-1-8_072L.jpg

NOTE

56 խե

TEXT

է գազան մի ՚ի ծովն. յորժամ քաղցենայ բանայ զբերան իւր. և հոտանուշ գայ ՚ի բերանոյ նո րա. և գան ձկունքն և մտանեն ՚ի բերան նորա. և նա փակէ զբե րան իւր. և այն է կերակուր նր: Ցուցանէ: Թէ այսպէս բացեալ է սատանայ զբերան իւր իբրև զա ռիւծ և զվիշապ. և հոտ անոյշ մե ղաց գայ ՚ի բերանոյ նր. և քաղց րանայ. և պարարտանայ ՚ի քիմս, և ՚ի հոտոտելիս հոգւոց մերոց: Եւ մեք կամաւ երթամք զհետ հոտոյ ամ մեղաց. ՚ի գործել զմեղս մտա նեմք ՚ի բերանն՝ և ՚ի փոր նր. և նա փակէ զբերանն իւր իվր մեր. և մեր յամեալ ՚ի մեղս. և անյոյս ե ղեալ յելանելոյն, մնամք անզեղջ:

NOTE

խզ

TEXT

էր միակեց մի ՚ի սահմանս գեղջ միոյ. և ազդմամբ չարին ան կաւ ՚ի շնութի յոլով ժամանակս: Եւ տանուտէր մի եբեր շուն մի

NOTE

4 դ գամփռ

EAP180-1-1-8_072R.jpg

NOTE

57

TEXT

գամիռ և սաստիկ ուժեղ. որ զբոլոր գիշերն շուրջ անցանէր 'ի բոլորն, պահէր զգեղն 'ի գազանաց: Եւ ահա գայր միակեցն 'ի գիշերի շնալ 'ի գեղն պոռնկութք: Եւ պատա հեցաւ նմա շունն այն յեզր գեղջն. դափեցաւ իվերայ միակեցին և է_ խած զնա. վարեաց զնա մինչև 'ի խուցն իւր. և բազում վիշտս և նե ղութիս Հասոյց նմա: Եւ նա եմուտ 'ի խուցն իւր փակելով զդուռն. զղջացաւ, և ասէ լալով և Հառա չանօք. թէ վայ ինձ: Աճ, այս բա զում ժամանակ է որ ոչ երկեայ, և ոչ զարհուրեցայ 'ի քէն. և սպառ նալեաց քոց և 'ի տանջանաց դժո խոցն: Եւ այսօր 'ի գամիռ շանէ միոյ Հանց զարհուրեալ երկեայ, և փախուցեալ ոչ կարացի շնալ: Արդ՝ ողորմեա Քս, և խլեա զիս 'ի ձեռաց սատանայի: Եւ 'ի ժամն եթող զնա սատանայ. 'ի պոռնկու թէն զղջացաւ, և ապաշաւեաց:

NOTE

5 ե Յու

EAP180-1-1-8_073L.jpg

NOTE

58

TEXT

Ցուցանէ : Ը ատ մարդիկ ապրե ցան 'ի մեղաց և 'ի դժոխոցն յահէ սպառնալեաց թագաւորաց՝ և իշ խանաց՝ և առաջնորդաց՝ և դա տաւորաց՝ և յամօթոյ մարդկան՝ և 'ի նախատանաց . զի այս 'ի ձեռս է . և կան 'ի յուխտ և յԱ յն համա րելոյ և 'ի Հանդերձեալն :

NOTE

խէ

TEXT

էր միակեցմի, որ արար շնութի ՚ի խուցն իւր . նա ձգէր զկնկուղն իւր և Հանկրիճէր. և սկսանէր սաղ մոսել և ծունր դնել. լայր Հառա չանօք և ջերմ արտասուօք : Հար կանէր զերեսն և զկուրծսն . և ճռ ղէր զմօրուսն, և թքանէր ՚ի նա : Եւ ձանձրացաւ սատանայ յաղօ թից նր . գայ առ նա ՚ի գեշեր մի, և ասէ ցնա. գարշելի պիղծ, քանի ան Հանգստես զիս՝ և նեղես . գաս, առնես զկամս իմ, շնաս և ուրախ առնես զիս . և դարձեալ զղջանաս յինէն, և առ Ած դառնաս, լաս, և Հա

EAP180-1-1-8_073R.jpg

NOTE

59

TEXT

Հառաչես, և տրտմեցուցանես զիս : Եւ ասէ միակեցն. ո՞վ դու նզո վեալ շուն. որ մեղօք քո դու զիս ՚ի յայս խուցս դարափորձ գաս : Դու ուռամբ Հարկանես զգլուխ իմ. և յիմարեալ գործեմ զմեղս . իսկ յորժամ զարթնում և խելք իմ ՚ի յիս գայ. և ես ուռամբս զքեզ Հարկանեմ. զի Ած իմ ողոր մած է, և ոչ թողու զիս ՚ի ձեռս քո: Յայնժամ շնորՀօքն Ա յ Հա լածեցաւ ՚ի նմանէ դևն պոռնկու թեան: Էր միակեց մի, որ արար շնութի երեք տարի, և Հայր վանացն Հո գետես էր՝ և ոչ կարէր իմանալ: Եւ յաւուր միում իմացաւ Հայրն զչար գործ նորա . կոչեաց զնա և ասէ . ասա ինձ ուր էիր յայսմ գիշերի . և ընդէր բարկացուցեր զԱծ: Եւ անկաւ առ ոտս Հօրն և ասէ . մեղայ Այ: Այս երեք տարի է որ շնայի:

NOTE

խը Ե 2 և

EAP180-1-1-8_074L.jpg

NOTE

60

TEXT

և ասէ Հայրն զինչ գործ առնէիր դու՝ որ ած յինէն ծածկէր զքո չարն: Եւ նա ասէ, թէ իմ սովորու թի էր, որ ամէն գիշեր երթայի շը նալ. ես ութ կանոն սաղմոսն, և զապաշխարութե շարականսն լա լով ասէի, և Հառաչանօք 'ի գալն . և յայսմ` գիշերի ծուլացոյց զիս սատանայ՝ և անյուսացոյց . թէ չէ օգուտ: ես բնաւ զած ոչ յիշեցի՝ և ոչ սաղմոսեցի: ասէ Հայրն, օրհ նեալէ ած, և ողորմութի և քաղ ցրութի նորա . որոչ կամի զկորուստ մարդոյ: Որով Հետև ած ոչ յի շեաց զայն շնութի քո: նոյնպ և ես թողում քեզ յայսմ` գիշերիս ողոր մութբն այ: Եւ նա դարձաւ առ ած՝ և եղև այր կատարեալ ապաշ խարութբ և բարեգործութբ:

NOTE

խթ

TEXT

կատուն Հագաւ փիլոն, և եղև կրօնաւոր . և ասաց մկանցն թէ այլ չհեղում արիւն զի մտայ 'ի կարգ ապաշ

EAP180-1-1-8_074R.jpg

NOTE

61

TEXT

ապաշխարութե: Ասեն մկունքն, թէ քեզ ոչ հաւատամք կեղծաւոր. թէ զանտօնի կարգն իվր քո տեսա նեմք: Յետ այսորիկ գնաց 'ի ջրա ղացն ընկաւ թէ ես գերըն եմ, գայ ին մկունքն և ասէին. ով դու չար, ոչ հաւատամք, թէ դու գերընես. Յետ այսորիկ կատուն եղև սուտ մեռեալ և յանցս մկանցն պառկե ցաւ. զան մկունքն և ասեն. ով դու նենգաւոր. թէ և պարկ լինի մոր թիդ քո ոչ հաւատամք. ոչ թո ղուս զսովորական

չարութին քո: Ցուցանէ: Որ մարդ չար չթողու զիւր չար սովորութին: Դարձեալ զկատուն լուսակալ դրին թագաւորին իվր ոսկի բարձին. և արարին զաքիսն. և տային նց ’ի կերակրոյ թագաւո րին. և ասացին, թէ թողէք զսովո րական բանս ձեր. և նոքա ասացին թէ ոսկւով ծածկէք զմեզ կամ մար

NOTE

ծ ե 3 գարտով

EAP180-1-1-8_075L.jpg

NOTE

62

TEXT

գարտով. ոչ կարեմք թողուլ զսովո րական բանս մեր: () ի կատուն ընբե րանն յորժամ տեսանէ զմուկն դո ղայ՝ և ոչ կարէ թողուլ զքնթըմ թալն: Ցուցանէ: Թէ զոր փոր ձես որ չէ բարքն անարատ. այլ նենգաւոր և չար. թէպէտ կեղ ծաւորի, և բարի առնէ մի Հաւա տար նմա. զի ոչ կարէ թողուլ զսո վորական բարս իւր: () ի խիստ բա րի մարդ պիտի, որ խոնարՀեցուցա նէ զկամս իւր և զսիրտն. զի ասէ Ածաբանն. թէ սովորութի բե րան լինի, և ամրանայ:

NOTE

ծա

TEXT

Որսորդ մի կայր յարևմուտս . և ետես զկրիայն յարնելս. և յա րեաւ գնաց առնուլ զնա . և սկսաւ յամիլ ’ի ճանապարՀին յայլ գործ : և աշակերտքնր փութցուցանէին, զի մի փախիցէ որսն: Եւ նա ասէ մի վախէք զի անմիտ է և ոսկրապատ՝ անզօր՝ ոչ կարէ փախչիլ. և յոր ժամ

EAP180-1-1-8_075R.jpg

NOTE

63

TEXT

ժամ երթամք մեր է նա: Ցուցա նէ: Թէ որսորդն սատանայ է . և կրիայն մեղաւորքն են. և ասէ սա տանայ ընդ դևսն իւր: Մի փու թայք, և ջանայք. թէ երթամք ՚ի տուն կախարդաց՝ և զրկողաց՝ արբե ցողաց՝ շնացողաց՝ և սպանողաց՝ և յայլ մեղաւորաց. զի նոքա զհետ մեր են կամաւ. և առնեն զկամս մեր, վն նոցա մի նախատէք: Գնա ցէք ՚ի սբ մարդիկքն, և ընդ նոսա կռուեցարուք. զի որ առնու ըզ բերդն և զքաղաքն. այն երկիրն ր է: Երեք ուղտք, և երեք աղուէսք եղեն եղբարք. և ՚ի ճանապար հին գտին երեք հաց նբ: Եւ ուղտքն առին զհացն. և յարուցեալ բարձ րացուցին զգլուխս իւրեանց՝ աղա ղակելով ուտէին զհացն: Եւ աղու էսքն լալով անկեալ առ ոտս նց. և ուղտքն կոխեալ սատակեցին զա դուէսսն: Ցուցանէ: Թէ մեծա

NOTE

ծը ե 4 տունք

EAP180-1-1-8_076L.jpg

NOTE

64

TEXT

տունք և իշխանք ծծեն զզօրութի ժողովրդեան.և շատք այնք են որք աղքատանան յաւելադատելոյն . թագաւորաց՝ և իշխանաց՝ և առաջ նորդաց . Հանց որ նեղին՚ի չքաւո րութէն, և մեռանին:

NOTE

ծզ

TEXT

կին մի գնայր ընդ դրախտն իւր վե մրգաց . և ասէ ցորդին իւր, թէ ով որդեակ իմ ակնկալ իվեր. և պահէ զմանր ձագերն, մինչև գամ

եւ: Յարեաւ որդին և շարեց 'ի մի չուան զամէն ձագերն. և կա
պեաց զծայր չուանին յոտս Հաւ ուն. և ինքն խաղովեղաւ: Եւ ահա
գայ 'ի վերուստ ուրուրն. վերացոյց զմինն ձագերուն. և գնաց
իհետ մայրն և այլ ձագերն: Ցուցանէ : Թէ Քն Համբարձաւ
յերկինս. և վստահացաւ զժողո վուրդսն 'ի թագաւորն, և յիշ
խանսն, և յառաջնորդսն. և նոքա զբաղեցան 'ի Հոգ և 'ի մեծութի
աշխար

EAP180-1-1-8_076R.jpg

NOTE

65

TEXT

աշխարհի . և չտանին խնամք հօտին քի: Եւ սատանայ լցոյց
մեղօք առհասարակ, և իջոյց 'ի դժոխս : Մեղաւ թագաւորն, և
իշխանն, և առաջնորդն, և ժողովուրդ . զի ամենեքեան
խոտորեցան, և անպի տանացան . քանզի ժողովուրդն կապեալ
է 'ի թագաւորն և յառաջ նորդն :

NOTE

ծզ

TEXT

Էր հարսն մի հեզ և համբերօղ. և կամեցան փորձել զնա սկսե
սուրն և սկսեսրայր նր: Ասէ մինն արի փակեա զդուռն. ասէ մէկ
այլն՝ թէ բաց զդուռն. զի ծուխ է և նեղ է զմեզ. և դարձեալ ասէ թէ
փակեա և բաց. և նա սկսաւ փակել և բանալ. յերկարեց և ո՛չ
բարկացաւ : Ցուցանէ : Թէ առա քեալքն, և մարգարէքն, և հայ
րապետքն, համբերութբ և հեզու թբ քարոզեցին աշխարհի:

NOTE

Ե 5 Ումն

EAP180-1-1-8_077L.jpg

NOTE

66 ծե

TEXT

Ոմն աղքատ երթայր ՚ի գիւղմի. Հիւանդացաւ ՚ի ճանապարհին. և աղաչէր զԱծ պատրաստել նմա գրաստ, որ ՚ի շէն տանին զնա: Եւ ահա գայ ոմն չարաբարոյ Հարկանէ զնա բրով և ասէ: Արիյոտն և շալկէ զքուռակս. զի ոչ կարէ գալ՚ի Հետ մօր իւրոյ: Նա յարեաւ և լայր՝ զի ոչ կարէր կանգնիլ: Եւ այրն չարա բարոյ ոչ դադարէր ՚ի Հարկանե լոյ զնա: Եւ նա ասէ, վա՛յ ինձ Աւծ իմ, զի փոխանակ թեթևացուցա նելոյ՝ ծանրացուցեր իվերայ իմ վիշտս: Ցուցանէ : Թէ չատք աղա չեն զԱծ և ակն բարւոյ ունին յԱյ և ՚ի մարդկանէ. և գայ տանջանք և վիշտք իվր նոցա:

NOTE

ծզ

TEXT

Այր մի մեծատուն գնաց ինա մէխօս որդւոյ իւրոյ ըստ սովո րութե մարդկան: Գայր կոյսն զոր խնդրէր, և նստաւ ՚ի մօտն. և ասէ առնն՝ ով Հայր օրհնեալ է գա լուստ

EAP180-1-1-8_077R.jpg

NOTE

67

TEXT

լուստ քո: ապա թէ գաս որ ՚ի Հռոմ երթամք բարւոք առնես. և անտի դառնամք յեէմ. և ապա ելա նեմք ՚ի վիրապն: ասէ այրն. վա՛յ որդեակ, ես եկի որ զքեզ տանիմ. իսկ դու զիս Հանես ՚ի տանէ իմմէ : Ցուցանէ : Թէ Քս եկն ՚ի խնդիր մարդկան . նա երթայ ամ ոք ընդ որ իւր կամքն է. ո՛չ լսեն կոչմանն Քի: Այս է առակս. և վարդապետն յոր ժամ երթայ ՚ի քարոզել և չգայ ոք ՚ի քարոզն : Աղուէսն եգիտ ուղտ մի մերձ ՚ի մահ. և նստաւ առ նա : Եւ ասէ

ուղտն. ի՞նչ պէտս նստար աստ ո՛վ դու աղուէսուկ: Ասէ աղուէսն զի թէ մեռանիս ես կերակրիմ ՚ի մսէ քումմէ : Եւ ասէ ուղտն ո՛վ գե րի աղուէսուկ. չկարես ժուժել զի պարանոցս իմ երկայն է . և Հոգիս յուշ ելանէ : ասէ աղուէսն. թէ ես սաստիկ Համբերող եմ ազգաւ՝ թէ քա

NOTE

ծէ

EAP180-1-1-8_078L.jpg

NOTE

68

TEXT

քառասուն օրն ապաննջես ես աստ նստիմ: Ցուցանէ : Թէ պարտ է Համբերել վարդապետին . Հեզու թբ օգտեցուցանել զժողովուրդն. և քաղցրութբ կոչել զմեղաւորսն. Զ ի չկայ մեծ բարութի,քան զՀամ բերութին: Առաքեալքն. և մար գարէքն՝ և Հայրապետքն՝ Համբե րութբ և երկայնմտուբ զաշխարՀս լուսաւորեցին՝ և Ա յ ետուն:

NOTE

ծը

TEXT

Ք աՀանայմի գողացաւ զկով այրի կնոջ միոյ՝ և էած յախոռն . և կինն իմացեալ, ասէ առ քաՀա նայն: Ո՛վ Տր ժամ է ինձ մաՀու որ խոստովանիմ յախոռ քո . և երէցն անցոյց զկովն ՚ի ներսին տունն. և անտի յեկեղեցին: Եւ կինն ասէ . ով Տր, զմաՀու խոստովանութին պարտ է որ յեկեղեցին ասեն: Եւ երէցն էՀան զկովն ՚ի բեմն . և զվա րագուրն իղէմ քաշեց. իբրև մտան յկեղեցին և նստան: Յայնժամ կինն

EAP180-1-1-8_078R.jpg

NOTE

69

TEXT

կինն զվարագոյրն ՚ի վեր կալաւ, և ասէ : Ով գարշելի, զքեզ կով գի տէի. արդ պատարագօղ ով արար, ասա ինձ : Ցուցանէ : Թէ այսպէս Համբերութեամբ և իմաստութբ պարտ է առաջնորդին քննել՝ և ստուգել զամ քահանայս. և իմա նալ զվարս նց: Որ չէ արժան պա տարագի ծածկաբար յանդիմա նել. և չտալ թոյլ խաչել զորդին Այ անարժան պատարագօք՝ և հա ղորդութբ: Այր մի մարդասպան փախեաւ. և գնացեալ անցանէր ը գետն որ կոչի նեղոս.և տեսեալ յեզր գետոյն զառիւծ մի. և փախուցեալ ելաւ ՚ի ծառ մի մեծ : Եւ ահա կայր ՚ի ծառն ահագին վիշապ մի. և նա յահէն ՚ի վայր անկաւ ՚ի ծառէն: Եւ ահա ել ՚ի գետէն կոկորդիլոսն և եկուլ զնա : Ցուցանէ : Թէ չկա րէ փախչիլ մեղաւորն ՚ի ձեռացն Այ.

NOTE

ծթ

EAP180-1-1-8_079L.jpg

NOTE

70

TEXT

Այ. որ ոչ զղջանայ և ելանէ ՚ի մեղացն . նա կամ յայս կեանքս կամ յայնկեանքն առնու զհատուցումն գործոց իւրոց : Ոպ ասէ յոբ . թէ որ չար է մի յուսացի անպարտ լի նիլ. և առաւել մարդասպանքն և զրկօղքն :

NOTE

կ

TEXT

Երինջքն խայտային և զեզինսն խրատէին . եթէ ոչ դադարէք յաշխատելոյ : Ահա եկն թագաւոր գաւառին, և ժողովեալ զերինջսն և սկսան կոտորել. զի ճաշ կազմէին թագաւորին, և զօրացն : Ահա որ դեակք մեր վնասաւոր պարա պորդ հանգչէիք և դուրանայիք : Ցուցանէ : Ասեն ամ սբքն ընդ դասս ձախակողմանցն . թէ ահա որդեակք. այդ կայր ձեզ պա հեալ. որ ՚ի հուրն այրէիք : Օ ի այն կեանքն բտէիք զմարմինս ձեր հանգստեամբ և մեղօք . և զար դարն նախատէիք . դուք այժմ նախատիք :

NOTE

Վ ա

EAP180-1-1-8_079R.jpg

NOTE

71

TEXT

Վարազն սրէր զատամունս իւր մեծ աշխատութբ, և եռանիւ: Եւ աղուէսն ասէ ընէր աշխատիս զի առ ժամանակս չկայ կռուոյ բան: Ասէ վարազն կռուիր դու գարշելի. զի ես հմուտ եմ պատե րազմի: Եւ արդ կարէ պարապել զէնս իւր: Ցուցանէ : Թէ ՚ի յայս կեանս պարտ է զղջանալ և ապաշ խարել զմեղս. զի յաւուր դատաս տանին չկայ ճար ներելոյ կամ ողոր մելոյ. ոպ ցուցանեն մեծատունն և յիմար կուսանքն: Արծուին յորժամ ծերանայ բարձրանայ մինչև ՚ի տապ արե գականն, և ջերմանայ և գայ ՚ի վե րուստ մեծ լռութբ: Եւ իջեալ ՚ի սառն աղբիւր մկրտի. և ելեալ թաւալի, և թափի ՚ի նմանէ հնա ցեալ փետուրն նր. և նա մանկա նայ և նորոգի ամենևին: Ցուցանէ: Թէ ով ոք ծերանայ և հնանայ.

NOTE

կա կբ անօ

EAP180-1-1-8_080L.jpg

NOTE

72

TEXT

անօրէնութբ և չար գործովք. պարտի բարձրանալ Հոգւով առ Քն. և ջերմանալ հրով սիրոյ նր. և մկրտել զանձն 'ի ջերմ արտա սուս. և լուալ Հառաչանօք զչա րաւ մեղաց. մեծ յուսով և ողոր մութբն Այ. և թափէլ յինքե նէ զհնացեալ փետուրն մեղաց. և ազատիլ'ի դժոխոցն. և Հասանիլ բարեացն Այ: Ող վկայէ մարգա րէն դաւիթ. կատարէ 'ի բարի զցանկութի քո. և նորոգէ որպէս զարծուի զմանկութի քո:

NOTE

կգ

TEXT

Արծուին երթայր ընդ երկինս. և Հարին զնա նետիւ. և զարմա ցաւ թէ ով զայս արար: Հայեցաւ և ետես 'ի նետն զթևն իւր. և ասէ, վայ ինձ զի ահա յինէն եղև պատճառ սպանման իմոյ: Ցուցա նէ: Թէ 'ի մէնջ է նիւթն որով սպանանէ սատանայ զոգիս մեր. զի նա յորդորէ 'ի չարիս, և մեք կա

NOTE

5 Ե մաւ

EAP180-1-1-8_080R.jpg

NOTE

73

TEXT

մաւ և յօժարութբ երթամք զհետ կամաց նր: երմոտ մի էր բազմօրեայ. և խրատեցին զնա, թէ երթ 'ի դուռն քաղաքին. և զառաջին մարդն որ տեսանես, ասա առ նա. թէ քոյդ ինձ, և իմս քեզ. և գնաց: Եւ ահա գայր գողի մի. որ շարաւ էր անձն նր 'ի

խոցոյն. և նա դողաց յահէն: Եւ ասէ ցնա, ով եղբայր Հայեաց յԱծ. քոյդ քեզ՝ և իմս ինձ: Ցուցանէ: Թէ սատանայ սկսանի անյուսել զձեզ ՚ի մեղս. և Հեռացուցանել յԱյ՝ ոպ և ինքն եղև. և դու յայնժամն ասա զա ռակս առ նա. թէ քո անհաւատու թիդ քեզ. իսկ ես անպէտ և մե ղաւոր եմ: Բայց զԱծ ոչ կարեմ ուրանալ. զի անդադար կոչէ զիս քաղցրութբ. թողում զմեղս իմ, և երթամ առ նա յուսով:

NOTE

կդ 6 զ Պայլն

EAP180-1-1-8_081L.jpg

NOTE

74 կե

TEXT

Գայլն և աղուէսն եղեն եղբարք, և գնացին որսալ զձուկն: Ասէ աղուէսն ցգայլն՝ արկ զագիդ քո ՚ի գետն զի ըմբռնեսցուք ձկունս. և էր ժամանակն ձմեռնային: Իբրև էարկ գայլն զագին ՚ի ջուրն. պա ղեցաւ ջուրն, և կապեաց զագին: Ասէ աղուէսն. ահա քեռի ամ զօ րութբդ ցունց տուր զի ձկունք բազումք են. քաշէ զագիդ քո, զի ձուկն բազում է ըմբռնեալ: Իբրև ցունց ետ Հատաւ ագին ՚ի պաղն. և նա կսկծեալ վայէր զանձն, և լայր: Ասէ, վայ ինձ, զի թափեցայ յագուս. և ձուկն ոչ ըմ բռնեցի: Ցուցանէ: Թէ այսպէս կապէ սատանայ մեղօք մինչև ՚ի մահ.և թափին յայս կենացս,և յայն:

NOTE

կզ

TEXT

Ասի յառակաց թէ աղուէսն գը տեալ թուղթ մի գրեալ. և տարաւ առ գայլն, և ասաց: Այս չափ ժամանակս աշխատեալ եմ. և

EAP180-1-1-8_081R.jpg

NOTE

75

TEXT

և զմարդիկ բարեխօս եմ ձգեալ. և ՚ի պարնէն գիր և հուքմ եմ հա նեալ. որ յամէն գեղ՝ և յամէն գեհ՝ ուր հանդիպիս ոչխար մի քեզ տան : և յամէն տուն հաւ մի քեզ բաժին հանեն: Այլ ոչ շուն. և ոչ մարդ քեզ զահմաթ չտան: Եւ այնպէս խաբեալ զայլուն գնաց զհետ ա ղուէսուն: Եւ յորժամ գնացին, ինքն աղուէսն եկաց իվ ր բլրի միոյ. յեզր գեղջն.և յուղարկեաց զգայլն ՚ի գեղն.թէ գնա, առ զքո ղօֆայն. Եւ ես զթուղթս պահեմ, ով որ չտայ նա ես ցուցանեմ, որ տան: Եւ գայլնն հաւատացեալ. մինչդեռ երթայր յեզր գեղջն. յայնժամ մարդիկք և շներն իմէջ առեալ կամէին սատակել: իսկ գայլն ձայ նեաց առ աղուէսն. թէ բեր զպա րոնի հուքմն որ տեսնուն այս մար դիկս և աւատան. որ պարոնի հրա մանաւն եմ եկեալ. իսկ աղուէսն պատասխանի տուեալ ասէ՝ ով գայլ

NOTE

դ 2 ՚ի

EAP180-1-1-8_082L.jpg

NOTE

76

TEXT

՚ի գեղջդ կարդացօղ չկայ՝ լսօղ չկայ՝ ինչ կայ որ թուղթ բերեմ: և այնպ խաբեալ սատակեցին զգայլն:

NOTE

կէ

TEXT

Աղուէսն խաբէ զգայլն . և տայ նմա թուխթ տանիլ'ի տանու տէր գեղջն. և բերէ նմա կերա կուր: Իբրև գնաց գայլն'ի գիւղն. թափեցան շունքն իվր նր խածա տել և վիրաւորել. և փութ փութ արարին: Եւ իբրև եկն ողորմելի կենօք.ասէ ցնա աղուէսն.ընդէ՞ր ոչ ցուցեր զթուղթն. ցուցի, բայց հա զար շուն կայ՝ որ զգիր չգիտէ : Ցու ցանէ : Թէ մի վճէր, և մի ընկնիր իմէջ բազում տգիտաց և աներկիւ ղաց. այլ իմաստութբ փախիր 'ի դիւաց և 'ի նոցին կամարարաց:

NOTE

կը

TEXT

Աղուէսն եգիտ զպանիր յորո գայթն: Երթայ առ գայլն և ասէ. ով եղբայր, եկ և առ զպա նիրն, և կեր. զի ես 'ի պաք եմ. և գնաց

EAP180-1-1-8_082R.jpg

NOTE

77

TEXT

գնաց գայլն առնուլ զպանիրն . և անկաւ որոգայթն 'ի վիզ գայլոյն. և պանիրն'ի դուրս թռեաւ : | առւ աղուէսն,սկսաւ ուտել.ասէ գայլն, թէ եղբայր գէմ այսօր ուրբաթ է . մի ուտէր որ չի բարկանայ քեզ ած: ասէ աղուէսն . որո գայթդ 'ի պարանոց քո անկաւ՝ և այդ է բարկութի այ: Լւ սկսաւ գայլն ցնցտել յայսկոյս և յայն կոյս: Լւ ասէ աղուէսն ցգայլն . ես այլ շատ ցանցեցի երբ ըմբռնեցայ: Լւ ասէ, գայլն վայ ինձ զի նեղիմ չարա չար: ասէ աղուէսն, ով եղբայր, դեռ չես վայ՝ մինչև գայ տէր պան րիդ : Ցուցանէ : Թէ զգաստ լեր, որ չխաբուիս'ի սատանայէ . զի կա պէ զքեզ սատանայ 'ի մեղս, և 'ի Հեշտութիս : Յայնժամ ապա տաս վայ անձին քոյ՝ յորժամ գայ քն 'ի դատել զերկիր:

NOTE

ղ 3 Աճ

EAP180-1-1-8_083L.jpg

NOTE

78 կթ

TEXT

Ասի յառակաց՝ թէ թագաւոր մի կայր. որ ունէր իւրն սիրելի զօձ մի. որ յամէն օր կարմիր դեկան մի բերէր թագաւորին: Եւ եղև որդի մի թագաւորին նոր ծնեալ. իսկ թագաւորն զմանուկն սնուցա նէր իվերայ բարձացն. և առեալ զօձն արկանէր զպարանոցաւ ման կանն: Եւ այնպ սովորեալ օձն և մա նուկն խաղային ՚ի միասին. և այսպ ժամանակս ինչ՝ սիրով խաղային առ իրեարս: Իսկ յորժամ մեծա ցաւ մանուկն կապեալ սուր ընդ մէջս իւր. յաւուր միում ՚ի խաղալն իւրց հանեալ մանկանն զսուրն է հար զտուտն օձին. և ընկէց յերկիր: Յայնժամ զայրացեալ օձին էհար զնա՝ և ինքն փախեաւ.մեռաւ որդի թագաւորին: Իսկ յետ սգոյն և միսի թարութե, առաքեաց թագաւորն որ զտանեն զօձն. և աղաչէին զնա գալ՚ի տեղի բնակութե իւրոյ: Եւ ասէ օձն, ով բարի թագաւոր. ան դէպէ

EAP180-1-1-8_083R.jpg

NOTE

79

TEXT

դէպ է ինձ գալ առ քեզ: () ի քանի որ Հայիս դու ՚ի գերեզման որդւոյ քոյ. և քանի որ Հայիմ ես ՚ի տուտնս իմ, ոչ սրբի մախանքն ՚ի սրտից մե րոց : ապայ այս բարի է, որ Հեռա ցայ ՚ի քէն: Ցուցանէ: Ուր նա խանձ և մախանք շարժի իվր քո, դու փախիր անտի, և ապա սրբի մա խանքն այն: Թէ չար ինչ առնես մարդոյ . փախիր, և Հեռացիր յա չաց նր. և ապա սրբի սիրտ նր. զի դառն

ախտ է մախանքն . և որ կարի երկիւղած է 1. J. նա կարէ սրբել զսրտին զոխն և զմախանսն : Այր մի անմիտ և յիմար. ունէր դեկան մի: | առ զդեկանն, և գնաց ՚ի քաղաքն որ գնէ զէշ. շրջե ցաւ ՚ի քաղաքն և ոչ եգիտ էշ միոյ դահեկանի: (ւ մտեալ՚ի շուկայն տեսեալ մեծագոյն ձմերուկ մի . և ասէ Հիացմամբ . զինչ է այս, և իմա ցան թէ յիմար է այրն . ասեն թէ

NOTE

Հ Ղ 4 այս

EAP180-1-1-8_084L.jpg

NOTE

80

TEXT

այս Հնդիկ իշու ձու է . որ Հանէ Հնդկցի էշ մեծագին. և նա խնդա լով ետ զդահեկանն և էառ զձմե րուկն: Եւ պնտեաց ծախօղն թէ վե Այ պատրաստ տար՝ որ չբեկի և ելեալ փախչի. և ՚ի գնալն դիպաւ ոտքն ՚ի քարն: Եւ զերծաւ ձմե րուկն ՚ի ձեռանէ նր. գլորեցաւ ՚ի թփերն ՚ի ներս. և վազեաց նա պաստակ մի ՚ի դուրս՝ և փախչէր . ՚ի Հետ վազէր՝ և ձայն էր նապաստա կին՝ և ասէր: Այ էշ Հնդկաց՝ վայ ինձ մի ֆախչիր՝ քուր քուր ողորմիր, և դարձիր առ տէրս: Ցուցանէ : Թէ այսպէս յիմարեցան քահա նայք և ժողովուրդն. և թափե ցան ՚ի մտաց . որ զհետմտաք սուտ և խաբօղ կենաց աշխարհիս . որ նման Հողմոյ փախչի ՚ի մէնջ՝ և նման երազոյ պակասի: Եւ ջանամք ըմբռ նել զհեշտութի և զմեղս աշխար հիս: Եւ լինիմք ողորմելիք:

NOTE

Օձն

EAP180-1-1-8_084R.jpg

NOTE

81

TEXT

()ձն մտիլնոս եղև հողագործ մարդոյ միոյ: Եւ եկեալ՚ի գետ ինչ առեալ՚ի ծոցն զօձն անցանէր ընդ գետն. և օձն այլ ոչ կամեցաւ ելանել՚ի ծոցոյ նր: Եւ գնացին առ բազումս, և արարին դատաստան իմէջ նց: Եւ եկին առ աղուէսն՝ ասեն, արա մեզ դատաստան. իմա ցաւ աղուէսն զպատճառն, ասաց. միական ոչ կարեմ դատաստան առ նել. ել՚ի ծոցոյն, և երես ընդ երես զրուցեցէք ինձ զբանն ձեր: Իբրև ելեալ եկն: Ասէ աղուէսն հողագոր ծին՝ թէ հար զնա խթանաւդ՝ որ կայ ՚ի ձեռս քո. էհար և սատա կեաց զօձն. և սկսաւ գալարիլ, Եկեալ աղուէսն ըղորդեաց զնա թաթովն և ասէ, թէ մտիլնոս ես: հանցեղ ըղորդ կեցիր: Ցուցանէ : Թէ պատրաստ կացիք ՚ի նենգաւ որ մարդոյ. և մի հաշիւ միաւորու թի առնես ընդ նոսա: Դարձեալ զայս ցուցանէ, թէ բարուք է. որ

NOTE

հա Ղ 5 զչար

EAP180-1-1-8_085L.jpg

NOTE

82

TEXT

զչար և զնենգաւոր մարդն ըղոր դէ դատաւորն:

NOTE

Հբ

TEXT

Կին մի այրի ունէր կով մի . և իւր խորթն ունէր էշ մի. և զկերա կուր կովոյն գողանայր խորթն և իշոյն տայր: Եւ կինն աղաչէր զԱծ, զի մեռցի էշն:և կովն մեռաւ: Լայր կինն, և ասէր. վա՛յ ինձ, զի Հակա ռակ եղև աղօթից իմոց . միթէ Ած ոչ կարաց ընտրել

զէշն և զկովն ՚ի միմեանց ։ Ցուցանէ ։ Մի աղօթել ընկերի քում՝ չար Հասանիլ. զի և քեզ պատահի չար: Դարձեալ ցուցանէ թէ աղօթեա առ Ած . զի ընդ Հակառակս կատարէ Ած, երբ ոչ լինի աղօթքն ՚ի կամսն Այ. քզի նա գիտէ զօգուտն անձանց մերոց ։

NOTE

Հզ

TEXT

Առիւծն ետես՝ զի ահա զային փախստական ամ՝ կենդանիքն ահիւ մեծաւ: եՀարց թէ յումմէ զայք Հանց փախստական . և նոքա ասեն

EAP180-1-1-8_085R.jpg

NOTE

83

TEXT

ասեն թէ ՚ի մարդոյ . զի նա Հա լածէ զմեզ: Եւ ահա եկն էՀաս մարդ մի ։ և ասէ առիւծն սպառ նալեօք, թէ դու ես մարդն. որ նեղես զամենայն կենդանիսն . և նա ասէ , այո ես եմ մարդն: Եւ ասէ առիւծն ընդ մարդն. թէ դու ես մարդն, եկ որ կռուինք: զի ես քեզ մնայի: ՚սէ մարդն չունիմ աստ զնշան կռուոյ . ապա թէ զաս որ կապեմ զքեզ որ չփախչիս՝ զի զա ռիւծն պարծենկոտ եմ լսել.գնամ և առնում զնշան կռուոյ, և զամ առ քեզ: Եւ Հաւանեցաւ առիւծն որ կապ է զնա . և կապեաց մարդն զառիւծն ՚ի ծառ մի. և սկսաւ կաղնի մահակով Հարկանել զնա ։ Եւ ասէ առիւծն, թէ մարդ ես . թողես մարդ. ապա սերտ և անխնայ Հար զթիկունս իմ: զի այս խելացս այսպէս վայելէ: Ցուցանէ ։ Թէ զօրաւոր մարդիկ խաբին ՚ի տկա րաց, և տանջին. և ինքեանք նախա տեն

EAP180-1-1-8_086L.jpg

NOTE

84

TEXT

տեն զանձինս իւրեանց: ‘Նոյնպէս և յաւուրն դատաստանի դասք ան զեղջ մեղաւորացն. արդարացու ցանեն զարդար դատաստանն Ա յ. յորժամ ’ի Հուրն առաքէ զնոսա : Եւ ասեն, թէ այս վայելէ մեզ. զի ընդէր ոչ լսեցաք նմա. և ոչ արա րաք զհրամանս և զկամս նր:

NOTE

Հդ

TEXT

Առիւծն Հիւանդացաւ, երէքն գային ’ի տես. աղուէսն յամեց: նա արջն չարախօսեաց զնմանէ: Եւ յորժամ եկն աղուէսն, ասացին ըզ չարախօսութի արջոյն բարեկամք նորա : Եւ ասէ առիւծն, ոչ բարի զաս զարշելի. ընդէր յամեցար : Ասէ աղուէսն, մի բարկանար թա զաւոր բարի. զի ահա երդնում ’ի գլուխ քո. զի աշխատութբ շրջե ցայ յամ բժշկապետսն. և ուսայ Հիւանդութե քում դեղ: Եւ ասէ առիւծն բարի եկիր, իմաստուն կենդանի. զինչ է դեղն . և նա ասէ, պի

EAP180-1-1-8_086R.jpg

NOTE

85

TEXT

պիտանի, և դիւրին: Հրամայեցին բժշկապետքն՝ թէ Հանէք զմորթ արջուն տաքտաք, և արկէք իվերայ առիւծոյն. և նա փութով քաշէ զցաւն ’ի նմանէ : Եւ հրամայեաց առիւծն, և կալեալ զարջն՝ սկսան քարշել զմորթ նր. և նա վայէր, և փուքս մեծամեծս արձակէր: Եւ աղուէսն՝ ասէ . այդ յերեսդ քո՝ և ’ի նր, որ առ թագաւորն զմարդ չարախօսէ : և Հանին զմորթն՝ և

սատակեցաւ արջն : Ցուցանէ : Թէ չէ պարտ որ մարդ ՚ի թագաւո րաց տուն և ՚ի դատաւորաց մտա նէ, նա զայլոք չարախօսէ . կամ մատնէ : Այլ մարդ զիւր Հոգն Հոգայ. և զիւր մեղքն տեսնու առաջև իւր: Ասի յառակաց. թէ ուղտ մի, ու գայլ մի,և աղուէս մի գնացին ՚ի մէկ ճանապարհ. գտին բլիթ մի Հաց. որ անկեալէր ՚ի ճանապար

NOTE

Հե հոր

EAP180-1-1-8_087L.jpg

NOTE

86

TEXT

Հորդաց.և ասեն ընդ միմեանս զինչ արասցուք զայս զի չէ բաւական մեզ ամենեցուն . ասէ աղուէսն սա մէկի կերակուր է . և որ աւագն է ՚ի մէնջ՝ և աւուրքն Հին. նա կերի ցէ զսա . և Հաւանեցան երեքեանն բանին: Հարցին ցգայլն, ասա ըզ թիւ ամաց քոց . և նա ասէ, ես այն գայլն եմ, որ յաւուրս ջրհեղեղին նոյ ՚ի տապանն էառ զիս: Եւ ասէ աղուէսն, օրհնեալ էած, իմ թո ռին ընկեր ես.ես այն աղուէսն եմ որ ստեղծ զիս ած, և տարաւ առ ադամ, որ անուանեաց զիս աղուէս: Եւ տարաւ ուղտն զբերանն, և էառ զբլիթն. և վերացոյց յօդս: Սկսաւ ծամել. և ասէ, երբ դուք զայդ կու ասէք՝ այս սրունքս զոր ես ունիմ չէ յերեկէն ելած տղայի: Եւ յառաջ անուն եղին ըլտուն բագոս: և գայ լուն մարկոս: և աղուէսուն թէոդո րոս: և կամեցաւ գայլն ձգտիլ զի առցէ զհացն յըլտէն . նա զգլուխն էառ

EAP180-1-1-8_087R.jpg

NOTE

87

TEXT

է առ՚ի ծնգնամէջն՝ և սկսաւ զայլն կզկնծկտալ. իսկ աղուէսն շուրջ ան ցանէր, և ասէր բանիւ բազմաւ : Բարձր է բազոս, կծկտայ մար կոս . շուրջ անցանէ թէոդորոս : Ցուցանէ : Թէ չէ պարտ աղքա տին ընդ մեծ տանն ձկտիլ՝ և ՚ի կռիւ մտանել. զի ոչ կարէ ՚ի գլուխ ելանել: Ոպ և ասեն առակաբանքն: Խեցգետինն Հետ օձին ձկտեցաւ՝ և կտրեցաւ . և թէ գրաստ որ զանձ էր բարձեալ՝ ՚ի տղմի ոչ անկանի . բայց օրն վերջին լինի արդար իրաւ ունք: Կապիկն, որ է ապուզայն. սովորու թի ունի. որ զինչ տեսանէ ՚ի մարդն զայն առնէ . ետեւ զի ձկնորսն ձգեաց զուռկանսն իվր ձկանց . և ինքն ևս ձգեաց՝ ըմբռնե ցաւ ՚ի նմա : Եւ ասէ լալով՝ յիրաւի ըմբռնեցայ ՚ի Հանց տեղի որ չէի Հմուտ: Ցուցանէ : Թէ ով մարդ

NOTE

Հզ մի

EAP180-1-1-8_088L.jpg

NOTE

88

TEXT

մի ձեռնարկանէր՝ և մի ցանկար գործոյ որ չես հմուտ: Եւ չէ քեզ դէպ թէ մարմնաւոր և թէ հոգևոր աստիճան . զի կորուստ լինի քեզ՝ և ոչ շահ:

NOTE

ծէ

TEXT

Արագիլն մեծ բռնութբ զայ յա մուսնութի հրամանաւն Այ որ աճէ . քանզի սիրէ , որ նբ մնայ . և տատրակն ոչ նստի յոստն կանաչ՝ եթէ մեռանի ընկեր նր: Ցուցա նէ օրինակս: Թէ ով մարդիկ սի րեցէք զսրբութի և զողջախոհու թի: Բայց վասն որդէծնութե

մտէք յամուսնութի, և մի վն աղտե ղութե:

NOTE

ծը

TEXT

Ագռաւն ժողովեաց զձագս իւր՝ և խրատէր զնոսա՝ և ասէր . ով որդեակք, մի լրբիք . պատրաստք եղերուք ՚ի մարդկանէ՝ յորժամ խոնարհին առնուլ ինչ: Ասեն ձա գեր նց. ով մայր մեր՝ զինչ արաս

NOTE

6 ղ ցուք.

EAP180-1-1-8_088R.jpg

NOTE

89

TEXT

ցուք. թէ առաջագոյն լինի մարդն առեալ զքարն՚ի ձեռն իւր . և ասէ մայրն այժմ գիտեմ որ ապրելոցէք: Ցուցանէ : Թէ պարտէ պատրաս տիլ ՚ի Հին որոգայթիցն սատա նայի . ՚ի նր պատրանացն, և՚ի նեն գութեց նր: Արագիլն՝ և ճայեկն՝ և ոպոպն ըզ ծերացեալ Հայրն իւրեանց դարմանեն՝ սնուցանեն՝ և ծառայ են. մինչև մանկանայ՝ կամ մեռա նի: Ցուցանէ օրինակս այս: Թէ պարտէ մեծարել և դարմանել ըզ ծնօղս. և Հնազանդիլ: ոպ և Ած Հրամայեաց : Պատուեա զՀայր քո և զմայր . որ զծնօղս անարգէ զԱծ անարգէ. և զինչ որ ՚ի Հետ ծնո ղաց առնեն Հետ Ա յ են արարեալ: Աղուէսն քաղցեաւ և ետես ՚ի Հոր մի բուդ քար. կարծեց թէ պանիր է.անկաւ՚ի ներքս, և սկսաւ

NOTE

ՀԹ Ճ 7 Է ուտել.

EAP180-1-1-8_089L.jpg

NOTE

TEXT

ուտել. և ասէ, վա՛յ ինձ, զի ոչ համ ունի և ոչ հոտ: Ցուցանէ: Թէ ով մարդ մի անկանիր ՚ի բուտ մե ղաց: զի անշահ իրք է մեղքն, և անօգուտ. զի յետոյ շատ ապա շաւես:

NOTE

Ճա

TEXT

Աղուէսն ՚ի գետն անկաւ՝ և լի նէր գետատար. խոստացաւ Այ մարզան մի խունկ. զի հանցէ զնա ՚ի գետէն. և զերծեալ ՚ի գե տէն՝ և սկսաւ ՚ի ժիմել. և մոռացաւ զուխտն զոր եդ Այ: Խաղայր, և խայտայր յեզր գետոյն, և ասէր. թէ Ած ինչ կարիս ունի ՚ի ծուխ խնկին որ յօդս ցնդի: Եւ ահա շար ժեցաւ դարափն գետիւն. և սկսաւ զնալ իվր նր. և նա լալով գոչեաց, և ասէ . ով Ած ոչ իմացար զի ես ՚ի խնդիր ելայ մարզանին որ զքո խուն կըն բերեմ, զոր ուխտեցի քեզ: Ցու ցանէ: Թէ ոչ է պարտ մոռանալ զուխտն՝ զոր ուխտեաց ոք Այ ՚ի

NOTE

նե

EAP180-1-1-8_089R.jpg

NOTE

91

TEXT

նեղութե իւրում. նա և զհանդեր ձեալ նեղութին մի մոռանար : Աղուէս մի քաղցեալ, եգիտ զսառն և զպաղ. ցանկացաւ ՚ի ձմեռնային աւուրն՝ սկսաւ ուտել զնա: Եւ ասէ վա՛յ ինձ, զի ահագին զլզլումս և աղաղակս ՚ի գլուխս և յատամունս իմ. և ՚ի փորս բնաւ ինչ ոչ իջանէ : Ցուցանէ : Եթէ փառք և մեծութիւն

աշխարհիս զերդ երազ է . և միայն զաղաղակն ունին, և զբաղումն. և յետոյ ոչ երևի ուրեք. զի սուտ է և անցաւոր և խաբօղ: Աղուէսն եգիտ զրէհ մի . և կար ծեաց թէ այս է պատմուճանն ադամայ՝ զոր կորոյս . զի գրեալ է լուսաւորէր. և զգեցաւ զնա ձմեռ նային ժամն . նա պաղեցաւ, և տան ջէր զնա՝ և մսէր . և հանեալ կանգ նեաց զնա. և սկսաւ ջուր արկանել ՚ի

NOTE

ձբ ձգ է 2 նմա

EAP180-1-1-8_090L.jpg

NOTE

92

TEXT

նմա. զի կարծեաց թէ ջրոյ աման է սա. և ամեննին ո՛չ լցուցանէր: Որ և բարկացեալ արկ զնա ՚ի խորս ծովուն, և ասէ . երթ ՚ի կորուստ, զի կարի անպիտան իր ես: Ոչ եղեր զգեստ ամռան. և ոչ ձմերայնոյ . և ո՛չ աման ջրոյ. ապա կարծեմ թէ փոր ես դու որովայնամոլ և ար բեցօղ մարդոյ՝ որ անկուշտ լինի: Ցուցանէ: Թէ այսպէս անօգուտ է փառք աշխարհիս. զի ոչ է աստ պիտանացու՝ և ոչ անդ : աստ մահն խաբէ . և անդ նոր արարածք լինե լոց է:

NOTE

Ճդ

TEXT

էշմի էառ զաւանակն իւր. և գնաց արածել՚ի մարգ մի ցանկա լի յանմարդաբնակ տեղի. և ահա գայ էշ մի որձ. և հոտոտեցաւ ՚ի յե տոյ ՚ի յամօթ նր: Եւ նա կից էհար զօրութբն. և էհար զխամծեկ նր, և ջախջախեաց. նայ փախեաւ որձ էշն՝ և գնաց անտի. և ասէ քու ռակն

EAP180-1-1-8_090R.jpg

NOTE

93

TEXT

ռակն լալով: վայ ինձ մայրիմ, զի տառապանք են աստ միայն . և բա զում երկիւղ կայ 'ի գազանաց : Ասա ինձ, ընդէր հարեր, և վիրաւո րեցեր զփառաւորագոյն էշն, որ եկն առ մեզ: Ասէ մայրն, ով որդեակ իմ. մի երկնչիր զի չէ յամելոց . քանզի յայնտեղին Հոտոտաց, և զայն Հոտն էառ . որ թէ մինչ 'ի ներքին Հըն դիկքն երթայ՝ և կամ 'ի խորասան. փութայ դառնալ առ մեզ: Ցուցա նէ : Թէ որ շնայ՝ և զրկէ . կամ զո ղանայ . կամ զայլ մեղս գործէ . ոչ կարէ դիւրաւ զերծանիլ'ի մեղաց : Օ ի ցանկութի և Հոտ մեղացն կա պէ զնա, և քարշէ ով շուն տոռամբ. զի օձ է մեղքն՝ 'ի ծակն շուտ մտա նէ.և ոչ կարէ ոք յետս քարշել զնա. զի խորխն ընդ դէմ է : Էշմի անկաւ 'ի գետն, և 'ի խեղ դիլն թրքեց. և զայր թրիքն իվր ջրոյն . յառաջեաց քան զէշն:

NOTE

ճե է 3 Եւ

EAP180-1-1-8_091L.jpg

NOTE

94

TEXT

Եւ ասէ էշն. այ չար'ի յորովայնէս դեռ ելեր. ասա ինձ թէ զլողդ ուր ուսար . որքան զիս յառաջ քայլես : Ցուցանէ : Թէ կարի անպատշաճ է . յորժամ տղայք խրատ տան ծե րոց . և տգէտք գիտնականաց :

NOTE

ձզ

TEXT

Օ էշն մեծարեցին, և կոչեցին՚ի հարսանիս որդւոյ թագաւո րին. և նա ասէ ոչ փողահար եմ, և ոչ խաղացօղ. ապա գիտեմ որ կամ փայտ պիտենայ կրել կամ ջուր՝ զի իմ բանն այնէ ։ Ցուցանէ ։ Յոր ժամ կոչեն զքեզ ՚ի բան, կամ ՚ի գործ . որ քեզ անդէպ է՝ և ան նման. և ՚ի վեր քան զկարողութի քո . գիտացիր որ քեզ տնազ լինին արարեալ։

NOTE

ձէ

TEXT

Իշուն աւետիս ետուն, թէ ցնծայ և ուրախլեր. և տուր մեզ օ ժիտս, զի թոռն եղաւ քեզ։ Եւ նա ասէ՝ թէ վայ ինձ, բարեկամ իմ. զի թէ

EAP180-1-1-8_091R.jpg

NOTE

95

TEXT

թէ հարիւր թոռն յայտնի ինձ յե ռանաց իմոց. զծանրութի բեռանց իմոց ոչ թեթևացուցանէ ՚ի թի կանց իմոց։ Ցուցանէ։ Թէ ամ ոք ընդ անձին պարտի համարս տալ. և զբեռն մեղաց իւրոց ինքն բառ նալ։ Դարձեալ ցուցանէ, մի վստա հանար յորդիս քո՝ և մի յորդիս որ դւոց քոց • զի ոչ քաւեն զմեղս քո ։ այլ դու ջանա, քանի որ կարես . և ապաշխարեա արտաասուօք։ Ճանապարհորդ մի հանգեաւ յաղբեր մի և գնաց . և անդ մո ռացաւ հարիւր դեկան . և նոյն ժա մայն գայ ոմն անցանել զճանապար հաւն. էառ զգանձն, և գնաց ՚ի լեառն։ Եւ նա յիշեաց զգանձն, և փութով դարձաւ. և ահա այլ ոմն գայր զճանապարհաւն. կալաւ զնա, և եկն ՚ի տեղին . և ասէ՝ տուր ըզ գանձն զոր աստ թողի. զի այլ ոք ոչ է եկեալ ընդ այս։ Եւ նա երդ նոյր

NOTE

ճը է 4

EAP180-1-1-8_092L.jpg

NOTE

96

TEXT

նոյր դառն և ասէր՝ թէ ես չեմ տե սեալ: Եւ նա տարաւ զնա ՚ի դա տաւորն արքունի՝ չարչարեալ սպա նին զնա ՚ի նոյն խորհուրդ :

NOTE

Հթ

TEXT

Պայր վաճառական մի, ՚ի քաղաք մի Հանգեաւ, և յարեաւ շրջէր ՚ի քաղաքն. եկն ՚ի վաճառանոցն . և էՀաս նմա պէտք մարմնոյ արտա քին: Եւ էր ջրտուն մի մերձ ՚ի վա ճառսն. և նա եմուտ ՚ի նմա վճա րեաց զիւր պետսն. և գողն դայր ծածկաբար զհետ նր վե զանձին, զոր ունէր կապեալ՚ի մէջսն: Փու թով՚ի Հետ մտաւ՝ և էՀատ զգլուխ վաճառականին. էառ զգանձն, և գնաց. զի շատ էր աղմուկն և ոչ իմացաւ ոք: Նոյն ժամայն մսագոր ծըն եմուտ ՚ի ջրտունն ՚ի վճարել զպէտս մարմնոյն. և զայն տեսեալ վա՛յ գոչեաց, ընդ անմեղութե իւ րոյ. և լուեալ մարդիկքն կուտեցն իվ ր նր . տեսին զնա, զի խռկայր. և թաւա

EAP180-1-1-8_092R.jpg

NOTE

97

TEXT

թաւալէր յարիւնն, զի նոր էր զե նեալ: Տեսանէին զդանակն արիւ նաթաթախ.և զձեռս մսագործին: սպանաւ և նա . զի ամենեցուն միտք վկայէր թէ նա էսպան: Այս եր կուս առակս մի խորհրդ և մի միտք ունին՝ և շատք խաբին. և այլ ընդ այլոյ Համարին զնն :
Բայց այս է կա տարեալ միտքն. զի շատ արդար մարդիկք

դատին և մեռանին անի րաւ և ընդվայր. և դատաւորն գիտէ ՚ի միտս իւր՝ և այլք թէ ու դիդ դատեցաք՝ զոր Ած սիրէ. և չէ զարմացումն: () ի ոչ է հրեշտակ դատաւորն. և ոչ մարգարէ, որ զխորն և զծածուկն գիտենայ . Ապա շատ պարտի քննել դատաւո րին զբանն և զվնասն. և Համբե րել բազում աւուրս . զի սակաւ սա կաւ յայտնի ճշմարտութին: ՙՆա և միակնի դատաստան չէ պարտ առ նել. զի շատ վնաս լինի անտի. նա և կաշառօք չէ պարտ թիւրել զի

NOTE

է 5 րաւ

EAP180-1-1-8_093L.jpg

NOTE

98

TEXT

րաւունս. զի անթողելի մեղք է առաջի 1.J:

NOTE

Ղ

TEXT

Լուսինն խաւարի՝ և թափեալ պակասի լոյսնր. և գայ՚ի դէպ արեգականն. և առնու ՚ի նմանէ կրկին զլոյսն իւր: Ցուցանէ: Րանս և օրինակս . թէ ով մարդ մեղաւոր. խաւարեցաւ լոյս սբ աւազանին որ կայր՚ի Հոգի քո . և պակասեցաւ ՚ի քէն շնորհքն. ՚ի ձրի մի երկ մտիր թերահաւատութբ. այլ յու սայ ՚ի Րն Հաստատուն Հաւա տով. և դիմէ առ նա զղջմամբ և արտասուօք. և նա ծագէ՚ի Հոգի քո՚ի լուսոյ իւրոյ. և սրբէ զանօ րէնութիս քո ողորմութբն իւրով :

NOTE

դա

TEXT

Զմեռն չորանայ տէրև ծառոց . և բոյսք անզարդին . իսկ զար նանային ժամանակն կրկին զար դարին՝ և պայծառանան: Ցուցա նէ: Րարի և լուսաւոր օրինակս . ով

EAP180-1-1-8_093R.jpg

NOTE

99

TEXT

ով մարդ եթէ ձմեռն մեղաց եկն իվր քո՝ և պաղեցոյց զքեզ. չար Հողմն Հիւսիսական մեղացն սատա նայի, և գոյն տերևացն թափեցաւ ՚ի քէն գեղեցկութի քո . և մի ան յուսիր ով ողորմելի . այլ երթ սրտի մտօք առ Հոգևոր զարունն Քն, որ կոչէ զքեզ քաղցրութբ. և նա լուանայ շնորՀօքն իւրովք զյան ցանս քո . և նորոգէ զքեզ առաջին պայծառութին քո: Խոզն, և բզէզն, և կամ այլ կենդա նիք՝ որք աղբակերք են և Հոտ զարշութե կեանք թուի նց: 1] այ ինձ. զի ցուցանէ օրինակս. թէ ամ մեղաւոր անզեղջ զաղբ և զչա րաւ մեղացն ուտէ՝ և պարարտա նայ . և այն քաղցր է ՚ի քիմս նցա : Յանմարդաբնակ լեառ մի կայր մրջիմն մի մեծագոյն քան զոչ խար մի. և գայ առիւծն խառնա կի

NOTE

ղբ ղգ

EAP180-1-1-8_094L.jpg

NOTE

100

TEXT

կի ընդ նմա . և ծնանի նց զաւակ. որ է կէս անձինն առիւծ . և կէսն մրջմնարիւծ . և յորժամ ծնանի. դիմէ առ մայրն զի կերիցէ Հունդ. և ոչ կարէ ուտել՝ զի Հայրն մսակէր է . և դիմէ առ Հայրն զի կերիցէ միս՝ և ոչ կարէ ուտել՝ զի մայրն Հնդակէր է. այսպէս

երթայ և գայ առ Հայրն և մայրն. և ՚ի սովոյն սատակի: 1| ա՛յ ողորմելի անձն իմ, որդեակ իմ. քանզի այսպէս ցուցա նէ առակս. զդասս անզեղջ մե ղաւորացն . զի ծննդեամբ մբ աւա զանին են ( յարարչութեն. և ծնա նի սատանայ մեղօք և անօրէնու թբ: Դիմեն առ ած՝ զի Հաւատան՝ որ կայ ած. և գիտեն զի դատաս տան կայ. և ոչ կարեն ուտել զկե րակուրն այ՝ զարքութի և զա պաշխարութի զգործս բարեաց. զի մեղօք կապեալք են ՚ի սատանայէ. և ոչ կարեն ուրանալ զած. զի բնաւորեալ գիտէ . որ ած կայ՝ և

NOTE

յա

EAP180-1-1-8_094R.jpg

NOTE

101

TEXT

յարութի, այսպէս են կապեալք յԱծ հաւատով. և են կապեալ ՚ի սատանայ չար գործօք. ոչ կարեն առնուլ բաժին ՚ի սատանայէ . և ոչ աստուծոյ: Այսպ երթան առ Ած հաւատով. և առ սատանայ մեղօք, և հեշտասիրութբ. և կան երկմիտ և ան հաստատ. և գայ մահն յարկարծակի՝ և հանէ զնոսա յաշխարհէս բաժին դժոխոց: Այր մի հողագործ շինեաց ակա նաթս բազումս. և էարկ ՚ի վաս տակն իւր վն թռչնոց: Զ ի գային կռունկք և սագք քաղէին զբակ լայն՝ և զսխտեռն նր: առաւօտուն գնաց տեսանել զակնատսն: Ետես զի անկեալք էին բազումք ՚ի սագից և ՚ի կռընկաց յորոգայթսն. և սկսաւ մահակօք սպանանել զնն: Արագիլ մի զտաւ յակնատսն. ասէ լա լով արագիլն առ հողագործն . վն Այ մի սպանանէր զիս. զի ոչ եմ

NOTE

դդ ես

EAP180-1-1-8_095L.jpg

NOTE

102

TEXT

ես կռունկն և ոչ սագ ։ ոչ զսիսեռն ուտեմ և ոչ զբակլայ.այլ բարեկամ եմ քեզ. և քաղեմ զամ ժիժմունս յանդաստանաց քոց. ասէ հողա գործն. որովհետև գտայ զքեզ ընդ թշնամիս իմ. ը դոսա մեռցիս. և սպան զնա: Ցուցանէ: Թէ որ բա րեկամ լինի և օգնական. և միաւո րեալ ընդ չարագործսն. ընդ նոսա տանջելոց է ՚ի հուրն անշէջ. ոպ և գրեալէ թէ զգողն և զգողակիցն. զբոզն և զկաւատն, և զկախարդն միապէս տանջէ ած ՚ի դժոխսն:

NOTE

ղը

TEXT

այր մի էհատ զլեզու հորդուն դրացւոյ իւրոյ գաղտաբար. և յորժամ եղև եզն զնաց առ թագաւ որն, և ասէ. թէ իմ է եզն՚ի տղայ ութէ. և եկեալ սնուցիչ եզինն մտան իրաւունք: Եւ նա ասէ՝ հոր թուն լեզուն Հատածէր՝ զոր կո րուսի. բացին զբերան եզին, տե սին զնշանն. և էառ զեղն. և ՚ի միւս օրն

EAP180-1-1-8_095R.jpg

NOTE

103

TEXT

օրն լծեաց և սկսաւ վարել. և խըր տան եզինքն. և նա անկաւ առաջի խոփոյն և ցցուեցաւ ՚ի փոր նր, ան ցաւ թափ ընդ թափ. և եզն էառ զնա. և եկն ՚ի դուռն Տն իւրոյ. ընդ առաջ ելին բազումք և ասէին. զայ սիրամն և բերէ զհարիւրն: Ցուցանէ: Թէ շատ արդար իրաւ ունք առնէ Ած. յառաջքան զդա տաստանն: որ իմանան մարդիկք թէ կայ Հատուցումն ամ գործոց: Այրմի աղքատ

խորովէր միս սա կաւ յանապատին իւրում. և արծուի մի յանկարծակի եկն իվե րուստ՝ էառ զմիսն և վերացաւ: Իսկ աղքատն խնաբլրոյ էր՝ անկաւ իվերայ մորենոյն ձայնեաց ասելով. թէ մանուկ ես և ունիս կարողու թի՝ դու նիստ և կեր: Եւ ասեն մար դիկք՝ թէ տարաւ արծուին զմիսն ՚ի բոյնն՝ և եդ առաջի ձագուց իւ րոց, և ինքն գնաց. և կայր կայծ մի վրա

NOTE

ղզ

EAP180-1-1-8_096L.jpg

NOTE

104

TEXT

փակած ՚ի միսն . այրեաց զբոյնն և զձագեր արծուոյն: Ցուցանէ: Շ ատ արդար իրաւունք առնէ Ած. զի որ զրկէ զմարդն յանմե ղուց. նա զմեղքն Հետ զրկանացն ՚ի յինքն առնու՝ ոպ ասէ սողոմոն. Այն է որ այրէ զնա ՚ի Հուրն ան շէջ. ըստ այնմ թէ առնէ Տր իրաւ ունս ամ զրկելոց:

NOTE

ղէ

TEXT

Ժ ողովեցան թռչունքն և ընտրե ցին զսիրամարգն վասն գեղեց կութե իւրոյ. և արարին իւրեանց թագաւոր: Գայ աղաւնին, և ասէ. ով բարի թագաւոր՝ եթէ նեղեն մեզ արծուիքն՝ և դու զինչ առնես մեզ զօգնութի: Ցուցանէ: թէ թագաւորին, ոչ միայն գեղեցկու թի պիտոյ է . այլ քաջութի և բազ մաՀնար իմաստութի յամ կողմանց:

NOTE

ղը

TEXT

էր մեծատուն մի. և ունէր ժա ռանգ տան իւրոյ զքեռ որդին

NOTE

7 է իւր.

EAP180-1-1-8_096R.jpg

NOTE

105

TEXT

իւր. հիւանդացաւ, և կոչեաց զժա ռանգն զի խրատեսցէ զնա. և նա ե կեալ նստաւ՝ էած զգլուխն ՚ի ծոց իւր: Եւ ասէ մեծատունն . ով որ դեակ, ջանա ՚ի բարի. և մի հեշտա նար ՚ի սուտ կեանքս յայս՝ զի ան ցաւորէ. անմոռաց յիշեա զօրն ա հագին . և զժամ մահուն: դատաս տանն մի' մոռանար. խոնարհ և անո խակալ լեր. և զմեղս քո մի պահեր առ քեզ: Զանձրացաւ յասելն.ասէ ցնա, թէ որդեակ լսեցեր զոր ասա ցի քեզ. և կամ ՚ի միտ առեր. և ասէ ցքեռին՝ թէ զինչ հրամայեցեր: Ապա դու լսէ՝ ով պատմեմ քեզ գործ մի զարմանալի . զի ահա ՚ի փորսիմ կան երակք տասնևերկու, և ամէնն ՚ի պորտս գայ և երթայ. և իջեալ միաբանին ՚ի ծածուկ մար մինս: Եւ ասէ քեռին.թէ վա՚յ քեզ ժառանգ անպիտան՝ և հայրենակո րոյս . զի ես քեզ զօրէնս Այ քա րոզեմ. իսկ դու զերակ պորտոյդ

NOTE

8 ը ՚ի

EAP180-1-1-8_097L.jpg

NOTE

106

TEXT

՚ի թիւ արկանես . յայսմՀետէ ել ցես դու ՚ի ժառանգութէ իմմէ : Ցուցանէ : Թէ այսպէս անմտա ցաք ամ մարդիկք. և իբաց թողաք

զխրատն Ա յ. և զսպառնալիսն դժոխոց. և թաղեցաք զմիտս մեր. որ է զլուխ մեղաց՝ ՚ի ծոցս մեղաւո րաց՝ աղքատութբ թաղեմք զե րակս ՚ի պորտոյս մերոյ զշնութի. զարբեցութի. և զայլ մեղաց տե սակս: Եւ զայն խորհիմք անդա դար՝ թէ ոպ զրկեմք. կամ ոպ ար բենամք՝ և այլ մեղք գործեմք. այս են երակք պորտոյս . այս Հանէ զմեզ յԱ յ ժառանգութէն՝ և ողոր մելի առնէ :

NOTE

ղթ

TEXT

Կոյս մի Հաւատաւոր կայր ՚ի քա ղաք մի. Հպարտանայր ՚ի միտս իւր ՚ի դիւին զօրութէ. ելեալ ՚ի Հրապարակս քաղաքին ձայնէր և ասէր: Լսեցէք ազգք և ազինք ամ. զի Ած միայնէ յերկինս անարատ և սբ,

EAP180-1-1-8_097R.jpg

NOTE

107

TEXT

նք, և ես յերկրի. և այլքդ խոտո րեցայք յԱ յ: Եւ անկաւ ՚ի շնու թիւն, իբրև յղացաւ աղջիկն, ել ՚ի բարձրագոյն տեղ մի. գոչեաց ասելով: թէ լսեցէք ազգ մարդ կան. զի Ած միայն մնաց անմեղ և անարատ. զի ես ՚ի պատն վազեցի, նայ պատառեցաւ ստորոտս մինչև ՚ի ստինս : Ցուցանէ: Թէ որ հը պարտանայ . նայ դնն այսպիսի գոր ծէ. թէ տեսանես որ մարդ հպար տանայ իվերայ ընկերին, և խօսի հպարտութբ. և զանձն իւր սբ հա մարի . յայն դու ասա զառակս զայս: Ահա երկու մողիկնոսք երթային ՚ի վաճառ. մինն իմացաւ որ չա րակնութբ հայէր ՚ի նա. վս սա կաւ զանձուն զոր ունէր. և հասին նք ՚ի վայրնկ տեղի մի՝ և նա երկն չէր: Իբրև ՚ի քուն եղեն յարեաւ գաղտ յընկերէն. եդ զփայտ ՚ի տե ղին իւր՝ ուր պառկեցէր.և ղդումն

NOTE

Ճ ը 2 ՚ի

EAP180-1-1-8_098L.jpg

NOTE

108

TEXT

՚ի տեղւոջ գլխոյն. և ծածկեաց կար պետով . և ինքն զատ նստաւ. իմէջ գիշերի յարեաւ ընկերն՝ և էառ մեծ վէմմի.և էհր իվր դդման. զի տէր թէ գլուխն էր. և դդումն կո տրեցաւ ճայթմամբ : Եւ ձայնեաց ընկերն՝ և ասէ . թէ ահա սնդիկ նոս զհաւատ քո ՚ի դդումն փորձե ցի. և ինքն փախեաւ ՚ի նմանէ : Ցուցանէ : թէ յամ ժամ Ած օգ նական է : բայց պատրաստ կենալն աղէկ է . զի Ած զիմաստութի ետ ՚ի սիրտ մարդկան: Եւ դարձեալ ցու ցանէ զմարդ զոր փորձեալ ես ՚ի սա կաւիրս . ՚ի բան և ՚ի գործ վնասա կար և նենգաւոր. դու զանձն քո մի վստահանայր ՚ի նա :

NOTE

Ճա

TEXT

Եմուտ այր մի առ թագաւորն՝ և ետ հարիւր դահեկան.և գնեաց զամ խեղս՝ որք էին ՚ի նր գաւառ ին. զի նմա տացեն զհարկն. և իբրև եկ ՚ի թագաւորէն. ետես զայր մի

EAP180-1-1-8_098R.jpg

NOTE

109

TEXT

մի ճաղատ՝ մի ականի՝ և քթատ՝ խուլ՝ և քարճ ձեռնատ՝ ճոճանկ՝ և մի ոտն կտրած : Դարձաւ առ թա գաւորն՝ և ասէ . ով բարի թագաւ որ. զամենայն գաւառիս խեղս աստ զտի: Հրամայեաց թագաւորն բե րել զնա. իբրև ետես զնա զարմա ցաւ. ասէ փառք

Ա յ: Ցուցանէ : Թէ որ ունի նեղութիս ՚ի Հոգին, որ է մեղքն. նա գնեալ է զնա սատա նայ՝ և իւրն Հարկատու արարեալ խաբէութբ : Իսկ որ բազում մեղս ունի յանձն իւր. զոխակալութի. զհայհոյութի. զշնութի. զրկանք, և զարբեցութի. և զայլ մեղս. այս ինքն, բազում խեղութի ՚ի Հոգին. և ոչ դիմէ առ Քն, և ոչ զղջա նայ . նա Հաստատուն ծառայ է սա տանայի. և սաստիկ սիրելի քան զմեղաւորս: Առիւծն, գայլն, և աղուէսն եղեն եղբարք. ելեալ ՚ի յորս գտին

NOTE

ճբ ը 3

EAP180-1-1-8_099L.jpg

NOTE

110

TEXT

գտին երիս ոչխարս: Եւ ՚ի ժամ ճաշուն ասէ առիւծն ընդ գայլն . թէ բաժանեա ոչխարդ իվր մեր . կամէր փորձել զգայլն: Եւ ասէ գայլն. խոյդ քեզ՝ և մաքիս ինձ՝ և գառնս աղուէսուն. և առիւծն էզարկ թաթովն զկառափն գայ լուն. որ երկու աչքն կոկովեցաւ. նայ նստաւ իվր նր: Եւ ասէ աղուէ սուն թէ բաժնեա զոչխարսդ իվր մեր. ասէ աղուէսն. ով բարի թա գաւոր և յաղթօղ. զայս Ած է բաժնեալ. խոյդ քեզ ճաշ. և մա քիդ հրամէնք. և գառնդ ընթ րիս: Ասէ առիւծն. ով զերի ա_ ղուէսուկ. ով ուսոյց քեզ զարդար դատաստանդ՝ զոր արարեր. ասէ աղուէսն՝ թէ գայլուն աչուին ու սոյց ինձ, որ արտաքս կոկովեցաւ: Ցուցանէ : Թէ բազում՝ չարա գործք խրատին, և թողուն ըզ չարն. յորժամ թագաւորք և իշ խանք կախեն և խրատեն զգողսն . և

EAP180-1-1-8_099R.jpg

NOTE

111

TEXT

և զսպանողսն: Նոյնպէս շատ մե ղաւորք զղջանան և երթան ապաշ խարութբ . յորժամ լսեն մեծա տունք պապակին ՚ի Հուրն. և յի մար կուսանքն լացին անշահ. և ՚ի Հուրն անշէջ առաքեցան: Գայլն էգիտ զէշ մի գէր. կամե ցաւ ուտել զնա: Ասէ էշն ընդ գայլն՝ աղաչեմ զքեզ վե Այ. Հան զայս խոցս ՚ի յիմ սրտէս՝ և ապա կեր զիս . զի Ած ետ ՚ի ձեռս քո զիս: Քանզի բնեռ չար Հասաւ ՚ի յոտս իմ՝ և տանջէ զիս՝ անցեալ գայլն յե տև իշուն՝ զի Հանցէ զբնեռն. և յէշն ամ զօրութբն կից էՀար՝ և է զարկ զբերան գայլուն. և կոտրեաց զկզակն: և ինքն փախեաւ: Գայլն նստեալ լայր՝ և արտաասուէր. թէ արժանի եմ ես այս չարիս՝ որ եկն իմ անձինս վր. զի ես մսագործ էի. զիս բայտար ով արար: Ցուցանէ : Թէ շատք լան, և ապաշաւեն որք ձեռն

NOTE

ճգ ը 4

EAP180-1-1-8_100L.jpg

NOTE

112

TEXT

ձեռն արկեն ՚ի գործ. և յարուեստ ինչ՝ զոր չեն ուսեալ.և չէ իւրեանցն յարմար :

NOTE

ճդ

TEXT

Աղուէսն էառ կաքաւ մի՝ և կա մէր ուտել զնա . ասէ կաքաւն, օրՀնեալ է Ած՝ որ կոչեաց զիս իւր արքայութին. և զերծոյց զիս ՚ի յայս չար ժամանակէս : Ապա դու աղուէս գոՀացիր զԱյ՝ և ապա կեր զիս . քեզ վարձք է . և աղու էսն կկզեցաւ՝ բացեալ զբերանն

Հայեցաւ յերկինս՝ և ասէ ։ Գոհա նամ զքէն Աձ, որ պատրաստեցեր մեզ զսեղան բարութե. կաքաւն զերծաւ ՚ի բերանոյն, և թռեաւ . և ասէ կաքաւն՝ առաջ ուտել պիտի և ապա գոհանալ զԱյ ։ Ցուցա նէ ։ Թէ զխոստացեալ իրքն մի հա մարիր քեզ. զի շատք ասեն՝ և ոչ առնեն. մարդոյ շնորհակալ մի լի նիր . մինչև չառնուս զիրսն . և թէ ջուր տան դու ՚ի ժմն ՚ի զոգդ առ:

NOTE

Աղու

EAP180-1-1-8_100R.jpg

NOTE

113

TEXT

Աղուէսն զչիտն՚ի բերան էառ՝ և կամէր ուտել զնա. ասէ չիտն ընդ աղուէսուն շատ աւաղ թէ ու տես զիս. զի ժամ է ինձ որ ածէի մարգարիտ մի քան ՚ի ջալամու ձու՝ որ է ահագին: Եթէ թողուս զիս ես ածեմ զմարգարիտն,և լինի քեզ. և ապա կեր զիս . երդնում, որ գամ ՚ի կամս քո: Իբրև եթող զնա թը ռեաւ, և նստաւ ՚ի բարձրագոյն ճիւղ մի: Ասէ աղուէսն . արա զոր ասացեր, և եկ ՚ի կամս իմ: Ասէ չիտն ընդ աղուէսն . ապա քեզ նման անմիտ լինիմ թէ այլ գամ ՚ի կամս քո: Եւ դու ընդէ՞ր հաւատա ցեր. թէ ես կարի սակաւ մարմնովս այնպ մեծ մարգարիտ կարէի բերել քեզ: Ապա լսէ տամ քեզ խրատ՝ որ շատ օգուտ լինի քեզ: անդէպ բա նից մի հաւատար: ընդ խախուտ որ մով մի ննջեր. ՚ի շնացօղ ծերէ . և ՚ի հպարտ աղքատէ . և ՚ի ստախօս թագաւորէ, և յառաջնորդէ ի_

NOTE

Ճե ը 5 բաց

EAP180-1-1-8_101L.jpg

NOTE

114

TEXT

բաց փախիր: Ասէ աղուէսն. ահա որ դատելոցէ զքեզ Ած՝ զի ստեցեր ինձ: Ասէ չիտն. սուտ կայ որ վարձք է ասել. ՚ի մեղաց և ՚ի մահուանէ և յորոգայթէ ապրիլ. կամ զմարդ փրկել. շատ վարձք տայ նմա Ած: Ասէ աղուէսն՝ թէ ընդէր է գրեալ մարգարէն դաւիթ. թէ կորու սանէ Տր զայնոսիկ՝ որք խօսին սուտ: Ասէ չիտն. թէ ժամանակն գիտէ՝ և պատճառն. քանզի յոր ժամ սուտ խօսիս՝ ի մեղաց և վշտաց փրկիս. և փրկես զմարդն. նա Ած ուրախանայ. և թէ սուտ խօսիս, և զմարդ զայթագղեցուցանես նա մեծ չար է: Ապա դաւիթ խաղաց ՚ի յափսթեր և շորեթափեցաւ. և կարծիս ետ թէ մաղաս կաթեցայ՝ կամ դիւահար, և փրկեցաւ ՚ի մա հուանէ :

NOTE

ճղ

TEXT

Երէց մի ասորի, իմաստուն և բա րի՝ և այր մի հայ կռուէին ընդ իրեարս

EAP180-1-1-8_101R.jpg

NOTE

115

TEXT

իրեարս վն հաշուոյ ինչ: Ասէ այրն, թէ այն քարն ՚ի քո երեսդ . և ՚ի քո երեսունններկու ատամունսդ . և երէցն զարմացաւ՝ գնաց շուտ մի ՚ի տունն՝ ասէ ընդ երիցկինն իւր . թէ աւաղ՝ վն Այ առ զմոմն և տես թէ քանի են ատամունքս իմ: Եւ կինն թուեաց՝ և ասէ . երեսունն երկու են ստուգապէս: Եւ նա զայ առ այն մարդն՝ և ասէ . ուստի գի տացեր զթիւ ատամանց իմոց . կամ ով ասաց քեզ: և

նա ասէ, տէր, յիմ ատամանցս գիտեմ զքոյդ՝ ասացի : Առակս
այս յորժամ կամենաս մար դոյ կարեկից լինիլ. թէ յիմս մար
մնոյս գիտեմ և զձերդ : Որդեակ իմ զի հասարակաց է
պատերազմ, սատանայի նախանձն միապէս կո րուսանէ զմեզ՝
և տանի ՚ի դժոխս. և առնէ որդի գեհենին : Առիւծն հիւանդացաւ՝
և ուղար կեաց բժշկաց խնդիր . թերևս արաս

NOTE

ճէ

EAP180-1-1-8_102L.jpg

NOTE

116

TEXT

արասցեն դեղ ցաւոյն: Եւ եկեալ բժշկապետացն. և ասեն ընդ ա_
ռիւծն. թէ քո ցաւոյդ այլ դեղ չկայ քանոր զիշուն ականջսն կըտ
րեն, և զսիրտն Հանեն, և տան որ ուտես, և աղէկնաս: Ասէ
առիւծն ընդ աղուէսն. եթէ կարես էշ մի գտանել՝ և բերել: Եւ ասէ
աղու էսն. խիստ շուտով կատարեմ ըզ Հրամանս քո: Քանզի
ունիմ ինձ եղբայր՝ էշ մի. և է խիստ սաստիկ գէր. և է յայս անուն
Հովիտս, և արածի: Եւ գնաց աղուէսն առ էշն, և ասէ. ո՛ բարի և
Հեզ էշ. այժմ գիտացիր, զի մեծ փառաց կամիմ Հասուցանել
զքեզ: Քան զի առիւծն որ է թագաւոր գա զանաց Հիւանդացեալ
է՝ և մօտ ՚ի մահ է. և ուզէ որ տեսանէ ըզ քեզ. և զթագաւորութին
՚ի քեզ տայ: Եւ Հաւատաց էշն խաբողա կան բանիցն. և եկն առ
առիւծն. և ՚ի Համբուրել զառիւծն. ա_ ռիւծն

EAP180-1-1-8_102R.jpg

NOTE

117

TEXT

ռիւծն զբերան էբաց՝ և կամէր խեղդել զէշն. և իշուն փրթեալ փախեաւ: Եւ Հասեալ աղուէսն իշուն՝ և ասէ . ո անմիտ՝ ընդէր փա խեար: և ասէ՝ եթէ ’ի Համբուրելն կսկծեցոյց զիս: և ասէ աղուէսն . եթէ այն ’ի սաստիկ սիրոյն էր: Դարձիր, և մի փախչիր և եկն էշն առ առիւծն՝ և աղուէսն կալեալ զփողք իշուն.Հանեալ զսիրտ իշուն և զականջն կտրեալ կերաւ: Եւ ասէ թէ դեղ է՝ նայ լաւ է ինձ, քան ա_ ռիւծուն: Եւ գնաց աղուէսն առ բժշկապետսն, և առ առիւծն՝ և ասէ.եթէ եկէք զարմացք, և Հիաց ման իրք տեսէք, զի այն էշն ոչ ականջ ունէր և ոչ սիրտ:Եւ եկեալ տեսին, և ասէ աղուէսն ցբժիշկն . եթէ ը էր զարմանայք եթէ սիրտ և ականջ չունի. թէ դա սիրտ և ականջ էր ու նեցել.զի երբ յառաջն առ առիւծն եկն և զմռնչոյն լսելէր . նայ կրկնա կի չէր դարձեալ: Եւ արդարացու ցին

EAP180-1-1-8_103L.jpg

NOTE

118

TEXT

ցին զբանն աղօւէսուն: 1] այ մեզ՝ զի ականջ ունիմք՝ և ոչ լսեմք զսպառ նալիս դժոխոցն . և սիրտ ունիմք, և ոչ իմանամք զխաբէութի սատա նայի: ( մ մարդ՝ որ զմեղսն թողու. և այլու ի յայն մեղքն դառնայ . նա մեռանի ’ի ձեռն սատանայի՝ ոպ մե ռաւ էշն ’ի ձեռն առիւծուն . ա ռիւծն և աղուէսն են սատանայ . և էշն անդարձ մեղաւորն, որ ոչ դառնայ ’ի մեղաց:

NOTE

ճը

TEXT

Եկեալ բժշկապետ մի ’ի քաղաք մի. ձայնէր, և ասէր ընդ մար դիկք թէ խիստ բժիշկ եմ. և ամ ցաւոց դեղ ունիմ. և զհիւանդն ողջ առնեմ: ւ այր մի կամէր ծաղր առ նել զհաքիմն. և առեալ իշու

ագի մի. և պահեաց զնա ընդ Հանդեր ձովն. և ասէ ընդ հաքիմն.
ով ի մաստուն բժիշկ. զայլն խածեալէ զիմ իշուկն . կարես զիմ
իշուն դեղ առնել՝ որ ողջանայ : ւ ասէ հա քիմն

EAP180-1-1-8_103R.jpg

NOTE

119

TEXT

քիմն խիստ քաջ. գնա բեր դեկան մի՝ որ տամ սև մլհամի և
սպիտակ որ ողջանայ և այրն զիշու ագին եցոյց՝ և ասէ . այսոր
կարես դեղ առնել. և նա ասէ՝ ով այր այդոր ած կարէ դեղ առնել՝
որ ստեղծիչ է . ես զի արդ կարեմ իշուն ագին. որէ նշան իշուն.
զէշ առնել: 1] այ մեզ՝ զի նշան է մնացեալ ՚ի մեզ քրիստո նէութե
ոպ այն իշուն ագին. ա նուամբ միայն եմք քրիստոնեայք՝ և ոչ
գործովք: ( սէ Հաւատք ա ռանց գործոց մեռեալ են. և Հաւ ատ
առանց գործոց դատարկ է : մարմին առանց Հոգւոյ մեռեալ է
նոյնպ և Հաւատ աւանց գործոց :

NOTE

ճթ

TEXT

Այր ոմն գնաց ՚ի Հօղվարքն. և երեք զանգ էառ մարդոյ. եղ ՚ի
սկուտեղն և գնայր ը փողոցն ՚ի ներքս. և ձայնէր, և ասէր. ով զնէ
զանգ: լւ ծաղր առնէին զնա. և ասէին թէ խև է. և տեսեալ զնա
վա

EAP180-1-1-8_104L.jpg

NOTE

120

TEXT

վաճառական մի, և ասէ . բեր ըզ զանգդ տեսանեմ: Եւ առեալ վա
ճառականն . և Հանեալ զմախաթն և Հասոյց ՚ի յականջն՝ և ոչ

եմուտ՝ և ընկեց զնա: և ածեալ ընդ ա կանջ երկրորդին . և միւս ականջն թափանցիկ անցաւ: և յերրորդին ածեալ՝ և ամենևին ոչ ելանէր յա կանջէն մախաթն: Եւ զերրորդ զանգն խիստ սիրեաց վաճառա կանն . և զերկուսն արհամարհեաց. և ետ բազում ոսկիս՝ և գնեաց զմէկ զանգն զայն, որ մախաթն կալաւ, և ոչ ելանէր. և բազում բժշկու թի առնէր զանգն ՚ի Հիւանդս և յախտաժէտս: Եւ մեկնեաց վա ճառականն՝ և ասէ . եթէ այս որ մախաթս չմտաւ. նայ այս նոքա են որք ամենևին Ա յ բանքն յիւրեանց ականջն և լսելիս չէ մտեալ՝ և ոչ բա րիս գործեալ: Ա յն որ Քս ասաց. որ անկաւ ապառաժին, և ՚ի չգոյէ Հիւթոյ չորացաւ. և այն որ ընդ

NOTE

8 ը մի

EAP180-1-1-8_104R.jpg

NOTE

121

TEXT

մի ականջն մտաւ մախաթն. և ընդ մէկ այլ դեհն՚ի դուրս ելաւ. նայ այս այն մարդիկքն են՝ որ ածային բանն ընդ մէկ ականջն մտեալ է՝ և ընդ մէկայլն ելեալ. որ անկաւ և հեղձաւ՝ և եղև անպտուղ: Եւ այն որ մտաւ՝ և ոչ ել. այն մարդիկքն են, որք ածային բանքն յիւրեանց լսելիքն են մտեալ՝ և այլ ոչ ելեալ. այն որ անկաւ յերկիր բարի, և ետ զպտուղ և գործեաց զարդարու թի. երեսուն, վաթսուն, և հա րիւր: Ջ ի թէպէտ և մեռեալք են նոքա. ապա կենդանիք են. և փոխեալ՚ի մահուանէ ՚ի կեանս՝ և ՚ի խաւարէ ՚ի լոյս: Ա ռիւծն մի ՚ի քար այր մի մտաւ. և ասաց ամ կենդանիք՚ի յինքն ՚ի տես զան. և զարջն դռնապան եդ՚ի դուռն քարայրին. գազանք և էրէք որք մտանէին առ առիւծն որ սուտ հիւանդացեալ էր նա զամէնն

NOTE

Ճժ 9 թ ուտէր.

EAP180-1-1-8_105L.jpg

NOTE

122

TEXT

ուտէր. և այլ ոչ ելանէին. եկն խոզն.քան զի բնութբ՝ ի վայր Հայե ցօղ է . կանգնեցաւ ՚ի դրանն. և ոչ մտանէր: Եւ ասէ դռնապանն, մուտ՚ իներս.և ասէ ոչ մտանեմ,քզի որ մտեալէ՝ այլ չէ ելեալ. ահա ե ընհի Հետռն: Եւ է Հար դռնապանն զխոզն. և խոզն բարկացեալ զբաշն լարեաց՝ և էզարկ զարջն. և ընդ եր կուս կէս արար՝ և մեռաւ. և ամօ թալից արար: Ցուցանէ : Թէ քար այրն դժոխքն է. և առիւծն սա տանայէ. և արջն իւր զօրքն է: Եւ մեղաւոր՝ որ անդարձ է մեռեալ. և՚ի դժոխքն է անկեալ այլ ոչ կարէ ազատիլ:Եւ խոզն որ դարձաւ և ոչ մտաւ. նա այն մեղաւորն է՝ որ զմեղսն եթող՝ և դարձաւ՝ և ոչ մտաւ ՚ի դժոխքն. ով խոզն այն ոչ մտաւ ՚ի քար այրն ապաշխա րեաց մեղաւորն և ելաց. և այլ ոչ գործեաց մեղս. և ամօթ արար զսատանայ. ով արար խոզն զարջն:

NOTE

Այր

EAP180-1-1-8_105R.jpg

NOTE

123 ճժա

TEXT

Այր ոմն հազար խոզ էած ՚ի մի տեղի՝ և զպարիսպ էած շուրջ. և իշօք կորեկ և գարի բերէին, և բտէին զխոզսն : Նա իշուանքն ՚ի բանէն երբ գային. և քուռկնին երթային մօտ ՚ի խոզերն՝ թէ ուտեն ՚ի կորեկէն. կամ ՚ի գարւոյն. և պահապանքն ոչ թողուին.

այլ ՚ի կառավն հարկանէին: Եւ յորժամ իշուանքն գային՝ նա քուռկնին զան կատէին մօրերուն, և ասէին. թէ խոզերուն անխնայ կուտան, թէ կե րէք. և մեք սովամահ կու լինիմք : Եւ ասեն իշուանքն ը քուռկնին. թէ համբերեցէք. այն խոզերն որ կուտեն՝ նա պիտի որ վճարեն զամէն՝ զինչ կերեալեն: Եւ անցին աւուրք ինչ. և ահա եկն թագաւորն՝ նըս տաւ իվերայ պարսպին. և հրամայ եաց՝ որ զամէն խոզերն կապեն՝ և ընդմէջ կտրեն: Եւ սկսան կա պել և կտրել ընդմէջ: Եւ սկսան խոզքն բողոք հարկանել՝ և ճիչ բառ

NOTE

թ 2 նալ:

EAP180-1-1-8_106L.jpg

NOTE

124

TEXT

նալ. և ճչէին առաւել քան զայլ կենդանիս . և ասեն քուռկնին ընդ իշուանին. թէ այն ինչ ձայն է. և ասեն՝ թէ կու վճարուին՚ի խոզե րոյն զոր կերելեն. և տեսեալ քուռ կնոյն զտանջանս խոզիցն՝ դողային: Եւ կանչեցին, և անկն յոտս իշոցն և ասեն,թէ վե ը յտեսէք. թէ զարէ Հատիկ ճղակմիջերս է կպեալ. կամ կորեկ Հատ՚ի կռնակիս.և ասեն մայ րերն ընդ քուռկնին. թէ մի վա խէք՝ ով կերեալ է նայ այն վճարէ . դուք մի Հոգայք: Ցուցանէ : Որ խոզքն մարմնասէր մարդիկքն են, և փափկասէրք. և անզեղջ և ան դարձ մեղաւորքն, և իշխանքն: և քուռկնին աղքատքն: Եւ այն որ ծեծէին, և ոչ տային թոյլ ուտե լոյ . որ և մեղաւորն Հարկանէ զաղ քատն՝ և ոչ առնէ զողորմութի. և ընդ անձն ասէ՝ թէ կեր, և խմէ՝ որ չհիւանդանաս: Եւ թագաւորն ածէ՝ որ և յաւուր դատաստանին ասէ

EAP180-1-1-8_106R.jpg

NOTE

125

TEXT

ասէ վասն մեղաւորացն . թէ կտրե ցէք ընդ մէջ՝ և Հանէք ՚ի խաւարն արտաքին . ուր լալ աչացն է, և կըր ճել ատամանցն :

NOTE

ճժբ

TEXT

Է սպիտակ Հաւ մի ՚ի թագաւո րաց տունն : և յորժամ մարդն Հիւանդանայ . նա բերեն զՀաւն մօտ ՚ի Հիւանդն : Թէ ունիցի Հիւ անդն դարձ որ առողջանայ . նա Հաւն քաղցրութբ Հայի ՚ի Հիւ անդն, և գիրկ արկանէ, և զՀով Հա րու թևովն : ապա թէ մաՀու լինի Հաւն խոլոր Հայի, և դարձուցա նէ զերեսն ՚ի Հիւանդէն, և փախ չի. և այն Հաւովն կարեն գիտել մարդիկք զմեռանելն և զապրիլն : Ցուցանէ : Հաւն ած օրինակ է՝ և Հիւանդն մեղաւորին . արարիչն ած Հայի ՚ի մեղաւորն . ոպ Հայի Հաւն ՚ի Հիւանդն, եթէ կամք ունի որ դառնայ և զղջանայ . նայ ած քաղցութբ ՚ի մեղաւորն Հայի .

NOTE

թ 3 և

EAP180-1-1-8_107L.jpg

NOTE

126

TEXT

և գիրկ արկանէ, և Համբուրէ զի ոչ կամի զմաՀ մեղաւորին՝ այլ զդառնալն ՚ի չար ճանապարհէն: Ապա թէ չունենայ կամք մեղաւ որն դառնալ ՚ի մեղաց. նա Ած դար ձուցանէ զերեսն ՚ի մեղաւորէն: Որպէս ասէ մարգարէն. դարձու ցից զերեսս իմ ՚ի նոցանէ՝ և ցու ցից նոցա:

NOTE

ՃԺԶ

TEXT

Այր ոմն մեծատուն ունէր բա զում կաղապար ոսկի և արծաթ. և տարեալ թաղեաց զինքն 'ի գե տին: Եւ ծառայքն տեսին զտեղին ուր թաղեաց. և 'ի գիշերի գաղտ Հանին, առին և փախեան. և իմա ցեալ այրն որ չկայր ոսկին և ար ծաթն: Եւ սկսաւ լալ՝ փետել զմօ րուսն՝ և վայ տայր անձինն. և նեղա սրտեցաւ՝ և կամէր չուան առնուլ և կախիլ: Եւ տեսեալ այր մի ի մաստուն, ասէ . ընդէր խեղդիս: Նա ասէ ծառայ քն իմ զոսկին և զար ծաթն

EAP180-1-1-8_107R.jpg

NOTE

127

TEXT

ծաթն իմ գողացան, և փախեան: Եւ ասէ իմաստունն. որչափ էր ոս կին: և սալի քար կայր. և ցուցանէր թէ այս չափ էր՝ և այնչափ էր: Եւ առեալ իմաստունն զքարն և զսալն թաղեաց 'ի տեղւոջն ուր ոսկին էր. և ասէ իմաստունն, ահա ոսկին քո աստ. քանզի անպէտ էր քեզ իբրև զքարս զայս: Եւ բանիւս այսուիկ իմաստունն մխիթարեաց զայրն. և թափեաց, որ ոչ խեղդեցաւ: Ցու ցանէ: ամ մարդ որ զոսկին և զար ծաթն սիրէ. նայ զերդ զայն այրն է որ ոչ հոգւոյն եղև՝ և ոչ մարմնոյն: Եւ փոխանակ շահոյն կամէր խեղ դիլ. և անձնմահ լինիլ. զարծաթ սիրութի ասէ արմատ է ամ չարեաց: Ծառ մի 'ի հնդկաց աշխարհն. և ունի պտուղ գեղեցիկ և քաղցր. և է տերևալից. և ունի շուք գեղե ցիկ: Եւ է 'ի սահմանս նր իժ օձ բազում. եթէ օձն 'ի մարդկանէ

NOTE

ճժզ թ 4 որ

EAP180-1-1-8_108L.jpg

NOTE

128

TEXT

ղք ՚ի ծառին տակն գտանէ, չխայ թէ. ապա թէ ՚ի զատ գտանէ ՚ի ծա ռէն խայթէ: Ցուցանէ : Ծառն Ած, և պտուղն և շուքն պատուի րանն Այ. և օձն սատանայ . եթէ զոք գտանէ ՚ի դուրս ՚ի պատուի րանէն Այ. նա խայթէ ով օձն այն:

NOTE

ՃԺԵ

TEXT

Եւ ահա ժողովեցան ՚ի մի տեղ՝ տասն վաճառականք. և գնա ցին ընդ ճանապարհ մի. և մտին յերկիր մի օտար՝ և յերկիրն այն էր սով. և իժ, և օձ. և նեղութի. և վաճառականքն տարակուսեցան : Եւ անկաւ յետոյ նց հրեղէն պա րիսպ. և ոչ կարէին յետս դառ նալ. և առեալ նեղ ճանապարհ մի երթային՝ թերևս գտանիցեն զքա ղաք՝ զի վաճառեսցեն. և գնացին ամ մի մեծաւ աշխատանօք՝ և ոչ գտին զշէն. և լալով և ողբալով կոծէին զանձինս իւրց: Եւ ահա բուսաւ նց թև մի արծուոյ. և նք ջա

EAP180-1-1-8_108R.jpg

NOTE

129

TEXT

ջանացին, և զթև մի այլ շինեցին : Եւ հինգն ՚ի նոցանէ կորեան. և հինգ թռեան, և վերացան. և տե սին զաւառ մի լուսեղէն. Եւ թա զաւոր քաղաքին առաքեաց առ նե զօրականս՝ և ասէ.բարի եկիք՝ ահա քաղաքս առաջի ձեր. յոր տեղ կա միք դուք՝ ի Հոն Հանգիք: Եւ Համ բուրեաց թագաւորն զվաճառա կանսն. և զովեաց՝ և ասէ . վաշ է ձեզ՝ որ ընդ նեղ ճանապարհն ե կիք: Եւ

մտեալ'ի քաղաքն գտին զվաճառականսն՝ զորս 'ի բազում ժամանակս ցանկային զի տեսանի ցեն:Եւ գտին զգոմսն՝ և զդիպակս՝ և զկումաշն՝ զոր կամէին գնել. և ուրախացան մեծաւ ուրախութբ : Ցուցանէ : Օ ի տասն վաճառա կանք ադամ է և իւր ծնունդքն. և այն որ օտար երկիր՝ և յիժանոց . և 'ի սով՝ օրև արտաքսեցաք յանմահա կան դրախտէն. և անկաք յայս աշ խարհս՝ ուր կայ իժ և օձ . որէ սա

NOTE

թ 5 տանայ

EAP180-1-1-8_109L.jpg

NOTE

130

TEXT

տանայ՝ և 'ինեղուէ կամք Հոգւով և մարմնով: Եւ այն որ թև արծուի բուսաւ, այն Հաւատն է . որ ած յերկնից յերկիր իջաւ՝ և Հաւատս ետ մարդկան : Եւ այնոր ջանացին. և թև մի ևս ինքեանք շինեցին.այն նք են.որք ջանացին,և բարի գործեցին. մէկ թև Հաւատքն . մէկ բարեգոր ծուին: Եւ այն Հինգն որք կորեան. այն նոքա են, որ մեղս գործեցին, և կորեան 'ի ձեռն սատանայի . որք են դասք ձախակողմանցն . որք կո չին յիմարք կուսանք: Եւ այնք որք թռեան, նոքա են՝ որք լացին, և սգացին . զանձինս իւրեանց չար չարեցին վն արքայութեն, որք են դասք աջակողմանցն.որք կոչին իմաս տունք կուսանք : Եւ այն լուսեղէն գաւառն երկնից արքայութին է . քաղաքն անդրանկաց վերինն եէմ: Թագաւորն ած է՝ և զօրականք Հրեշտակքն . որ և ած բազում՝ Հրեշտակս առաքէ՝ յորժամ մեռա նի

EAP180-1-1-8_109R.jpg

NOTE

131

TEXT

նի արդարն. և գովեն զարդարսն, որք զերկրաւոր կեանս արհամար հեցին: Եւ համբուրէ ած զար դարսն և ասէ՝ վաշ է ձեզ. որ ընդ նեղ ճանապարհն եկիք. ոպ ինքն ասաց. նեղ է ճանապարհն, և ան ձուկ է դուռն, որ տանի ՚ի կեանսն յաւիտենից. և սակաւք են, որք գտանեն զնա: Նեղ ճանապարհ զչարչարանսն ասէ. և որ նեղութեց համբերէ. և այն որ գտանէ բե հեզս՝ ծիրանիս՝ և զդիպակս՝ և ղակունս. որ է բարեգործութին, պահքն, սէրն, համբերութին, և այլ բազում: Եւ այն, զի գտին զվաճառականսն. զորս ՚ի բազում ժամանակս ցանկային տեսանել. որ և արդարքն որչափ էին յայս կեանքս, նա ցանկային զի տեսա նիցեն զմարգարէսն, և զառա քեալսն, և զհայրապետսն. և զմար տիրոսն. որ և գտին զարդարսն՝ զորս ցանկային տեսանել: Տասն վաճա

NOTE

ռա

EAP180-1-1-8_110L.jpg

NOTE

132

TEXT

ռականք • զտասն կուսանսն ասէ : Եւ այն որ Հինգն կորեան այն զյի մար կուսանսն ասէ : Եւ այնոր Հինգն ապրեցան, և թռեան. զի մաստուն կուսանսն ասէ՝ որք թը ռեան արդարութբ:

NOTE

ճժղ

TEXT

Կայր քաղաք մի. և կայր բազում՝ ճանապարհ, որ երթայր ՚ի քա ղաքն յայն: Բազում՝ մարդիկ գնա ցին. և մին մարդն արգիլեցաւ՝

և զսօլերաց փոկերն կապէր. և այլ ոչ Հասաւ. և դուռն քաղաքին փա կեցաւ՝ և ոչ կարաց մտանել: Ցու ցանէ : Թէ փոքր առաքինութի է՝ և թէ մեծ տանի զմարդն յարքայու թին. ոպ զճանապարհն այն, որ զմեծ և զփոքրն տանէր ՚ի քաղաքն : Եւ որ ընդ աշխարհիս զբաղանսն զբաղի՝ իմէջ մեղաց շաղախի . նա ոչ կարէ Հասանիլ արդարոցն . և մտանել ՚ի քաղաքն անդրանկաց • ոպ այրն այն, որ ընդ սօլերովն եղև և

EAP180-1-1-8_110R.jpg

NOTE

133

TEXT

և ոչ եհաս ընկերացն. և ո՛չ մտաւ ՚ի քաղաքն . քզի փակեցաւ դուռն : ՙՆոյնպ փակի դուռն ողորմութե անողորմիցն, և անդարձ մեղաւո րացն յաւուրն դատաստանի . ոպ փակեցաւ յիմար կուսանացն : Մկներն ասացին ընդ իրերս, թէ այդ էր է որ մեք ոչ սլեհ ունիմք և ոչ եղջիւր. և կատուն զմեզ դիւ րաւ կալնու : Եւ մկունքն սրեցին փայտ, և կապեցին ՚ի գլխնին . որ թէ կատուն գայ նա մեք կռու ինք . որ ոչ առնու զմեզ. և ահա եկն կատուն, և մկունքն փախեան, և ընդ ծակն ՚ի ներս մտին . և այնք որք զփայտն եղջիւր էին կապել. ոչ կարացին մտանել ընդ ծակն . այլ կատուն կալաւ և էկեր : Ցու ցանէ : Մուկն որ եղջիւր կա պեաց, այն մարդիկքն են որք պըճ նին և ծարուրվին. և սպիտակա ցուցանեն զերեսս. և ապականին

NOTE

ճժէ դե

EAP180-1-1-8_111L.jpg

NOTE

134

TEXT

գեղեցիկ. և այն զոր ած է ստեղ ծել ոչ Հաւանին. այլ իւրեանքն այլ գեղեցկանան. և որոգայթին ՚ի ձեռն սատանայի . ոպ որոգայթե ցաւ մուկն ՚ի ձեռն կատուին:

NOTE

ճժը

TEXT

()ձն յորժամ ելանէ ՚ի ծակէն, և երթայ ընդ որ և կամի. նայ Հինգ ծուռ առնու՝ Հինգ տեղ ծռի ինքն՝ և ապա կարէ գնալ: Եւ յոր ժամ գայ ՚ի ծակի դուռն ըղորդի և ապա կարէ մտանել՚ի ծակն՝ յիւր Հանգստարանն: Ցուցանէ: Որ մարդն՝ Հինգ զգայարանս ունի. աչքն. ականջն. բերանն. ձեռքն. ոտքն. նայ մարդ յորժամ գնայ ՚ի մեղս զՀինգ զգայարանսն ծռէ, Աչօքն չար Հայի. ականջօքն չար լսէ . բերանովն չար խօսի. ձեռօքն անօրէնութի գործէ. ոտօքն ՚ի չար ճանապարհ գնայ: Եւ յոր ժամ մարդն գայ եկեղեցւոյ դուռն յաղօթել. նա պարտէ զՀինգ ըզ գայա

EAP180-1-1-8_111R.jpg

NOTE

135

TEXT

գայարանսն ըղորդել. և ՚ի չարէն կտրիլ. և ապա յեկեղեցին մտա նել և աղօթել. որէ մայր մեր: և Հանգստարան. և ապա Ա յ ընդ ունելի լինի աղօթքն: Ոպ օձն այն, թէ չղորդէ զՀինգ ծուռն. նա ոչ կարէ մտանել ՚ի ծակն և ՚ի Հան գստարանն. նոյնպէս մարդն թէ ոչ կտրէ զՀինգ զգայարանսն ՚ի չար սովորութէն, նա ոչ մտանէ յարքայութին Ա յ: Չէ պարտ մարդոյն այնմիկ որ յեկեղեցի Ա յ մտանէ: Օձն երթայ ՚ի դուր դաշտ. և ՚ի կանաչ և ՚ի ծաղկանց մէջ. և կանգնի իվ ր տըտանն, և իմանայ թէ Հովն յոր դիՀաց գայ. և դէմ Հովոյն կանգնի. և Հովն զծաղկանց Հոտն ը ինքն զարկնէ . և պարարտա նայ ՚ի Հոտոյն: Եւ ծաղիկ մի կայ՝ յորժամ այն

ծաղկին Հոտն ընդ ինքն դիպի. նայ լուսատու մարգա րիտ

NOTE

ճժթ

EAP180-1-1-8_112L.jpg

NOTE

136

TEXT

րիտ մի ՚ի գլուխն յօրէնի. և գիշերն ընդ որ երթայ օձն այն լոյս է իւրն. և լուսաւորէ մարգարիտն զօձն. և ցերեկն մութն ։ Ցուցանէ ։ Թէ դաշտ կանաչ եկեղեցի Ա յ է . և ծաղիկն պատուիրանն Ա յ է,առա քելական և մարգարէ ականն ։ Եւ այն մեծ ծաղիկն՝ որ գեղեցիկ է, և զլուսատու մարգարիտ շնորհէ . այն աւետարանն Քի է . և հովն Հոգին սբ ։ Եթէ ոք իմաստութբ երթայ յեկեղեցի Ա յ. և հաւատով մտիկ դնէ Ա յ բանիցն. նայ Հո գին սբ անուշահոտութբ արբու ցանէ զլսօղս. Եւ եթէ զաւետա րանական բանն, հաւատով և սրտի մտօք առնու ՚ի միտ . նա լուսատու մարգարիտ լինի անգին. և զհո գւոյն խաւարն, որ է մեղքն, հա լածէ. և զաշխարհիս կեանքն որ է սուտ լոյս՝ մութն երևեցու ցանէ ։

NOTE

9 թ Դաշ

EAP180-1-1-8_112R.jpg

NOTE

137

TEXT

Գող մի ձմերուկ մի գողացաւ ՚ի պարտիզէն, և կամէր կտրել։ Խօսեցաւ ձմերուկն և ասէ. մի կտրէր զիս.զի ՚ի միջի իմ խարաացի էշ կայ՝ կաց մինչոր ածեմ և ապա կտրէ։ Եւ Հաւատաց այրն՝ և տար եալ՚ի տունն եդ ՚ի պատուՀանն. և եկաց անդ մինչև

պատլեցաւ՝ և պթխեցաւ՝ և ելաւ նեխութին ար տաքս .և ազատեցաւ՚ի գերութէ: Ցուցանէ : Յորժամ մարդն ընկնի պարտէ ասել զինքն թագաւորի որդի եմ, կամ մեծատան . որ չսպա նանեն, այլ պաՀեն. միթէ զան զանձ տան և գնեն: Եւ ծառայն կամ մաՀով խալսի. կամ փախչի, և ազատի: Էր ծառ մի բարձր յոյժ . և տե րնք նր մեղր կաթեցուցանէին. և այր մի ելեալ ՚ի նմա լիզէր զտե րնն: Եւ մկունք երկու Հատանէ ին զծառն. և կայր առաջի ծառոյն

NOTE

Ճի Ճիա 10 Ժ դար

EAP180-1-1-8_113L.jpg

NOTE

138

TEXT

գուբ մի սոսկալի, և ահազին վի շապ մի՚ի նմա: Եւ այրն այն ոչ երկն չէր՝ և ոչ դադարէր ՚ի լիզելոյ զտե րնն: Ցուցանէ առակս: Թէ ծառն ժամանակս է. և մեղր՚ինմա մեղքն է, և հեշտութի. զոր գործեմք լիզելով: Եւ երկու մկունքն տիւն է և գիշերն . որք Հատանեն զժամա նակս մարդոյն: Եւ գուբն զերեզ մանն է . և վիշապն մահն է : վ այ մեզ՝ զի հեշտացեալեմք յայսցանէ, որք կան առաջի մեր :

NOTE

Ճիբ

TEXT

Էր այր մի՝ որ ունէր կին մի բար կացօղ՝ և անզգամ, և լեզուա նի. որ Հանապազ անհանգստէր՝ և տանջէր՝ զայրն իւր: Եւ յաւ ուր միում ՚ի միտ էած զբանն սաղոմոնի թէ լաւ է յանապատի բնակել քան ընդ կնոջ անզգամի լեզուանւոյ և բարակացողի: Եւ ասէ ՚ի

կինն. այ կին տուր ինձ պա րան զի երթայց ՚ի լեառն՝ և բերից տանս

EAP180-1-1-8_113R.jpg

NOTE

139

TEXT

տանս փայտ վառելոյ ։ զայս ասաց՝ և երթայր ՚ի լեառն զի անդ բնա կի: Եւ կինն աղճատեաց և զարշ մնաց. և այրն լալով գնաց ՚ի լեառն: Եւ իբրև գնաց՚ի շուրջ, եգիտ անդ ՚ի լեառն դատարկ ջրհոր մի: Եւ ասէ ՚ի միտս իւր . երթայց, բերից զկինն իմ աստ՝ ՚ի ջրհորս իջուցից՝ և թողից աստ: Եւ գնաց առ կինն, և ասաց. այ կին, ես քեզ բան մի ա_ սեմ, և դու զայն մարդոյ մի ասէր. և ասէ կինն ինչ: Եւ նա ասէ, գնա ցի ՚ի լեառն՝ և գտի անդ դատարկ ջրհոր մի . և իջի անդ, և տեսի կա նացի զարդ ոսկեղէն և արծաթե ղէն: Ապրճան՝ մատանի՝ խալխալայ՝ վզնոց՝ ճրամպիտ և այլ զարդս կա նացի: Եւ ասէ կինն ուրախութբ, երթամք՝ Հանեմք զայն և բերեմք ՚ի տունս՝ որ մարդ չիմանայ՝ և ոչ տե սանէ ։ Եւ ելեալ գնացին այրն և կինն ՚ի բերան Հորոյն ։ և ասէ, դու բռնէ զպարանն . զի դու ոչ գի

NOTE

ժ 2 տես

EAP180-1-1-8_114L.jpg

NOTE

140

TEXT

տես զինչ առնես: Եւ կինն ասէ, թէ ես իջանեմ: Եւ այրն կալաւ զպարանն, և իջոյց զկին ՚ի Հորն . և բերեալ մի սայլ քար եդ իվր Հորոյ բերնին, և գնաց: Եկաց աւուրս բազում: Եւ ասէ՝ երթայց, և տե սից զկին իմ, թէ զինչ եղև. և յոր ժամ եկն ՚ի ջրհորն՝ ետես ՚ի

բէ րան Հորոյն զդև մի՝ զի կայր անդ ։ Եւ ասէ դևն, ով մարդ՝ Այ Համար աստի տար զսայլն ՚ի յետ՝ որ ես ելա նեմ. և քեզ շատ բարութի առ նեմ: Ասաց այրն զինչ: ասէ դևն, կին մի եկն աստ՝ անկաւ ՚ի ջրհորս . և անարգէր՝ և Հայհոյէր զայր մի ։ Եւ ես ասացի, թէ քանի քաշանք տաս . մէկ պահ դադար տուր. և նա եթող զայր իւր՝ և վիճեցաւ ընդ իս: Եւ փախուցեալ զիս ազա տէ . և ասէ այրն, զինչ խոստանաս ինձ. և նա ասէ՝ երթամ, և մտա նեմ ՚ի դուստր թագաւորին, որ քեզ տան. Յայնժամ այրն այն եր դումն

EAP180-1-1-8_114R.jpg

NOTE

141

TEXT

դումն եդ դիւին. և ծերպեաց զսայլն և ել դևն: Եւ ասաց դևն, յորժամ դաս և առնուս զդուստր թագաւորին . ես երթամ, մտանեմ յայլ թագաւորի դուստր . և դու անդ մի զար թէ չէ յայնմանէ ե լեալ՚ի քեզ մտանեմ: Եւ ել դևն, և գնացեալ եմուտ՚ի դուստր թա գաւորին. և աղակէր, և ասէր՚ի բերանոյ աղջկանն. թէ զիս այս ինչ մարդոյ տուք որ ելանեմ: Եւ յորժամ տարան զայրն զայն, և ել դևն. և գնացեալ եմուտ յայլ թա գաւորի դուստր՝ և լլկէր զնա չա րաչար: Եւ թագաւորն լուաւ՝ թէ փեսայ թագաւորին բժշկութիս առնէ, և զդևս հալածէ . յուղար կեաց թագաւորին բազում կլայ էթ և արմաղան. թէ յուղարկէ զքո փեսայն՝ որ զայ իմ դուստրն բժշկէ ։ Յայնժամ աղաչեաց թա գաւորն զփեսայն իւր թէ զնա. և նա ելեալ գնաց ։ Եւ յորժամ

NOTE

ժ 3 գնաց

EAP180-1-1-8_115L.jpg

NOTE

142

TEXT

գնաց առ թագաւորին դուստրն : Ասաց դնն, ես քեզ ոչ ասացի թէ աստ մի գար. և դու ընդէր եկիր: Յայնժամ փեսայ թագաւ որին ասէ . ես եկի զի քեզ իմաց արարից. զի այն կինն ելեալ է ՚ի Հորոյն. և զքեզ կարի խիստ կու զէ: Ասէ թէ ուր է. և նա ասէ թէ աստ եկեալէ ՚ի դուրս դար պասիս: Եւ ասէ դնն, Ա յ սիրուն Համար զնա ՚ի դուռն արգիլէ . մէկ պահ՝ որ ես երթամ, ՚ի վեր փախչիմ. և քեզ շատ բարութի առ նեմ: Եւ այնպիսի բանիւ բժշկեաց զդուստր թագաւորին. և թա գաւորն ետ նմա բազում գանձս, և առեալ գնաց: Ցուցանէ առակս: Մարդ Հետ լեզուանի կնոջ՝ անզ գամի, և բարկացողի ոչ ելանէ ՚ի Հուն: Օ ի սաղօմօն Հրամայէ . թէ լաւէ անապատի բնակել քան ընդ կնոջ անզգամի, լեզուանւոյ և բարկացողի:

NOTE

Այլ

EAP180-1-1-8_115R.jpg

NOTE

143

TEXT

Այր մի բարի. զատեալ ամ չա րեաց. և երթային ճանապար հորդք և վաճառականք բազումք յաշխարհէ յաշխարհ. և այս բա րի այրս իմէջ նց: Եւ գնացին ՚ի տե ղի մի՝ որ ասէին թէ, երեք աւուր ճանապարհք այլ ջուր չկայ: Մէկ ջրհոր կայ. և անտի ընդ այն այլ երեք աւուր ճանապարհ այլ ջուր ոչ կայ: Եւյայն ջրհորն բնակեալ կային երկու դնք: Եւ զինչ մարդ որ անդ մտանէր այլ ոչ ելանէր. և գնաց կարաւանն անդ. և ջուր զոր ունէին հատեալէր: Յայնժամ ասաց կարուանն. ով առնու զիւր արեան գինն՝ և մտանէ ՚ի ջրհորս, և ջուր տայ ամենեցուն: Զ ի ով մտանէր, և ջուր

տայր ամենեցուն. 'ի յետին որ զինքն իվեր քարշէին. դնն կտրէր զպարանն՝ և զմարդն 'ի ջրհորն կորուսանէր: Եւ ասէ բարի մարդն, թէ ինձ տուք զարեան զինն, որ մտանեմ 'ի հորն, և ջուր տամ

NOTE

ճիզ. ժ 4

EAP180-1-1-8_116L.jpg

NOTE

144

TEXT

տամ ամենեցուն : Եւ առեալ զա րեան դինն, և եմուտ 'ի ջրհորն՝ և տայր ջուր ամենեցուն Հաւասար : Եւ յորժամ զինքն կապեցին, դնն էՀատ զպարանն . և տարեալ ըզ մարդն 'ի մաղա զայն որ կայր 'ի ջըր Հորն . և զի դնն այնէր այլակերպ և դժնիկ սնադէմ: Եւ ասէ 'ի մարդն այն, թէ Հաւանիս ինձ, և ասէ մարդն այն, փառք Ա յ որ ըզ քեզ ստեղծեր է, և յօրինէր զայդ քո կերպարանդ. զայդ լոյս երեսդ. զայդ ծովաչերդ . և սկսաւ գովել զամ տեղիք նր մի ըստ միոջ է : Եւ էր անդ ժաՀաՀոտ գորտ մի . և ասէ դնն ընդ այրն, թէ գորտն ինչ ազգ է: Եւ էր գորտն այն յոյժ աղտեղի. և այրն սկսաւ գովել զնա մի ըստ միոջէ զամ տեղիս զոր տոյն այնորիկ: Եւ յայնժամ ել դնն և գորտն մտին յայլ ներսի մաղա զայն . և փոխեցան յայլ կերպարան լուսափայլ. և եկին առ այրն, և ասեն՝

EAP180-1-1-8_116R.jpg

NOTE

145

TEXT

ասեն՝ Հիմի ինչեմք. զի մինն 'ի կտրիճ կերպարանեալէր, և միւսն յաղջիկ: Եւ ասաց այրն այն, ես զի տէի դուք Հանց գեղեցիկք էք

նա՝ ես այնոր Համր զձեզ յառաջ զովե ցի: Եւ յայնժամ առեալ զնա դևն եմուտ ՚իներսի մաղազայն . ևեցոյց նմա զմաղազայն, յոր զմարդիկն սպանեալէր. և ասէ ՚ի յայրն՝ սոքա ամենեքեան ինձ ոչ Հաւանեցան՝ վասն այնորիկ սպանի: Եւ դու ինձ Հաւանեցար, առ քեզ որչափ և կա րես զանձ և մարգարիտ . և ակունս, ոսկի և արծաթ՝ և գնա խաղութբ: զի դևն ունէր մաղազայն : Եւ ասէ այրն թէ չեմ կարեր տանիլ զի Հորս խոր է՝ և ընկերք իմ գնացին : Յայն ժամ առեալ դևն զմազեալ տօպ րակ մի, և ելից զնա ոսկւով և ար ծաթով՝ և ակմբք պատուականօք. և առեալ զինքն և զտօպրակն զան ձովն՝ և եղ ՚ի Հորուն բերանն, և ասաց գնալ:Եւ գնացեալ էՀաս կա

NOTE

ժ 5 րու

EAP180-1-1-8_117L.jpg

NOTE

146

TEXT

րոճանին: ւ նոքա տեսին, և զար մացան, թէ որպէս ազատեցաւ ՚ի դիւէն: Ցուցանէ առակս: Բա րի, և խոնարհ մարդոյն ած օգնա կան է . և դևն ոչ կարէ չար առ նել նմա: Օ ի ասէ սաղօմօն թէ արդարն յորսողաց վրծանի. և փո խանակ նր մատնի ամբարիշտն, և ինքեանք անկցին:

NOTE

ճիդ

TEXT

Իմաստուն աւագէրէց մի կայր ՚ի քաղաք մի. կամեցաւ զորդին իւր քահանայ առնել: Եւ ժողովե ցան բազում քահանայք և եպիս կոպոսք . և յորժամ յօրհնել սկսան զնորընծայն. յայնժամ ՚ի

տեսիլ տարան զնորընծայն: () ի էր բարձր սանդուխ մի, և սանդխին գլուխն էր զարմանալի դարպաս մի. և էր անդ բազմեալ լուսափայլ թա գաւոր մի. և Համարս առնէր քա Հանայից: Եւ բերին զծեր քահա նայն ’ի սանդխին տակն. և բերին զինչ

EAP180-1-1-8_117R.jpg

NOTE

147

TEXT

զինչ կերեւալէր ’ի ժողովրդենէն. և կապեցին ’ի մի տեղ. և բարձին ծեր քահանային, թէ առ և ել’ի վեր՝ և Համար տուր թագաւորին : Եւ նա ոչ կարէր՝ զի բեռն ծանր էր և սանդուխն բարձր. և հրեշ տակք հրեղէն մախաթով մխէին զնա յետևանց. և նա ոչ կարէր: Յայնժամ՝ մինն ’ի լուսաւոր ա ռանցն ասէ՝ թողէք զծերդ , զի զոր ինչ առեալ է որդւոյն է կերցու ցեր : Եւ յայնժամ բերին զնորըն ծայն, և բարձին զբեռն նր իվր նր. և նա ոչ կարէր Հանել’ի վեր. և զհամարն տալ: Եւ հրեշտակքն կարի խիստ մխէին զնա յետևանց. և խիստ ցաւեցոյց զնորընծայն. և ’ի ցաւուն զարթեաւ,և փախեաւ.և ոչ եղև քահանայ: Յայնժամ ասաց եպիսկոպոսն . թէ քեզ զինչ պա տահեցաւ՝ որ չ լինիս քահանայ. Ասաց նորընծայն՝ թէ այն որ ինձ պատահեցաւ՝ թէ քեզ էր պատա հեալ.

EAP180-1-1-8_118L.jpg

NOTE

148

TEXT

Հեալ. յառաջ դուն պիտի փախ չէիր յեպիսկոպոսութէ: Ցուցա նէ առակս: Թէ ով ուտէ այն վճարէ. և զինչ մարդ որ ուտէ և ոչ վճարէ, ինքնին տալոց է հա մարն առաջի թագաւորին յոր ժամ

գայցէ:

NOTE

ճիե

TEXT

Էր իմաստուն ճարտարապետ մի. և ուսուցանէր զամ զի մաստութի իւր՝ զոր գիտէր աշա կերտին : Եւ երիս բանս ոչ ուսու ցանէր: վն այն զի կարի իմաստուն էր աշակերտն իւր. և յորժամ ուսանէր այլ ոչ կենար ՚ի մօտն . զի յոյժ սիրէր իմաստասէրն զաշա կերտն վասն խոնարհութեն: Եւ ասէր նմա որդեակ, կաց առ իս մինչև վերջին աւուրն իմ. և զայն երեք բան խրատն ուսուցանեմ քեզ՝ և գնա խաղաղութեամբ, և այլ ոչինչ պակասի քեզ: Եւ նա եկաց առ նմա մինչև յօր մահու անն:

EAP180-1-1-8_118R.jpg

NOTE

149

TEXT

անն: Եւ յորժամ՝ Հիւանդացաւ, և գիտաց զվախճանն իւր. յայն ժամ՝ ասաց ցաշակերտն իւր՝ եկ ասեմ. երեք խրատն: Եւ ասէ ցնա մէկ զքո աղէկ օրդ վատի մի տար . երկու յետնուց՚ի վեր ճանապարհ մի գնար. երեք զինչ աչօքդ տես նուս զայն մարդոյ մի ասէր: Մե ռաւ, և թաղեաց զնա . և ել գնաց ՚ի քաղաք մի: Եւ ետես անդ գեղե ցիկ դուռն մի բարձր. և յառաւ օտն աւելեաց զդուռն, և ջուր ցանեաց, և գնաց: երկու օրն զայն արար. և երեք օրն աշ կեցան, և ըմբռնեալ տարան զնա առ դրան տէրն: Եւ ասէ պարոնն ուստի ես, և նա զիրաւն ասաց. և ետես պարոնն զտղայն, զի կարի գեղե ցիկ էր, և իմաստուն: և ասէ ցնա, որդեակ՝ մեր թագաւորին որդի չունի. և դու կամիս՝ և տարայց զքեզ՝ զի եղիցիս որդէգիր, և ժա ռանգ աթոռոյն: Եւ ասէ, դու

NOTE

դի

EAP180-1-1-8_119L.jpg

NOTE

150

TEXT

գիտես տէր իմ: Եւ առեալ զնաառ թագաւորն տարաւ, և առ թագու հին. և արարին իւրեանց յորդի . և եղև որդի թագաւորին: Եւ յաւ ուր միում եւ թագաւորն յորս է ըէոց. և ունէր թագաւորն զմա տանի մի, որ յաջողութե տլիսմ իվերայ ականն գրեալ էր. և զայն մոռացեալ թագաւորն ՚ի ներքև բարձին: Ասաց յորդէգիրն իւր. թէ ՚ի ներքև բարձին մոռացայ զմատանին. գնա և բեր զմատանին յաջողութե: Եւ նա եւ յերիվար, և գնաց զմատանին առնուլ. և ետես զմէկ նայիսլն յանկողին թա գաւորին. և նա էառ զմատանին, և գնաց. և ոչումէք յայտնեաց ըզ բանն: Յայնժամ խորհուրդ արա րին նայիսլն և թագուհին. զի յոր ժամ գայցէ թագաւորն սպանա նել տան զորդի թագաւորին : Եւ ՚ի գալ թագաւորին գնաց թա գուհին ընդ առաջ. և ՚ի զուր մատ նեաց

EAP180-1-1-8_119R.jpg

NOTE

151

TEXT

նեաց զանմեղ մանուկն. թէ յոր ժամ եկն ՚ի գիշերի տանել զմա տանին, և դատապարտեաց զիս. ով կինն պետաբրէի զյօսէփ: և թագաւորն յամաչելոյն ոչ սպան զմանուկն: Այլ ուղարկեաց զնա այլում թագաւորի որ ընդ իշխա նութբ էր եղեալ իւրն: և գրեաց առնա գիր այսպէս: Թէ յորժամ գայ թղթիս բերօղն առ ձեզ. ըզ գլուխն կտրեցէք, և յիս ուղարկե ցէք: Եւ մատնէհլքեցին զթուղթն արքունական մատանեաւն. և ե տուն յորդէգիր թագաւորին. և

առել գնաց: Եւ գրեալ կայր իմէջ թղթին. եթէ ասէ, որդի եմ թա գաւորին, կամ նոյիսըն, կամ հաւա սարն իմ, մի լսէք նոցա՝ հատէք ըզ գլուխն: Եւ առեալ զթուղթն գնաց. և յորժամ յետինքն մօտ ե ղև ՚ի գեւղ մի . յիշեաց զբանն իմաս տասիրին թէ յետնուց ՚ի ճանա պարհ մի գնար. յայնժամ զտապլ պազն

EAP180-1-1-8_120L.jpg

NOTE

152

TEXT

պազն էզարկ՝ և ելայն նայիսըն զո ետես յանկողին թագաւորին. ե առաջ և առեալ տարաւ ՚ի տու իւր, և ասաց . Հանգիր, կեր, ար և ուրախլեր. և տուր թուղթդ յ որ տան իմ առ թագաւորն . և քե խաբար բերեմ.և նա ետ զթուղթ և առեալ գնաց: լւ Հատին զնոր գլուխն, յորժամ կարդացին թուխթն. և ետուն յայլ ումն մար որ ունէր, և բերէր ՚ի գիւղն . զայն էառ որդի թագաւորին րեալ ետ՚ի Հայրն: լւ տեսեալ զ զարմացաւ թագաւորն . և գիտ զբանն՝ որ յլ ծ էր յաջողեալ: | ասէ որդեակ զինչ գործեալ է զի քեզ էր որոգայթս պատր տեալ.՚ի քո որոգայթն նա անկա լւ ասաց՝ թէ դաւիթ ասէ. թ ուցին ինձ զորոգայթ. և անկան քեանք՚ի նոյն: Ցուցանէ առա թէ մարդ մարդոյ չար առնէ յորժամ որոգայթէ՝ ձգէ՝ և որ

NOTE

10

EAP180-1-1-8_120R.jpg

TEXT

ԲԱՑԱ- ԿԱՅՈՂ ԷՋ

EAP180-1-1-8_121L.jpg

TEXT

ԲԱՑԱ- ԿԱՅՈՂ ԷՋ

EAP180-1-1-8_121R.jpg

NOTE

155

TEXT

գնաց կախարդն առ սեաւ թագաւ որն. և ասաց՝ այն սեաւ թագաւորն ցկախարդն . Թէ իմ՝ չարադատ մշակ՝ այսօր ինչ ես արարեալ՝ և կամ ինչ ես վաստակեալ: Եւ ասէ կա խարդն . թէ զայս պատանիս բերի՝ որ երկիրպագանէ քեզ: Եւ թա գաւորն ասաց ընդ պատանին . ով պատանի . թէ երկրպագես ինձ, զքեզ հազարապետ կարգեմ՝ զօ րաց իմոց: Յայնժամ՝ աղօթքն ՚ի միտն անկաւ՝ զի մօտէր առաւօտն: Յայնժամ՝ ասաց պատանին, թէ ես սովորեմ՝ այսմ՝ ժամու երկիր պա գանել Քի՝ որ խաչեցաւ վե մեր՝ և ազատեաց զհոգիս մեր ՚ի դժո խոց՝ և ՚ի ձեռաց սատանայի: Եւ ան կեալ երկիրէպագ ը արևելս՝ և օրհ նեաց զԱծ: Յայնժամ՝ եղև ճայթ մունք, որոտմունք ահագինք. և պա տանին յուշաթափեալ անդ . և յոր ժամ յուշաբերեալ՝ եղ իվեր՝ և զոչ ոք ետես բայց զինքն իմէջ անդուն

NOTE

ժա 2 դաւ

EAP180-1-1-8_122L.jpg

NOTE

156

TEXT

դաշտին. և հրեշտակն եկեալեցոյց զճանպրհն՝ և գնաց՚ի շէնն. և պատ մեաց զեղեալ գործսն: Յայնժամ լուեալ թագաւորն. և տարաւ զպա տանին առ ինքն՝ և ասէ : Ո՛վ բարի պատանի, ես յերուսաղէմ պիտի գնամ, եկ տանիմ զքեզ ընդիս՝ որ երկիրպագանես Քի, և նբ գե րեզմանին. և ամ տնօրինական տե ղեացն Քի Այ մերոյ: Եւ գնա ցեալ թագաւորն՝ էառ զպատանին ՚ի հետ. և յորժամ երկիր պազեաց Քի և նբ տնօրինականացն . և յոր

ժամ գնացին երկիր պականել ինքն և թագաւորն. Քի պատկերն խօ սեցաւ, և ասաց . ով պատանի ՚ի միւս անգամ գալըստեան իմոյ քեզ բիւր հազարաց Տր առնեմ. փո խանակ այնորիկ որ առաջի զօրացն դիւաց ինձ երկիրպագեցեր ան ահ. և զիս Ած դաւանեցեր և Հաւատացեր: Ցուցանէ առակս . թէ Ած զաղօթաւէրն յամ չարեաց փրկէ

EAP180-1-1-8_122R.jpg

NOTE

157

TEXT

փրկէ և յամ փորձանաց դիւաց. և յայնկեանքն փոխարէն Հատու ցանէ : Ապ հրամայէ աւետարանն Քի. թէ ընդ միոյ երեսուն. և ընդ միոյ վաստուն. և ընդ միոյ Հա րիւր. որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ : Աղուէսն և արծուին եղեն եղ բարք. և միամտութի արարին, և զերդումն և դաշինս եդին. որ զորսն ՚ի մի տեղ բերեն և ուտեն. Եւ յորժամ աղուէսն որսայր՝ գնայր արծուին և իմէկ տեղ ուտէին. Եւ յորժամ որսայր արծուին առ նոյր զորսն, և երթայր նստէր ՚ի բարձր վէմս. և աղուէսն ոչ կա րէր ելանել անդ: Եւ գիտաց ա ղուէսն զնենգութի արծուոյն. և ասէ՝ ով եղբայր, նենգաւոր և ա գահ երևիս, և աւազակ: Ցուցա նէ առակս: Թէ մարդ Հետ ընկե րոջ ծուռ լինի. նման է գողոց և

NOTE

ճխէ ժա 3 աւա

EAP180-1-1-8_123L.jpg

NOTE

158

TEXT

աւազակաց. և յուդայի, և մար դասպանի:

NOTE

ճխը

TEXT

Այր մի ցանեալ էր յընկզի ծառի տակն պարտէզ մի ձմերուկ՝ և՚ի ժամ պտղոյն եկն ետես ձմերուկն մեծամեծ . և Հայեցաւ ՚ի ծառն՝ ետես զընկուզն մանրագոյն: և ա սաց: Տր Ած, զամ զորինչ ստեղ ծեր՝ ՚ի կարգի է և նմանաւոր. բայց այս երկու պտուղս անդէպ է և աննման: Եւ այրն պառկեալ կայր ՚ի ծառին տակն՝ և ՚ի վեր Հայէր. և Հրամանաւն Այ ոստեաւ ըն կուզմի՚ի ծառէն.և կարի խիստ գի պաւ ՚ի ճակատն, և պատառեցաւ՝ և ել արիւն:Եւ այրն ելեալ աղաղա կէր առ Ած, և ասէր. Տր Ած, զամ զորինչ ստեղծէր ՚ի կարգի է և նմանաւոր. և ովոք քոյ ստեղծուա ծոյն բան ասէ . նա ճակատն քան զիմս պիտի լինի. և թէ ձմերուկ էր ընկուզն՝ զիս պիտի սպանանէր :

NOTE

Օձ

EAP180-1-1-8_123R.jpg

NOTE

159

TEXT

() ի այրն ասաց. թէ ձմերուկն պի տէր ընկուզի տեղն. և ընկուզն ՚ի ձմերուկին թուփն : Ցուցանէ առակս: Թէ ամ մարդ ասէ՝ զամ զոր արար Ած բարի է՝ և ամենևին նմանաւոր. և մարդն ոչ պիտի որ Այ ստեղծուածոյն բան ասէ՝ և ոչ Հաւանի. և ոչ ասէ, խոտան է և գէշ. վայ ինձ վայ: Այր մի զիւր ժամանակն ՚ի մեղս էր. և ազգի ազգի չարեօք լը ցեալ. և բնաւ ոչ Հիւանդացաւ: Եւ յաւուր միում գնաց ննջեաց ը Հովանեաւ եկեղեցւոյ միոյ՝ և եկն ՚ի զղջումն՝ և ելեալ սկսաւ եկեղե ցի շինել: Եւ յորժամ կատարեաց զեկեղեցին, Հիւանդացաւ զցաւ մահուն. և ասաց այրն Տր Ած, այս քանի ժամանակ էր իմէջ մեղաց էի, և իմէջ չարեաց՝ և ոչ Հիւանդա ցայ.

և յորժամ զեկեղեցի շինե ցի՝ Հիւանդացայ՝ և մեռանիմ. մի

NOTE

ՃԻԹ ժա 4 թէ

EAP180-1-1-8_124L.jpg

NOTE

160

TEXT

թէ եկեղեցի շինելն անընդունելի է: Եւ'ի նոյնժամն երևեալ պահա պան հրեշտակն ասաց: թէ մի հա կառակ լինիր. Ած քեզ ողորմե ցաւ. և քո զեկեղեցի շինելն քան զամ գործ լաւ համարեցաւ : Ցու ցանէ առակս: Ով զղջանայ, և 'ի մեղաց դառնայ. Ած զմեղսն նր ոչ յիշէ. և Ած կամի. որ մարդն բարի գործէ՝ և ապա մեռանի. զի իւրն արժանի լինիցի . զի Ած ողոր մած է :

NOTE

ճլ

TEXT

Եկեղեցին պարծեցաւ'ի սբ իւր՝ և ասաց թէ եմ տաճար և տուն Այ: Եւ յիս զան քահանայք և ժո ղովուրդք, և աղօթեն. և մատու ցանեն զպատարագ՝ և հաշտի Ած ընդ աշխարհի՝ և մեղաց թողութի լինի: Յայնժամ գայ ջաղացն, և ասէ ցեկեղեցին. թէ զինչ ասես ճշմարիտ և արդար է . բայց դու զիմ երախտիքն մի մոռանար. որ գիշեր

EAP180-1-1-8_124R.jpg

NOTE

161

TEXT

գիշեր և ցերեկ աշխատիմ, և դա տիմ, որուտեն քահանայք և ժողո վուրդք՝ և ապա զան առ քեզ աղօ թեն, և երկիր պագանեն Այ: Ցուցանէ առակս: Թէ կան աշ խարհի մարդիկք, որք հնապազ

դատին, և աշխատին ոպ մեղու. թագաւորք, և իշխանք, և քահա նայք, և ժողովուրդք, և ապա մարդիկք ուտեն զվաստակս, և ապա երթան յեկեղեցին, և յիշեն զԱծ, և օրհնեն: Եզն և ձին խօսեցան ընդ միմեանս. և ասաց ձին ընդ եզն. թէ դու ով ես: և կամ զինչ պէտք ես: Ես ձի եմ՝ որ թագաւորք՝ և իշխանք՝ և պարոնայք կազմեն զիս ոսկի զար դով՝ և բազմին իվր իմ: Եւ ասաց եզն թէ ամէն աշխարհի պարծանք ես եմ՝ որ վաստակիմ, և չարչարիմ. և խոնճիմ. և ապա դու և թագաւ որդ և ամ ժողովուրդն ուտէք ըզ վաս

NOTE

ճլա ժա 5

EAP180-1-1-8_125L.jpg

NOTE

162

TEXT

վաստակն իմ. եթէ իմ վաստակն ոչ լինի. դու և քո թագաւորն մէկ Հետ մեռանիք. և դու երախ տամոռաց էրլինիս : Ցուցանէ ա ռակս: Թէ մարդ կայ՝ որ աշխատի քան զեզն. և կայ մարդ որ Հանա պազ ձի Հեծնու, աւերածէ աշ խարհի . եթէ աշխատաւորն ոչ աշխատի ոպ եզն.նա մեռանի ինքն և Հեծնօղն :

NOTE

ճլը

TEXT

Անասուն մի բեռնակիր բարձեալ ունէր յինքն մէկ Հակն մահա դեղ. և մէկն սուսեր սպանման . և գնացեալ դէմ էառ'ի նեղ տեղաց մի 'ի ճանապարհին, և ոչ կարէր ան ցանել: Եւ յորժամ նեղեաց զինքն՝ 'իմէկ դիհէն սուսերն խոցեց՝ և մէկ դիհէն մահադեղն Հեղաւ՝ և սպան զնա: Ցուցանէ առակս: Թէ բեռ

նակիր մարդս. որ պիտի բարին բառնայ Հանապազ ’ի յողն իւր . և մարդն յիմարեալ է 'ի ձեռն սա

NOTE

տա

EAP180-1-1-8_125R.jpg

NOTE

163

TEXT

տանայի. և փոխանակ բարւոյն մեղք բարձեալ’ի յուշն իւր՝ որպէս սուր և մահադեղ նմա: Խլուրդն բնութի ունի՝ որ հա նապազ զբոյնն ոչ գտանէ՝ և ըզ գետնի հողն խլր տայ՝ և ’ի մէկ տեղ ոչ դադարի: ասեն թէ ինքն գէշ հոտ ունի, և ինքն իւր հոտոյն տե ղեաց ’ի տեղի փոխի . զի գիտէ թէ հոտն ’ի տեղեացն է՝ աստ և անդ հողն ’ի վեր տայ. և գէշ հոտն յինքն է: Ցուցանէ առակս: Թէ կան մարդիք յաշխարհի՝ որ միշտ և հա նապազ տեղեաց ’ի տեղի փողին՝ զի անհանգիստ են. և գիշահոտ յան հանգստութէն: Դարձեալ ցու ցանէ . որ բնութի բարի է գործքն չար մարդոյ . նմա անդէպ թուի և ատէ զնա մահու չափ՝ և անհան գիստ պահէ իւր զչարն ոչ խայտ առակի:

NOTE

Ճլգ կեն

EAP180-1-1-8_126L.jpg

NOTE

164

NOTE

ճլդ

TEXT

Կենդանի մի կայ ’ի ծովն խիստ անոխակալ և անվնաս . և խոտ արածի՝ և մէկ եղջիւր կայ ’ի ճա կատն.և ծայրն ’ի վայր է. և

խաչան ման եղջերովն երթայ զծովն խառ նէ՝ և ջուրն քաղցրանայ . և ըմպէ ինքն, և զինչ՝ որ անդ կենդանիք նմա Հային, որ երթայ ՚ի ծովն և խառնէ զջուրն՝ զի ինքեանք ըմպեստ ցեն: Ցուցանէ առակս: Թէ ամ մարդ չարութի ոչ ունի յԱ յ՝ ոպ այն կենդանին . և բարի մարդիք վարդապետք են, և ճգնաւորք . և ընտրեալք մարդիկք են,որք չունին զչարութի. և նք կարօղեն. զդառն քաղցրացուցանել՝ զչարն ՚ի բարի դարձուցանել:

NOTE

ճլե

TEXT

Իշուն բնութի և սահման է. որ ՚ի դժուարին տեղ ընկնի կամ շա ղախրի. այլ այն տեղովն չի գնար՝ ի մէջ կենդանեաց և անասնոցն քան զէշն յիմար ոչ կայ. և արապն ՚ի

NOTE

շուն

EAP180-1-1-8_126R.jpg

NOTE

165

TEXT

շուն յիմար աստ . և մարդ մարդոյ աստ քան զէշ յիմարես: Ցուցանէ առակս: () մարդն որ փորձեալ ես մէկ Հետ. նա այն է զոր տեսեալ ես. և մարդն իվ ր իւր բանին Հարկնոր պիտիկենայ . և զայն բանն որ փոր ձեալ է մէկ Հետ նա այլ անձն ոչ առնու. և թէ առնու նա քան զէշն յիմար է՝ և այլ ան գէտ է : Ե ր այր մի՝ և ունէր կին միանգզամ. օրմի լուաւ յիմաստնոց՝ թէ աղէ կութի արա՝ ՚ի ծովն ձգէ՝ և վատի մի մնար . և այրն սովորութի և սահ մանք արար իւրն . որ ամէն օր մէկ Հաց տանէր և ձգէր ՚ի ծովն . և մէկ ծովային զայր և առնոյր ըզ Հացն՝ և տանէր թագաւորին . զայս աւուր

միում՝ ասաց ծովայինաց թագաւորն. թէ զայն մարդն բէ րէք՝ որ զհացն ՚ի ծովն արկանէ որ ես զիւր աղէկն առնեմ. և այն ծովայինն զհացն տանէր թա

NOTE

ճլզ զաւո

EAP180-1-1-8_127L.jpg

NOTE

166

TEXT

զաւորին . եկն յայն տեղին որ ըզ հացն ՚ի ծովն ձգէր: Եւ յորժամ էարկ ՚ի ծովն՝ ձայնեաց թէ մի գնար : Մեր թագաւորն ասաց թէ յիս բերէք զայն մարդն՝ որ զիւրն աղէկ առնեմ, և ես այն եմ որ ամէն օր զհացն թագաւորին տանիմ, որ ուտէ : Եւ խրատեաց զմարդն, թէ ինչ որ տայ քեզ՝ մի առնուր . և ասա, մէկհեղ բեր որ լեզու իմ ՚ի բերան քո հասուցանեմ: Եւ ան ցոյց զքօղ յերեսս մարդոյն . և ա ռեալ գնաց առ թագաւորն : Եւ թագաւորն ասաց՝ ով մարդ՝ ուզէ զինչ կուզես՝ տամ քեզ . և նա ա սաց՝ թէ բեր լեզուս ՚ի բերան քո Հասուցանեմ: Եւ իբրև Հասոյց զլեզուն ՚ի բերանն յայնժամ ու սաւ ամ կենդանեաց լեզուս . զա զանաց, և թռչնոց: Եւ յորժամ ել ՚ի ծովէն, և գնաց պառկեցաւ ՚ի վիմին տակն: Եւ եկեալ թռչուն մի նստաւ իվր վիմին . և ասէր, թէ այս

EAP180-1-1-8_127R.jpg

TEXT

ԲԱՑԱ- ԿԱՅՈՂ ԷՋ

EAP180-1-1-8_128L.jpg

TEXT

ԲԱՑԱ- ԿԱՅՈՂ ԷՋ

EAP180-1-1-8_128R.jpg

NOTE

169

TEXT

էր այր մի, և ունէր կարի սիրուն սիրելի մի: և գնաց այրն այն ՚ի գինարբումն ՚ի մաճլիս. և սիրե լին անդ ոչ էր: Եւ իբրև խորին գի շեր եղև. յիշեաց զսիրելին իւր՝ և գնաց առ սիրելին ՚ի մէճլիսն. և սիրելին մեծարեաց զնա. և նստոյց առ ինքն. և անդ քառասուն մարդ կայր՝ և ամէնն զաւաթ ետուն. և սիրելին ոչ ետ՝ զի խիստ գինով էր: և խնայեաց ՚ի նա: Եւ յորժամ ան կաւ ՚ի գինւոյն առեալ զնա ՚ի շալ ակն՝ տարաւ ՚ի տուն իւր: Եւ ասաց, դու ով ես որ տնիս զիս՝ և նա ասաց, ոչ ճանաչես զիս եղբայր, և յայնժամ գիտաց՝ որ սիրելին էր: և ասաց թէ ամենեքեան ինձ զաւաթ ետուն. և դու ոչ: Տայր խվ ը գլխոյն, և ծե ծեաց զնա մինչև ՚ի տուն. և սիրե լին ոչ եթող զնա. մինչև պառկե ցոյց զնա՝ և անկողնով ծածկեաց: Եւ երբ լուսացաւ. իմացաւ զե ղեալսն՝ և ամաչէր: Եւ ասաց կնոջն

NOTE

ճլէ 12 ժբ զենէք

EAP180-1-1-8_129L.jpg

NOTE

170

TEXT

զենէք զզուարակն՝ և բերէք զմեր սիրելին՝ և պատուեմք : Ցուցանէ առակս : Մարդ մէկ Հետ՝ կամ եր կու՝ կամ երեք . զսիրելւոյ ճամբն վերցն է . նա յետին խայր պիտի լինի: Եւ յորժամ գնաց սիրելին՝ թէ ՚ի տունն մեծարէ զմիս սիրե լին, անկաւ յոտս նր՝ և ասէ: ով եղ բայր, մի մեղադրեր ինձ: Եւ միս սիրելին ասէ . ով եղբայր, Համբե րելով լինի՝ որ չարն՚ի բարի դառ նայ . և լինի զուարակն պարարակ :

NOTE

ճլբ

TEXT

Նռենին ասէր ընդ ձիթենին՝ թէ ես կարմիր նուռն ունիմ. և աղէկ եմ քան զքեզ: և ձիթենին ասէր ընդ նռնենին. թէ ես պտղա տու եմ՝ և ձէթ շնորհեմ լուսատու մարդկան • Ցուցանէ նռնենին զթագաւորն. և ձիթենին զքահա նայն. քանզի թէպէտ և գեղեցիկ է թագաւորն . այլ ոչ ածէ ՚ի քահա նայն , քահանայն ածէ ՚ի թագաւ որն :

EAP180-1-1-8_129R.jpg

NOTE

171

TEXT

տըն : զի քահանայն հալածիչ է խաւարի՝ որ հալածէ զխաւարն ՚ի հոգւոց մարդկան: Ձուկն յորժամ ՚ի ջրոյն ՚ի դուրս ելանէ՝ նա մեռանի: Ցուցանէ: թէ մարդն որ ՚ի պա տուիրանացն Ա յ ՚ի դուրս ելանէ, նա մեռանի հոգին. և յետ մահուն հոգին և մարմինն տանջի: Ձուկն յորժամ ՚ի կեռն գայ և առնու . նա մեռանի իձեռն կարթին : Ցուցանէ : Յորժամ մարդն ՚ի մեղքն երթայ և գործէ, նա մեռանի իձեռն սատանայի . ոպ մեռանի ձուկն իձեռն կարթին: Իմաստասէր ոմն աղքատ ունէր ծոյլ որդիս՝ և ՚ի ժամ մահուն կոչեաց զորդիսն. և ասէ: Ով որդե ակք. բազում գանձ կայ պահեալ ՚ի հարցն իմոց յայգին մեր . իսկ զտեղին

NOTE

ճլթ ճխ ճխա ժբ 2

EAP180-1-1-8_130L.jpg

NOTE

172

TEXT

զտեղին ոչ ցուցանեմ ձեզ. այլ որ աշխատի, և խորագոյն փորէ, նա՛ գտանէ զգանձն : Եւ յետ մահուան Հօրն , սկսան որդիքն ջա նալ մեծաւ աշխատութբ. և խորա գոյն վարէին. և ամէն մէկ իւրն ջա նայր զի ինքն գտցէ զգանձն: Եւ սկսաւ այգին աճիլ, և զօրանալ . և ետ բազում պտուղ. և ելից զնա գանձիւ : Ցուցանէ առակս: Թէ մեծ բարի է աշխատանքն. և շատ օգուտ է յայս կեանքս, և յայն: Իսկ յոյլքն, ոչ աստ բարի ապրին. և ոչ անդ վայելեն, ոպ ասէ գիրն . յուլից, և ծուլից փակեալ է դուռն արքայութե:

NOTE

Ճխբ

TEXT

Ասի յառակաց՝ թէ այր մի զգայլն բռնեալէր.և զոտներն կապեալ և իվերայ իշուն բարձեալ տանէր ՚ի տուն. և մարդիկք ՚ի դէմ դի պեալ ասեն,թէ այդ ինչ է որ իշոյդ ես բարձեալ: Ասէ այրն . թէ կու տա

EAP180-1-1-8_130R.jpg

NOTE

173

TEXT

տանիմ ՚ի տուն՝ որ կթեն:և իմ տղայ ոյն բերանն թանայ : Յայնժամ ասեն արքն . ով տխմար, դա զամէն աշխարհիս կթան է Հատուցեալ: զայդ կթան կու տանիս : Ասի յառակաց՝ թէ զայլ մի ելա նէր իվր լերին.ետես՚ի ստորոտ լերինն գեհ մի ոչխարաց, և ասաց խաղաղութի ընդ ձեզ . Իսկ ծերագոյն խոյ մի յոչխարացն ասէ ցընկերսն : եղբարք թէպէտ խաղաղութիս աւետարանեն՝ ա պա դուք ամէն մէկ ձեզ ճար արա րէք : Ասի յառակաց՝ թէ այր մի՝ զէշ իւր կորուսեալ էր . և խիստ աղէտալի ՚ի շուրջ գայր, և խնդր էր: Եւ տեսեալ գայլուն ասէ՝ այր դու զինչ

խնդրես : Ասէ այրն ով գայլ զիմ իշուկս կորուսեալ եմ. և չեմ գտնուլ: Ասէ գայլն, ով

NOTE

ճխզ ճխդ ժբ 3 այր

EAP180-1-1-8_131L.jpg

NOTE

174

TEXT

այր զքո էշն ես գտի: ( սէ այրն՝ բեր զէշն՝ որ տամ զքո գտնելն: ( սէ գայլն, ով այրդու՝ զքո էշն ՚ի չամուռն էր անկեր. և ես երեք օր ՚ի Հետռն եմ դատել. և ապա կարացի ՚ի դուրս քարշել: (ւ՚ի վարձին տեղն զէշն կերի: գիտէի որ աղքատ մարդ էիր. և ինձ վարձ չկարէիր տալ:

NOTE

ճխե

TEXT

սի յառակաց: թէ այրի ոմն ու նէր տասն այծս: և ունէր որ դեակ մի.և որդին այն յամէն օր տա նէր արածէր զայծերն : (ւ մայրն յամէն օր շերեփ մի ջուր լնոյր ՚ի կաթն.և՚ի խափ տայր:և ասէ որդին ցմայրն իւր. թէ էր առնես զայդ վնասդ , որ զջուրն ՚ի կաթն լնուս. և ՚ի խափ տաս: ( սէ մայրն՝ որդի մեր կաթնս քիչ է՝ այնոր Համար առնեմ թէ քիչ մի աւելի լինի մեր կաթն. որ մեզ ձմռանս թացան լինի : Իսկ յաւուր միում մինչ

EAP180-1-1-8_131R.jpg

NOTE

175

TEXT

մինչ դեռ արածէր մանուկն զայծ իսն: փոքր մի ամպ ծնաւ յերկինքն, և եկն անձրև. և ել հեղեղ՝ և տարել զայծիսն ելից ՚ի

գետն. Իսկ մա նուկն եկն յարևու առ մայրն դա տարկութբ. և միայն փայտն ՚ի ձեռին: Ասէ մայրն, որդի ուր են այծքն. և զի՞արդ յարևու եկիր այսօր : Ասէ որդին, մայրիկ իմ. այն շերեփ ջուրն, զոր ՚ի կաթն խառնէիր, և ՚ի խապ տայիր . նա ժողովեցաւ, և հեղեղ դարձաւ . և եկեալ զմեր այծերն տարաւ ՚ի գետն ելից: Ցուցանէ առակս: Թէ Այ դատաստանն արդար է . որ թէպէտ զկատարեալ Հատուցումն զրկողացն ՚ի Հանդերձեալն պիտի առնէ , նա զչաշնին ՚ի յայս կեանքս կու Հատուցանէ : Օ որ տեսեալ մարդկան Հաւատան՝ թէ գոյ Հա տուցումն ՚ի Հանդերձեալ դատաս տանին՝ և առցէ իւրաքանչիւր ոք ըստ գործոց իւրոց :

NOTE

ժբ 4 Այն

EAP180-1-1-8_132L.jpg

NOTE

176

HEAD

Ճխզ

TEXT

Ասի յառակաց թէ ՚ի բաղդատ քաղաքն՝ հիւս մի ճարտար ար ուեստիւ . երեք ամ աշխատեալ. և ՚ի յամբրաւի կտէն սեղան մի յիրեար ձգեաց զանազան յօրի նուածովք՝ որ ոչ էր տեսեալ ակն մարդոյ այնպիսի ինչ: Եւ տարեալ թագաւորի քաղաքին այնորիկ՝ կար ծէր թէ քաղաք՝ կամ գիւղ՝ կամ այլինչ պարգևս տացէ նմա: Իսկ նր տեսեալ զարմացաւ. և ուրա խացեալ ետ նմա հազար սպիտակս՝ և նր առեալ զսպիտակն. և ելեալ արտաքոյ դրանն նստաւ տրտում: Եւ կամէր իյետ առ թագաւորն յուղարկել. և մինչդեռ տրտում նստեալ էր ՚ի դրանն . եկն այր մի , և ունէր ՚ի ձեռին իւրում սա լայով մի վարդ . և տեսեալ զհիւսն տրտում:

Եհարց , թէ այր դու՝ ընդէր ես տրտում, և զինչ պատ ճառն քո :
Յայն ժամ ասաց . թէ երեք տարի է՝ որ ՚ի յամբրաւի կտէն

EAP180-1-1-8_132R.jpg

NOTE

177

TEXT

կտէն չարչարանօք զսեղան մի շի նեցի, որ ՚ի հազար հիւսէն
մէկն չկարէ շինել այնպս: նբերի թա գաւորին՝ թէ ինձ գիւղ կամ
քաղաք մի տայ. նա զայս հազար դրամս ետ. կուզեմ որ
յետուղարկեմ: Եւ այրն որ զալայովն վարդ ունէր. ասէ ցհիւսն՝
դու ըղորդ ես. այս թագաւորս զփէշաքարի հարկիւն չգիտէ: Ես
այլ փէշաքար եմ. և այսչափ տարի է յայս դուռնս կու գամ, նա
ինձ իրքմի չէ տուեալ:Եւ ասէ հիւսն ցվարդաբերն՝ դու ինչ
արուեստ գիտես . և նա ասէ՝ թէ զայս սալայս ես կու զուգեմ: Իսկ
հիւսանն Հանեալ զուրագն ՚ի գօ տւոյն՝ եդիվ ր միոյ դիհաց
մուրու ացն սալազուգին, սրբեաց մինչև ՚ի վայր ոպս մաքրչով: Եւ
նորա մտեալ առ թագաւորն այնպէս խախք դիմօք՝ տարաւ
զվարդն: Ասէ թագաւորն, ով այր դու, ըն դէր այդպս խայտառակ
երեսօք

NOTE

ժը 5 եկեալ

EAP180-1-1-8_133L.jpg

NOTE

178

TEXT

եկել ես առ իս: Եւ նա ասէ, ով թա գաւոր՝ այր մի ՚ի դրանս տեսի
տրտ ում նստեալ. և հարցի՝ թէ վնէր ես տրտում: նա ասաց՝ թէ
երէք տարի է՝ որ աշխատանօք ՚ի յամբ րաւի կտէն սեղան մի
շինեցի, և բե րի թագաւորին՝ թէ ինձ գիւղ կամ քաղաք տայ . նա

զայս հազար սպի տակս ետ . այնոր համար եմ վիր աւոր. և կուզեմ որ յետ ուղարկեմ: Ես ասացի՝ թէ ես այլ փէշաքար եմ թագաւորին. և թագաւորն ոչ ինչ փէշաքարի հարկիք չգիտէ: Եւ էհարց՝ թէ զինչ փէշայ գիտես: ասացի թէ սալա և քթոց կու զու գեմ, նա զուրագն քաշեաց ՚ի գօտ ւոյն. զմէկ դէհի մօրուսս այսպէս ՚ի վայր էհատ: Եւ առ ժամայն կոչ եաց զհիւսն, և ասէ : Արդ արև դու արարեր ուրագով զայս մարդոյ մօրուսն. և նա ասէ այո: և ասէ թագաւորն՝ թէ երդուիր ՚ի գլխուս իմ, որ զմիւս դէհի մուրու

NOTE

սոյն

EAP180-1-1-8_133R.jpg

NOTE

179

TEXT

այն այլ ածցես նոյնպէս ուրագովդ որ ես տեսանեմ: Եւ եղեալ Հիւ սանն զուրագն իվր միւս դեհի եր եսացն էած , սրբեաց նոյնպէս : Ասէ թագաւորն, թէ նստեալ գրե ցէք զգիւղն յորում՝ ինքնդ կց ինքե անն մուլք՝ յազգաց յազգս: այնպս արարեալ է առ զգիրն, և դարձաւ ՚ի տունն իւր: Ցուցանէ առակս: Թէ ոպ աստեղք զարեգականն գեղեցկութի փառաւոր ցուցան են այսպէս և փանաքի արուեստք զապականութի մեծամեծ արու եստացն յայտնի առնեն զարու եստս իւրեանց: Ասի յառակաց՝ թէ այծ մի իվերայ բարձր պատին կայր նստած : և գայլ մի եկն նստաւ յատակս պա տին: Հայեցեալ ընդ նա այծն ասէ՝ սիրտս կուզէ որ իջնում՝ ՚ի վայր . և եղջերովս զայն գայլին փորն պատառեմ, Յայնժամ ասէ գայլն, երա

NOTE

ճխէ

EAP180-1-1-8_134L.jpg

NOTE

180

TEXT

երանի էր իմ աչացս՝ որ տեսանէի՝ թէ այծն զայր եղջերովն, զիմ փորն պատառէր: Ցուցանէ ա ռակս: Թէ անիմաստ մարդն տե սանէ զինքն, կարծէ յաղթօղ զոլ մեծամեծաց՝ յաղթեալ ՚ի ձեռս նց անկանի, յայնժամ երևի տկա րութի նորա :

NOTE

Ճխը

TEXT

Ասի յառակաց՝ թէ կին մար դոյն . երեք երեսի ջուր կայ . մէկ կուսութե քօղն՝ որ յառաջ քան զամուսնանալն ՚ի մօրէն ու նի, և ՚ի ժամանակ ամուսնութեն քակի . զի յետ այնորիկ, ոչ ասի աղ ջիկ որ է կուսան, որ է Հատեալ: Երկու երեսի ջուր կնօջն, որ մինչ դեռ զաւակ չէ ծնեալ. և յորժամ ծնանի զառաջին զաւակն լուծանի կապ ծննդականութե . և արձա կեալ յառաջ բերէ զմանուկն. որ ով յայտնի հրապարակաւ ՚ի լուր ամենեցուն, թէ այս անուն նորա Հարսն

EAP180-1-1-8_134R.jpg

NOTE

181

TEXT

Հարսն զաւակ ծնաւ: Եւ նա այ նուհէտև առանց ամօթոյ առեալ զմանուկն ՚ի գիրկ. և ելեալ նստի ՚ի հրապարակս, և բացեալ զսիրտն, և զստինսն ջամբէ մանկանն, և ոչ ամաչի: Երեք երեսի ջուր է կնօջն, քանի է առաջին մարդոյն իձեռն պսակին կապեալ. և յորժամ հան դիպի, զի ելցէ յառաջին յառնէն. և լինի առն այլում. յայնժամ երեք կերպ երեսի ջուրն՝ որ է ամօթն բարձաւ

յայնպիսի կնոջէն: Եւ յայնմ հետէ, զի այլ ոչ ունի երեսի ջուր ոչ ամաչի յումեքէ . այլ զորինչ կամի, և կարէ՝ անար գելաբար գործէ . վս որոյ ՚ի շունն կայ արգելք, կամ ամօթ՝ և յայն պիսի կինն ոչ: Ցուցանէ առակս: Թէ բանականութե արգելք ՚ի մե ղաց՝ ամօթն և երկիւղն է. ըստ այնմ, թէ երկիւղիւ Տն խորշի ամ ոք:

NOTE

Առ

EAP180-1-1-8_135L.jpg

NOTE

182 ճխթ

TEXT

Ասի յառակաց. թէ այր մի յամէն տարի հարիւր մութ հաց վաս տակէր, և այնու զտուն իւր կա ռավարէր: Եւ ՚ի միում տարւոջ ՚ի հարիւրէն քսան պակաս հաց եղև: նա անդադար հոգայր և կո ծէր զինքն . թէ այս չափ հացովս ՚ի նորն զիա՞րդ կարեմք ելանել: Իսկ Ած յանդիմանել կամեցաւ զնա: ա ռաքեաց զհրեշտակ իւր . և ասաց նմա: թէ արի, երկու մութ հաց բարձիր. և տար կնոջ մի այրւոյ որ ունի դուստր մի միամօր: Եւ նա բարձեալ գրաստուն տարաւ առ այրի կինն՝ թէ զհացս զայս Ած առա քեաց քեզ: Եւ ասէ պառաւ կինն ցդուստր իւր. արի, որդեակ՝ առ զհացն զոր Տր առաքեաց մեզ: Իսկ աղջիկն ասէ ցմայրն՝ ճաշոյ հաց կե րեալեմք. և երկու բլիթ այլ կայ ՚ի սապատն որ երիկունն ուտեմք. և վաղուեան Տրն և պատրաստօղն Ած է: և ասացին մայրն և դուստրն ցայրն՝

EAP180-1-1-8_135R.jpg

NOTE

183

TEXT

ցայրն՝ որ զհացն էր բերեալ թէ որ դե, տար զհացդ քո այլումեմն աղ քատի՝ որ զաւուրս կերակուրն չու նի այդ աւելորդ է մեզ ։ և այրն զար մացաւ ընդ մեծահաւատութե կանանցն այնոցիկ։ Ինքն յամօթ եղև՝ որ զութսուն մութ հացն ու նէր. հոգայր, և ցաւէր, թէ ՚ի նորն զիարդ կարեմք ելանել։ Յուցա նէ առակս։ Թէ որք բազում ու նին, և միշտ հոգան. թէ զիարդ պիտի ապրիմք • յանդիմանին յայն ցայնէ, որք զաւուր կերակուրն մուրանալով զտանեն . և միշտ զոհանան զԱ յ, և ոչ յուսահա տին ։ Ասի յառակաց՝ թէ աղքատ երէց մի գնաց մօտ մսագործն, թէ ինձ սակաւ մի միս տուր՝ որ իմ տղայ ոցն տանիմ, որ եփեն և ուտեն։ Իսկ մսագործն ընդ կատակս հա մարեալ, ետ նմա լիտր մի միս . և ասաց

NOTE

ճծ —

EAP180-1-1-8_136L.jpg

NOTE

184

TEXT

ասաց թէ իմ հօրն պատարագ արա։ Եւ երիցուն ընդ արդարս համա րեալ եհարց զնա. թէ քոյ հօր ան ունն ինչ է, և մսագործն ասաց՝ թէ իմ հօր անունն մկսար է՝ զոր ոմանք սատուրի կոճ ասեն։ և երթեալ երի ցուն ՚ի տուն իւր, և տարաւ զմիսն տղայոցն . և գնացեալ շինեաց զպատարագն. և յիշեաց զմկսարն յանուանէ ՚ի պատարագն։ Եւ ՚ի յազդմանէն Աստուծոյ մսագործի կոճն արմատացաւ՝ և ամ աւաստաղն խանութին պատառեալ բարձրա ցաւ։ Իսկ խանութապանն զար հուրեալ գնաց անկաւ յոտս քա հանային. թէ զով յիշեցեր ՚ի պա տարագն։ և նա ասէ, զմկսար ան ունն զոր դու ասացեր. թէ իմ հօր անունն մկսար է։ Իսկ նորա զայս տեսեալ աղաչեաց կրկին պա տարագել և

իսկապէս զհայրն իւր յիշել: Ցուցանէ առակս: Թէ մի խաբիք զի զօրութին Աստուծոյ ո՛չ ար

NOTE

ժբ 12 հա

EAP180-1-1-8_136R.jpg

NOTE

185

TEXT

Համարհի, և ոչ տկարանայ այլ յամի զօրաւոր և սքանչելագործ է ած: Ասի յառակաց՝ թէ արք երկու ընկերացեալք միմեանց . և աղ քատակերպ ՚ի շուրջ գային իվր երկրի . և զայն ստացեալ գործ իւրեանց. և յաւուր միում եկին ՚ի քաղաք մի. և կամէին մտանել ՚ի նայ: Եւ եկեալ ՚ի մին դուռն տեսին, զի գլուխ մարդոյ կախեալ կայր ընդ դուռն ՚ի վայր . և ոչ կամեցան մտանել: Ասացին թէ գնամք ընդ միւս դուռն մտանեմք,որ գլուխ չէ կախած . և այնպէս զամ դրունս քաղաքին ՚ի շուրջեկեալ ոչ գտին զդուռն՝ որ ոչ կայր մարդոյ գլուխ կախած.և նաչարեալ մտին ընդ մին դուռն ՚ի ներս քաղաքին: Եւ հար ցեալ ընդ դռնապանն թէ ինչ պատճառ է, որ ձեր քաղաքիս յամէն դրունս մարդոյ գլուխ է կախած .

NOTE

ճծա ժգ 13 և

EAP180-1-1-8_137L.jpg

NOTE

186

TEXT

և նոքա ասեն՝ թէ այդ գլինիդ՝ ա մէնն օտար և դարիպ մարդկաց է : Եւ մինչ դեռ նոքա զպատճառն Հարցանէին.էՀասՀրաւիրակ՝ իթա գաւորէն որք զղարիպ մարդիկսն կոչէին. զայն երկու մարդն այլ տա րան թէ թագաւորն կու կոչէ: Եւ յորժամ գնացին,

թագաւորն մեծ արեաց զնմ, եւեղ առաջինց սեղան ամէնալից . և պատուեաց զնմ ան ուշահամ զինուվ:Եւ եղև կարիս միոյն 'ի նոցանէ՝ և ել արտաքս վասն կարեաց : Յայնժամ ասէ թագաւ որն ցայն որ 'ի տանն էր մօտ յինքն՝ թէ ափսոս չէ որ քոպիսի Հարկև որ մարդն Հետ այն պիսի անբխտ մար դոյն շրջի, և զքո լաւ անունդ վե դորա վատ անուն առնել: Յայն ժամ ասէ այրն, ոչ այդպէս է ով բարի թագաւոր, այլ այն ընկերն իմ այնպիսի թագաւորի որդի է՝ որ ձեզ վայելէ նորա Հօր փառքն և թագաւորութին.և վե Ա յ սիրոյն այն

EAP180-1-1-8_137R.jpg

NOTE

187

TEXT

այն ամենին թարէն տուեալ է. և աղքատի կերպ 'ի շուրջ կու գայ. և առժամայն եկն 'ի տուն այրն, որ 'ի դուրս էր: ւ ժամմի կացին, ել և միւսն 'ի դուրս 'ի պատճառս կա րեաց: ւ դարձլ ասէ թագաւորն ցայն որ 'ի մօտն էր, թէ կու թուի ինձոր Հարկնոր մարդոյ որդի ես՝ և թագաւորի զարմէ ես. ինչ պատեհ է՝ որ այդ ճմրի մարդդ Հետ քեզ 'ի շուրջ գայ . և զքո Հարկնոր անունդ աւերէ : Իսկ նա ասէ ցթագաւորն. գիտեա, զի թէ թա գաւորի որդի եմ, և թէ իշխանի. և կամ զինչնիցէ մարդոյ . իմ Հօր տունն դորա Հօր թափովն է շէն կացեր: և յԱ յ 'ի վայր, մեզ երախ տաւոր դոցա ազգն է: Իսկ թագաւ որն առժամայն ետ նոցա երկո ցունցն մէկ ձի սարօքն Հեծնելոյ.և մէկ քօթալ՝ և մէկ ծառայ . և շատ արծաթ, և ոսկի. և ոչ սպան զնա, այլ խաղաղութբ ուղևորեաց, որք

NOTE

զժ 2 զնա

EAP180-1-1-8_138L.jpg

NOTE

188

TEXT

գնացին զճանապարհն իւրեանց ։ Եւ իբրև հարցին ցթագաւորն, թէ ընդէր զայլ ղարիպսն սպանա նէիր՝ ասէ . վե զի այլ ղարիպ մարդ չգտայ՝ որ միմեանց լաւ էին ասա ցեալ. վե այն սպանանէի զնե. և նք որ միմեանց լաւ ասացին խլաթեցի. և հարկնոր ուղւոյ դրի։ Ցուցանէ առակս։ Թէ որք զընկերս իւրեանց առաջի օտարաց չարաբանեն . ինքեանք ընդ նմին պարսաւին, և ՚ի պատուոյ.և՚ի գլխոյն ևս ելանեն։ Ըստ այնմ, թէ որ արհամարհէ զիւրեօք՝ արհամարհի և ինքն ՚ի նմանէ . և որ զընկերն առաջի օտարաց բարեբանէ . ինքն գտանէ զշահն և զօգտութի, և ապա ըն կերն։

NOTE

Ճծբ

TEXT

Ասի յառակաց՝ թէ այր մի խիստ պարտական էր ,և ոչինչ ճարչու նէր ազատելոյ՝ և խիստ հոգայր , և նեղիւր ՚ի պարտատիրացն .և յաւ

NOTE

ուր

EAP180-1-1-8_138R.jpg

NOTE

189

TEXT

ուր միում ասէ միոմն ՚ի պարտատէ րացն ցնա, ես քեզ խրատ մի տամ, որ յամենեցուն պարտուցն ազա տիս. ապա զիմ պարտքն վճարէ. ասէ ցնա պարտականն, թէ թող Ած վկայ լինի. որ զքոյն վճարեմ՝ լուկ ճարմի արա՝ որ զայլոց պարտսն վճարեմ. ասէ

խրատատուն, թէ ովոր գայ ՚ի քէն պարտք ուզէ, դու ասա թէ խամ, և այլ ոչինչ մի ասեր: Յայնժամ պիտի առնուն զքեզ դատաւորի մօտն տանին . դու առաջի դատաւորին այլ ոչ ինչ մի ասեր՝ բայց միայն ասա թէ խամ: Իսկ դատաւորն պիտի ասէ, թէ այդ մարդդ խեւ է և յիմար՝ յում մէ կուզէք զպարտսն, թողէք՝ որ գնայ յիւր բանն . և այնպս պարտա կանն ազատեցաւ ՚ի պարտուցն: Եւ եկեալ խրատատու պարտատէրն՝ ասէ ցպարտականն. այժմ որ ազա տեցար իմ խրատովն. բեր զիմ պար տսն տուր՝ նա նմանապս և նմա

NOTE

ժզ 3 ասաց

EAP180-1-1-8_139L.jpg

NOTE

190

TEXT

ասաց խամ: Իսկ նր առեալ զնա գը նաց առ դատաւոր քաղաքին . և սկսաւ դատաւորն Հարցանել զնա՝ թէ այդ մարդ ասէ . թէ յիսուն կտոր լուացած Հաճաղ պարտի ինձ տալ: () ի՞նչ ասես,պարտիս թէ ոչ՝ և նա սկսաւ ըստ առաջնոյ պա տասխանւոյն և ասաց՝ թէ խամ: Յայնժամ ասէ պարտատէրն ցնա՝ թէ լուացած չկայ թող խամ լինի ընդ քո բանիդ . և այնպիսի ճար տարութբ էառ ՚ի նմանէ զպար տսն : Ցուցանէ : Թէ անիրաւ ութի առնելն ոչ միայն ՚ի Հանդեր ձեալ դատաստանին պիտի խայ տառակի . և ուրացութին իվերայ Հոգւոյն պարտք մնայ . և ամօթն զոր մարդկան առաջի կրէ :

NOTE

ճծզ

TEXT

Ասի յառակաց՝ թէ երկու արք մի մեանց յոյժ բարեկամք գնա ցեալ ՚ի ճանապարՀորդութի . և մինն զեննեալ ՚ի վաճառն . և միւսն շահեալ

EAP180-1-1-8_139R.jpg

NOTE

191

TEXT

շահեալ փարթամ, դարձան և գայ ին ՚ի տունս իւրեանց՝ և եկեալ մօ տացան ՚ի քաղաքն, ասէ աղքատ ընկերն ցհարուստն թէ եղբայր . շատ բարութիս . և սէր գիտեմ ՚ի քէն, նա ամենեցուն գլուխն այս է, զոր խնդրեմ ՚ի քէն, և ՚ի վերէ քան զամէնն. պիտիր՝ որ ինձ եղբայրութի առնես՝ հազար սպի տակ փոխ տաս ինձ . որ այս տարի զիմ տանն, և զիմ տղայոց պէտքն լնում. և յայլ տարի յայս օրս զքո դրամն վճարեմ. այնպ հաշուեաց՝ թէ զիմ տղայսն ՚ի գերութենէ զնես քո հոգւոյդ համար : Իսկ նր լուեալ զայս պարզմտութբ ետ հա զար դրամն խղճալով աղքատութե նր . և ելեալ ՚ի տեղւոջէն գնացին ՚ի տունս իւրեանց: Եւ իբրև լցաւ տարէ գլուխն. երթել տուօղ դրա մին առ պարտականն, և ասէ. տարի մի բոլոր եղև, հիմայ զիմ դրամն տուր՝ որ իմ տանն, և իմ տղայոցն

NOTE

ժգ 4 ՚ի

EAP180-1-1-8_140L.jpg

NOTE

192

TEXT

՚ի պէտք անցուցանեմ: Իսկ նր պա տասխանի տուեալ ասէ . ես քեզ դրամ չպարտիմ, և յորժամ բըռ նադատեաց՝ ասէ ցնա, եկ՝ որ եր թամք ՚ի դատաստան առ դատաւ որն: Եւ յորժամ եկին,

ասէ դա տաւորն ցերկուսն, զդրամն առեալ ես թէ ոչ . և ցոմն թէ վկայ և գիր ունիս : Եւ իբրև գիտաց թէ ոչ գիր կայ, և ոչ վկայ ՚ի մէջն, ա_ սէ ցայրն որ զդրամն էր տուեալ. թէ յայն տեղն ուր ետուր զդրամն ՚ի դայ՝ մարդ կայր ՚ի մօտն, գրաստ կայր, ձի կայր. ասէ տու օղ դրամին, թէ ոչինչ չկայր ՚ի մօտ մեզ՝ ՚ի վեր Ած էր, և ՚ի վայր մեք երկուքս : Սա ողոքելով խընդ րեաց, և ես խղճացի և ետու. այժմ ուրանայ : Ասէ դատաւորն, ՚ի յայն տեղն՝ ծառ կայր՝ թուփ կայր՝ քար կայր . ինչ տեղ էր այն տեղն: Ասէ դրամի տէրն՝ ոչ ծառ կայր՝ և ոչ թուփ՝ լոկ քարատակ մի է. նստաք

EAP180-1-1-8_140R.jpg

NOTE

193

TEXT

նստաք անդ, Համարեցի ևետու յինքն, ևելեալ եկաք իմիասին ՚ի քաղաքն՝ դա յիւր տունն, և ես յիմ տունն: ասէ դատաւորն ցդրա մին տէրն՝ կարես զքարն զայն բե րել՝ կամ կոտրել ՚ի յայն քարէն. և նշան բերել: Իսկնր ՚ի դուրս վա զեալ՚ի դրամին կսկծոյն՝թէ գնամ զայն քարն լծօք բերեմ կամ կոտ րեմ, և նշան բերեմ: Եւ յորժամ գնաց նա, ասէ դատաւորն ցմիւսն՝ որ ՚ի մօտն մնաց՝ թէ կարէ զնա շար ժել ՚ի տեղեացն. կամ կարէ կոտ րել, և նշան բերել: ասէ՝ որ ուրա նայր զդրամն . թէ զհազար լուծք լծէ՝ չկարէ զայն քարն շարժել ՚ի տեղեացն . և թէ Հազար քար դործ բերէ՝ չկարէ կտորմի կոտ րել՝ զի ապառաժ քար է : Յայն ժամ դարձուցեալ զայրն ՚ի յետս, որ գնայր . և ասէ ցուրացօղ դրա մին, թէ գնա, և տուր զիւր դրամն յինքն, զի դու եղեր վկայ՝ որ պար

NOTE

ժզ 5 տիս .

EAP180-1-1-8_141L.jpg

NOTE

194

TEXT

տիս . և այնպէս յամօթեղեալ վճարեաց զպարտսն : Ցուցանէ առակս, թէ դատաւորն այնպէս պարտէ լինիլ. որ ՚ի դատաստան առնելն, բանին ելք գտանէ. որ զի րաւունսն 1 յ չթողու: ըստ այնմ, որ ասէ սաղօմօն . որ Հանճարեղն իցէ , զառաջնորդութի:

NOTE

Ճծդ

TEXT

Ասի յառակաց՝ թէ միակեց մի սա տանայի ուխտ եդ. որ տարի մի՛ի պահս կենայ. թէ զնա ՚ի մե ծութի Հասուցանէ . սատանայ յանձնէառ կատարել զխնդրու ածս նր: յորժամ վճարեաց զպահսն շարժեաց զեպիսկոպոս քաղաքին, որ եդ զնա եկեղեցապան. և ՚ի միւս տարւոջն շարժեաց՝ որ օրհց զնա աբեղայ. և ՚ի միւս տարւոջն եղև մեռանիլ եպիսկոպոսին՝ շարժեաց զթագըն,և զքաղաքացիսն . առնել իւրեանց եպիսկոպոս: ւ յորժամ կամէր զգեստաւորիլ՝ զի ժամ արաս

EAP180-1-1-8_141R.jpg

NOTE

195

TEXT

արասցէ. եկն սատանայ՝ ետ ՚ի նա փո քրիկ չորեքաղի մի, և ասէ. իմ ա մէն լաւին փոխարէն. որ զքեզ յայդ մեծագոյն աստիճանդ Հասուցի, զայս արա. առ զայդ փոքրիկ չորեք աղիդ ՚ի ծոցդ դիր. և զզգեստդ իվր Հագիր: Եւ յորժամ ՚ի բեմն ելանես. նա մէկ մատամբդ իվերայ մէկ լարին զարկ. և այնպս արա րեալ՝ պատրեալ եպիսկոպոսին. յան կարծակի Հազարք Հազարաց, և բիւրք բիւրոց տամպաղի, և թմբկի, և սուռնյի, և չանկի, և չորեք

աղւոյ ձայն Հնչեաց՝ իմէջ եկեղեցւոյն ։ () արՀուրեցան թագաւորն և ժո ղովուրդն՝ և ոչ զոք տեսանէին Հար կանօղ նուագարանացն ։ Հրամայ եաց թագաւորն բռնել զդուռն ե կեղեցւոյն՝ և զիւրաքանչիւրոք մեր կացուցանել և փնդռել. և այն պէս արարեալ ոչ զոք գտին պատ ճառ: Եւ մնաց թագաւորն և եպիս կոպոսն միայն. թագն ևս մերկա ցաւ.

EAP180-1-1-8_142L.jpg

NOTE

196

TEXT

ցաւ. և ոչ գտաւ առ նա ինչ: և յոր ժամ մերկացուցին զեպիսկոպոսն. գտին'ի ծոցն զչորեքաղին այն: լ,ւ 'ի չարչարանս արկեալ խոստովան եղև զուրացութին,և զդաշինս զոր եդեալէր ընդ սատանայի: Յայն ժամ կապեցին զնա 'ի յագի ամե Հի ձիոյ՝ և թողին 'ի դաշտի. ման ռամասնաբար կոտորեալ եղև մար մին նորա . և այնպս աւանդեաց զդառնացեալ Հոգին 'ի ձեռն սա տանայի: Ցուցանէ առակս: Թէ ովրք սատանայի բարւոյն, և ուխ տին Հաւատոյ՝ բաժին նր վերջն այնպէս լինելոց է ։

NOTE

ՃԺԵ

TEXT

1 սի յաւակաց՝ թէ կայ կենդանի մի՝ որ լուանայ զորովայնն. և եր թայ ննջէ 'ի ծերպս վիմաց մինչև 'իմուտ գարնանային ժամանակաց. և թէ սակաւ կերակուր մնայնեխի և սպանանէ զինքն: Ցուցանէ ա_ ռակս ։ Թէ մարդ որ թէ սակաւ մեղք

EAP180-1-1-8_142R.jpg

NOTE

197

TEXT

մեղք մնայ առ քեզ առանց խոս տովանութե, և ապաշխարութե. և ընդ քեզ իջանէ ՚ի գերեզմանն: նա յօրն վերջին ՚ի Հուրն առաքէ զքեզ՝ և տանջէ:

NOTE

ճծզ

TEXT

Ասի յառակաց՝ թէ ժողովեցան թռչունքն. և ընտրեցին, և ե դին զարտուտն . և օծին իւրեանց թագաւոր՝ զի չէ գիշակեր. և է արթուն և սղմոսասաց: Եւ սկսան ՚ի գնալ. և գան ՚ի գեղջ միոյ սահ ման՝ և մանկունքն եղեալէին որոյ զայթս վե ձագուց. և արտուտն յանց կացեալ. և էառ զհատ ցորե նոյն . և բախտն անկաւ ՚ի պարա նոցն, և անշնչացաւ : Եւ եկեալ զօրքն՝ Հանին զբախտն, և ասեն. ով բարի թագաւոր իմաստուն և սաղմոսասաց, զի՞նչ է այս . որ պատահեցաւ քեզ: Եւ նա ասէ, գիտացէք, զի ագահութին տարաւ զխելք իմ, քանզի խորհեցայ ծած կաբար

EAP180-1-1-8_143L.jpg

NOTE

198

TEXT

կաքար ուտել զցորեանն վե սով ու զի մի տեսցէ ոք ՚ի զօրացն : Ցու ցանէ առակս: Թէ բազում սբ կա գաւորք և առաջնորդք կորնչին վե ագահութե և արծաթսիրուե և այնու գայթագղեցուցանեն ըզ միտս ախմարաց՝ և լինին ողորմելիք

NOTE

ՃԺէ

TEXT

Ասի յառակաց՝ թէ այր մի գնաց առ դատաւոր քաղաքին . և խոստացաւ թէ քեզ բղուղ մի իւղ տամ. վաղիւն յորժամ ես, և ոտխն իմ առ քեզ գամք. զիս իրաւ արա ՚ի դատաստանին: Եւ ՚ի միւս աւուրն յորժամ եկին ՚ի դատաստան, դա տաւորն զիւղոյն տուօղն իրաւ ար ար. և գրեաց զգիր Հաստատուե: և գնաց այրն, որ զիւղն խոստացաւ , ելից զբղուղ մի յարդով մինչ և ՚ի ճիտն, և իվր յարդին երկու և երեք շերեփ իւղ եդ , և զբերան բղղին սերեկեաց. և եբեր առ դատաւորն, և գնաց : Եւ յետ սակաւ աւուրց ասէ

EAP180-1-1-8_143R.jpg

NOTE

199

TEXT

ասէ դատաւորն ցսպասաւորն իւր. թէ սիրտս իւղով բրինձ կուզէ՝ բեր զայն մարդոյ բերած իւղն. և բրինձ եփէ : Իսկ նա վառեալ կը րակ. և եդ զթաւայն իվր կրակին. եբեր զիւղնյառաջ՝ եբաց և եզարկ զղգալն ՚ի բղուզն. նա յարդն ՚ի դուրս վազեաց : Իսկ նա աղաղա կեաց թէ զբղուզն իւղով բերին , նա յարդ է դարձեալ: Յայնժամ՝ իմացաւ դատաւորն : և ասաց թէ այն մարդն զիս խաբեաց. ես Հետ նր Հանեմ: Եւ յաւուր միում՝ այն մարդն դատաւորին դռնովն ան ցանէր. և տեսեալ դատաւորին զայրն զայն՝ ասէ. ով այր դու, զքո դատաստանին զիրն, զոր այն օրն ետու պակաս կայ ՚իներս՝ բեր լնում՝ խեղճ ես . որ յետոյ այլքո դաւըն կերն չգայ զքեզ ՚ի դատաստան քարշէ՝ և զքեզ ստէ: 1 սէ այրն, ով դատաւոր՝ թէ պակաս կայ՝ ՚ի բղու զն է, թէ չէ յիմ զիրն պակաս չկայ.

NOTE

և

EAP180-1-1-8_144L.jpg

NOTE

200

TEXT

և այնպս յամօթ եղև կաշառօք դա տաստաննորա: Ցուցանէ առակս՝ թէ ով ոք կաշառօք դատաստան առնէ, կամ յայս կեանքս պիտի խայտառակի. կամ ’ի Հանդեր ձեալն :

NOTE

Ճծը

TEXT

Ասի յառակաց՝ թէ թագաւոր մի կամեցաւ աշտարակ շինել. և քանի ցերեկն շինէին՝ գիշերն ’ի փուլ գայր: Եւ ժողովեալ զգի տունս իւր էհարց զպատճառն. ենք ասեն թէ կամիս որ այլ չփլչի. դու ընտրէ տգէտ մարդ մի՝ որ քան զինքն տգէտ չ լինի՝ և իմէջ որմին դիր կենդանի. և իվեր ած՝ որ շէն մնայ: Ասէ թագաւորն՝ զայդ բանի ընտրութիդ այլ դուք արարէք՝ թէ յինչ Հարաքաթ կայ ’ի տգէտ մարդն, և բերէք՝ որ տամ դնել ի մէջ որմին: Իսկ նց նստեալ ’ի մի ասին ընտրել՝ թէ յինչ տեղ գտա նեն տգէտ. և ոմն ասաց զձկնորսն

NOTE

ժդ 13 գոլ

EAP180-1-1-8_144R.jpg

NOTE

201

TEXT

գուտգէտ. որ Հետ մարդոյ չէ նր առնուլն . և տալն, այլ ’ի ջուրն . և ’ի Հետ ձկանց: Իսկ ոմանք ասա ցին, զի՞նչ պահալն՝ որ Հետ իշուն կենայ՝ եղիւր կեանքն ’ի մայրին և ’ի լերինն Հետ գրաստուն շրջի: Ոմանք զծովավարն ասացին. իսկ ոմանք զհովիւն, որ ’ի լերինս զամառն և զձմեռն Հետ ոչխա րացն շրջի,

’ի գիւղ կամ ’ի քաղաք ոչ մտանէ : և Հաւանեալ կամե ցան բերել զհովիւն: Յայնժամ ասէ միոմն ’ի նոցանէ.թէ թագաւ որիս մերոյ է՝ Հովիւ մի. որ ’ի լեառն է ծնեալ Հետ ոչխարացն, և անդ է սնեալ՝ և զիւր ժամանակն ոչ ’ի գիւղ մտեալ՝ և ոչ ’ի քաղաք. և յու ղարկեցին տասն ձիաւոր՝ զի բեր ցեն զայրն. և նք գնացեալ գտին զհովիւն, զի կթէր զոչխարսն. և ողջունեալ ասեն՝ կոչէ զքեզ թա գաւորն: Ասէ Հովիւն՝ ես զիմ ժա մանակս ոչ ’ի քաղաք եմ գնացեալ՝

NOTE

ժդ 14 և

EAP180-1-1-8_145L.jpg

NOTE

202

TEXT

և ոչ ’ի գիւղ. զիս զիարդ կոչէ : և նք ասեն պատճառանօք՝ ոչ գի տեմք:իսկ նորա պատուեալ զզօրա կանսն, և զգառն զենեալ, և պանիր մածուցեալ ուրախացոյց զնոսա. և երդմամբ Հարցեալ զպատճառն կոչելոյն : Իսկ նոցա ասացեալ թէ այսպիսի պատճառաւ կոչէ զքեզ.զի իմաստունք նորա ասացին . թէ մի տգէտ ’ի մարդկնէ դնեն յորմն. որ չեն մնայ: Յայնժամ ծիծաղեցաւ Հովիւն, և ասէ. յիմարք և տգէտք այնք իմաստունքն են. որք զայդ ընտրութիւնն արարեալ: Եւ բե րեալ զոչխարմի ասէ. ես ցուցից ձեզ զտգիտութիս իմ: և ասէ, ոչ խարս. այս երկուս գառինս ունի ’ի փորն մինն էգ է, և միւսն որձ . միոյն զլուխն սեաւ, և միոյն սպի տակ՝ և զենեալ ոչխարն և Հանեալ զգառինսն ’ի փորոյն . և էր այնպս ոպս ասացն: Եւ բերեալ ոչխար մի՝ ասէ, ոչխարս այս մէկ գառն ունի ’ի

EAP180-1-1-8_145R.jpg

NOTE

203

TEXT

՚ի փորն. անձն սեաւ և գլուխն սպի տակ՝ և ինքն որձ. և զենեալ տես ին այնպէս: Եւ ասէ հովիւն, զայս երկու բուն գեհս որ կայ ձեր առա ջի, զամէնն գիտեմ, թէ որն է՝ որ ծնանելոյ է. և որն է՝ որ ստերջ է, և որն է, որ որձ ծնանի՝ և որն է որէգ և որն սեաւ կամ սպիտակ, կամ որն խայտախարի. ձեր գիտունքն կար են գիտել զայս : ( սեն զօրականքն ոչ ամեննին: ( սէ հովիւն ապա գի տացէք՝ որ ես չէմ այն տգէտն, և յիմարն՝ զոր դուք խնդրէք. այլ թէ կամիք՝ ես ցուցանեմ : Թող թագաւորն զիւր անխօ նայիպն բռնէ, թալանէ, և զինչ ունի զամէն առնու . և իմէջ քաղաքին, ՚ի հրապարակին կախէ . և չարա չար տանջէ՝ որ ամէն քաղաքացիքն տեսանեն. և տանին՝ թաքուցա նեն և ասեն, թէ սպանեցին . և ե րէք օր ՚ի քաղաքն կանչեցնեն, թէ զի՞նչ մարդ որ զայ՝ զայն նայիպի

NOTE

ժդ 2 գործն

EAP180-1-1-8_146L.jpg

NOTE

204

TEXT

գործն ՚ի յանձն առնու . նայ ապրանքն զամէն այն մարդոյն տանք՝ որ ՚ի նորա տեղն նստի : Այն մարդն, որ զայն ամէն խաղ քութին տեսանէ , և լսէ՝ զոր յայն նայիպին գլուխն անցուցին . և յառաջ զայ թէ ես լինիմ՝ թա զաւորին նայիպ . այն մարդն է յիմար, և տգէտ. զայն բռնե ցէք՝ իմէջ որմին դրէք կենդանի, որ այլ չի փլչիլ. և ՚ի չէն մնայ : Իսկ նոքա եկեալ պատմեցին թա զաւորին. և թագաւորն արարեալ այնպէս . եգիտ զայրմի որ մինչ դեռ կանչեցնէին ՚ի քաղաքին՝ թէ ով զայ զայն նայիպին զիշխա

նութին, և զգործն յանձն առնու, նա զնր ապրանքն և զհայրենիքն նմա տամք: Յայնժամ՝ ջրմի . և թօնի այրմի յառաջ վազեաց և ա սաց՝ թէ ես յանձն առնում՝ զայն նայիպութին . և Հարցին ցնա՝ թէ տեսեր ընդ այն նայիպին Հետ ինչ արա

EAP180-1-1-8_146R.jpg

NOTE

205

TEXT

արարին . նա ասէ՝ այո տեսի. բայց ես այլ աղէկ առնեմ, որ զերդ զայն չ լինիմ: Եւ նց առեալ վաղվաղա կի տարեալ եդին կենդանի յորմն շինուածոյն. և Հաստատուն եկաց շինուածն: Ցուցանէ առակս: Թէ ոք զընկերն տեսանէ ՚ի գործ թա զաւորի, կամ մեծամեծաց ձեռն անկեալ՝ և այնու պատճառաւն ՚ի յաղքատութի և ՚ի տուգանս ան կեալ . և ինքն յանդգնեալ ՚ինոյն գործն ձեռնարկանէ . նման նմա լինիցի . և ՚ի կենացն ևս զրկեսցի:

NOTE

ճծթ

TEXT

Ասի յառակաց՝ թէ աքլօրք երկու կռուէին իմէջ փողոցին . և մէկն յաղթեաց ընկերին, և ձգեաց զնա. և Հպարտացեալ, ել ՚ի բարձր տանիս. և սկսաւ կարկա ջել՝և ձայնել բարձր, որ յաղթեաց ընկերին, և Հպարտացաւ ինքն ընդ իւր անձն: Եւ ահա արծուի մի ՚ի վերուստ էառ զինքն. և վե րացաւ

NOTE

ժդ 3

EAP180-1-1-8_147L.jpg

NOTE

206

TEXT

բացաւ յօդս երկնից: Ցուցան առակս: Թէ որ խնդայ ՚ի կորուս թշնամւոյն իւրոյ. և ուրախան Հպարտութբ. թէ յաղթեցի ընկ րին.գայ իվ րնր նեղութի յանկա ծակի, որ վայ տայ իւր անձինն՝ ո ասէ դաւիթ. գուբն զոր փորեա և Տրն ասէ՝ թէ որով չափով չափ

NOTE

ՃԿ

TEXT

Լսի յառակաց՝ թէ աքլօրն օթե ւէր ՚ի ծառ մի, և իմէջ գիշե ին սկսաւ փառաբանել զԱծ. աղաղակէր անտանելի ձայնիւ. լո եալ աղուէսն. և գայ առ աքլօր և ասէ նբ քահանայ,էջ ՚ի ծառէդ ՚ի վայր, զի այսօր տօն է մեծի նբ կարապետին. և փիլիսոփայ չու նինք, որ կատարենք զտօնս : Ասէ աքլօրն սակաւ մի Համբերեա մինչև գայ քեռին իմ, որ Հանդիսիւ տօն առնեմք. և իբրև առաւօտ եղև գայր շունմի քերց յանկարծակի և բռնեց զաղուէսն: և նա այլ ընդ այլ

EAP180-1-1-8_147R.jpg

NOTE

207

TEXT

այլ ձայնէր, և գոռայր: Ասէ խօսօղն, վայ ինձ թէ այդպիսի զարշելի ձայնիւդ կամէիր կատա րել զտօն մեծի սբ կարապետին: Ցուցանէ առակս: Թէ որ ջանայ նենգել ընկերին իւրոյ.ինքն անկցի յորոգայթն ոպ Քն հրամայէ . և սաղօմօն. որ փորէ: Ասի յառակաց՝ թէ ժողովեցան երեսուն նապաստակք. խոր հուրդ արարին, և ասացին : թէ եկայք, երթամք ամէնքս միաբան անկանիմք ՚ի ծովն. որ ազատիմք ՚ի յայս դառն կենացս . զի կարի տը կար է ստեղծեր զմեզ Ածէ. թէ զա զանքեն,թէ հաւք

են զմեզ ուտեն: լաւ է որ մեռանիմք քն այս կենօքս ապրիմք: Եւ ՚ի գնալն իւրեանց տե սին շատ գորտունս . և ճիչ բար ձեալ գորտանցն փախեան, և ան կան ՚ի ջուրն, և թաքեան : և նա պաստակքն գոհացան զԱյ . զի

NOTE

Ճլա ժդ 4 տկարք

EAP180-1-1-8_148L.jpg

NOTE

208

TEXT

տկարք տեսին քանզինքեանս : Ցուցանէ առակս: Թէ մի Հայիր ՚ի մարդն՝ որ բարձր է զքան զքեզ՝ և մխիթարեաց: և թէ մեղաւորեւ . մի Հայիր ՚ի կարի արդարն՝ և անյոյս լինիր. այլ Հայեաց ՚ի մեծ մարդիկ, և մխիթարիր . և յուսով դիմեա առ Ած, և փրկիս :

NOTE

ճկբ

TEXT

Ասի յառակաց՝ թէ ՚ի տօնի զատ կին եկին թռչունքն ամ, և խոս տովանէին ըստ օրինացն . եկին ընդ նոսա սակաւ մի և Հողամաղք: խոստովանէին քահանային՝ թէ չեմք մեղուցեալ. բայց զի որսացաք զմուկն, և զգորտ, և կերինք: Եւ նա մերժեաց զնոսա պիղծս կոչելով, և նց երթեալ ստացան զանձս բա զումս, և մատուցին քահանային. և տարեալ այնու արդարացոյց զնոսա ասելով . ոչ գիտացիք խոստովա նել՝ զի այն ձեզ թռչունք են և Հա ղորդեաց զնոսա : Օ ազահ ե պիսկո

EAP180-1-1-8_148R.jpg

NOTE

209

TEXT

պիսկոպոսացն, և քահանայից, առակս նշանակէ: զի զպոռնիկս և զայլս մերժեն յեկեղեցւոյ, և դար ձեալ ընդունին կաշառօք : Ասի յառակաց՝ թէ բուն հրշե տակ առաքեաց առ արծուին. և խնդրեաց զդուստր նր հարսն: և ասէ դու տունջեան քաջամարտիկ ես և ես գիշերոյ . պատշաճ է մեզ խնամութի. և յանձն էառ տալ. և ՚ի լինիլ հարսանեացն, ՚ի տուն լոյս ոչ կարէր տեսանել փեսայն, և՚ի գիշերի հարսն. և ծաղր առնէին զնա բազէքն . և լուծաւ հար սանիքն : Ցուցանէ առակս: Իբր հաւատացեալ մարդ զդուստր իւր տայ այլասեռի խաւարեցելոյ ՚ի լուսոյ: Այր մի գնալով ՚ի ճանապարհի հանդիպեցաւ արանց՝ որք զճո պանս կապեալ՚ի բուն վէմ մի, զի

NOTE

ճկզ ճկդ ժզ 5 շար

EAP180-1-1-8_149L.jpg

NOTE

210

TEXT

շարժեսցեն զվէմն և առ ինքեանս քարշեսցեն. բայց յամենուսց կող մանց քարշէին . կամելով իւրաքան չիւրոք առ ինքն քարշել՝ և իւրա ցուցանել . Իսկ քարն ամեննին ան շարժելի մնայր՝ և անխախտ: Ասէ այրն, ով մարդիկք, եթէ կամիք շարժել զդա ՚ի տեղւոջէ իւրմէ, ՚ի միոջէ կողմանէ քարշեցէք, զի շարժեսցի . քանզի յամենէ կող մանէ քարշելով՝ զդա շարժել անհ նարին է : բայց նոքա ոչ կամեցան լսել նմա . այլ յամառեալ քարշէին ըստ սովորութե իւրեանց՝ վս որոյ քարն մնայր անշարժ : Ցուցանէ : 1] էմն է ինքն Քս ըստ Դանիէղի և Պօղոսի . իսկ քարշօղքն առ ին քեանս Քրիստոնեայք, զի իւրա քանչիւրոք ազգ քրիստոնէից կամի Հակառակութբ զՔս առինքն քարշել՝ այսինքն իւրացուցանել՝ բայց Քս անշարժ մնայ՝ և ոչ առ միոք գնայ:

քանզի Քս ո՛չ կամի զհա

EAP180-1-1-8_149R.jpg

NOTE

211

TEXT

զհակառակութի և զընդդիմու թի հաւատացելոց իւրոց. այլ զսէր և զմիաբանութի նոցին. որովք շարժի Քն առ նոսա:

HEAD

Վ Ե Ր Ջ: Ցանգ գրոցս:

TEXT

Նախ յառաջաբանութի սակս աշ խարհաց, ներ ում խօսի բանս յերկրաչափութէ, նա և յիշատա կէ զանուանս արանցն, որք եղեն զտօղք երկրաց. նաև թէ որոյ հրամանաւ 'ի խնդիր ելին: նաև զանուանս չափուց և կշռոց: այլ և զմասունս երկրի բաժանէ յերիս: Եւ զորքանութի ծովուց բացա տրէ. և զպարունակութիս նո ցունց սահմանէ հանդերձ պարա գայիւք: և զանուանակոչութիս նց բացորոշ է:

NOTE

զԱռա

EAP180-1-1-8_150L.jpg

NOTE

212

TEXT

զԱռաջին մասն դնէ զեւրօպիոյ սկսեալ 'ի սէպտայէ, և յաւարտէ թրակիայիւ և ելլադայիւ . ներ ում պարունակին աշխարհք երկո տասանք : սկսանի յերեսն : 19. զերկորորդ մասն սահմանէ զԱֆրիկայ, սկսեալ 'ի նունոյ սեպ տայէ՝ և ծայրատրէ կարմրով ծովու և հարաւայնով ծովու . նո րում բաժանէ զաշխարհս եօթն . բայց զեօթներորդն 'ի յոլովս հա տանէ : սկսանի յերեսն . 26 :

զԵրրորդն զԱսիայ, սահմա նէ յարևմտից ծովախառնորդիւն Պոնտոսի, իսկ հարաւոյ արև մտից ծայրիւ նունոյ կարմրոյ ծո վու . և աւարտէ արևելականաւ հարաւայնով, և հիւսիսայնով Ովկիանոսիւ՝ և բաժանէ յաշ խարհս . խբ ։ Գեղեցկապէս և ման ռամասնաբար զաշխարհս Հայոց բացորոշելով ։ Բայց զաշխարհն Սարմացւոց յանուանէ և եթ յիշէ լով.

EAP180-1-1-8_150R.jpg

NOTE

213

TEXT

լով. նոյնպէս և զաշխարհն հնդ կաց. սկսանի յերեսն. 32: Չորրորդ մղոնաչափութբ զբա ցակայութիս նոցունց բացատրե լով. ՚ի դուայ սկսանելով՝ և յամենեսան կողմունս ընթանալով բացատրէ: սկսանի յերեսն. 65: Անուանք գետոց սկսանին յե րեսն. 69: Այլ ևս անուանք գետոց ոչ ՚ի Մօսիսէ արարեալ այլ յայլմէ ։ և բղխմունք նոցունց, և ընթացք նո ցունց. յերեսն .70: Անուանք քաղաքաց հնդակաց՝ վաճառք նոցունց: և փարթամու թիք, որքանութիք, և հոյակապու թիք իւրեանց. յերեսն. 77: բայց բանին շարադրութի զռեհկա բար:

NOTE

Եր

EAP180-1-1-8_151L.jpg

NOTE

214

HEAD

Երկրորդ Գիրքն է ԱՂՈՒԵՍԱ ԳԻՐՔ:

TEXT

Ագռաւու զպանիրն ՚ի բերանն ունիլ. գլուխ. լե: Ագռաւու զձագս խրատելն. հը: Աղէկսանդրու յամ ուրեք իւրովի գնալն դեսպան.

ժզ: Աղէքսանդրու պատահելն եզեր աշխարհի. ժը: Աղէքսանդրու զնուռնն կտրելն. ժթ: Աղէքսանդրու զօրու իւրով ձեան պատահիլն. ի: Աղէքսանդրու մեռանիլն. ժէ: Աղուէսու զսառն գտնուլն. լզ: Աղուէսու և խեցգետնի եղբայր լինիլն. լթ: Աղուէսու զուղտն մերձ 'ի մահ գտանելն. ծէ: Աղուէսու զթուղթ գտանելն, և առ գայլն տանիլն. կը: Աղուէ

EAP180-1-1-8_151R.jpg

NOTE

215

TEXT

Աղուէսու զգայլ խաբելն. կէ : Աղուէսու զպանիր յորոգայթն գտնուլն . կը : Աղուէսու քաղցնուլն, և իմէջ հորոյն զքար գտնուլն. ձ : Աղուէսու դետարար լինիլն. ձա : Աղուէսու զպաղ գտնուլն. ձբ: Աղուէսու զզրահ գտնուլն. ձգ: Աղուէսու զկքաւ ըմբռնելն.ճդ: Աղուէսու զ չիտ ըմբռնելն : ճե Աղուէսու արծուոյ եղբայրա նալն. ճլզ : Աղքատի գնալն 'ի գիւղ մի. ծե: Աղքատ երիցու մօտ մսա գործ գնալն . ճծ : Այծոյ 'ի բարձր պտնտտիլն.ճխէ: Այրի կնոջ զգող տղայ ունիլն . լը : Այրուոյ զտասն այծ ունիլ. ճխե : Արանց երկուց ընկեր անալն.ճծա: Առիւծու 'ի քար այր մտնուլն.ճժ: Առիւծու հիւանդանալն և բժշ կաց խնդիր առնելն . ճէ : Առիւ

EAP180-1-1-8_152L.jpg

NOTE

216

TEXT

Առիւծու զաղուէս սպասաւոր կալնուլն . խ : Առիւծու տեսանելն զփախուստ կենդանեացն . հզ : Առիւծու հիւանդանալն, և էր էոցտես գալն . հդ : Առիւծու, գայլոյն, և աղուէսին եղբայրանալն . ճբ : Առնն ելանելն 'ի դժուար դարն 'ի վեր . ը : Առնն աղքատանալն 'ի ղալաթէ այ՝ և զարտ վաճառելն . ժդ : Առնն

ըմբռնիլն ՚ի գողութե . իա : Առնն գերեզմանակտրի, և խա թունին . իբ : Առնն բաղրկանի զքեռինսն տա նիլն . իե : Առնն միոյ յէէմ գնալն . իզ : Առնն միոյ առ թագաւորն մտա նելն . ճա : Առնն մեծտնգնալ խնամախօս ծղ: Առնն գնացողի առ դուռն . ճծէ: Առնն մրդաապանի փախուստն.ծթ:

NOTE

ժդ 14 Առնն

EAP180-1-1-8_152R.jpg

TEXT

ԲԱՑԱ- ԿԱՅՈՂ ԷՋ

EAP180-1-1-8_153L.jpg

TEXT

ԲԱՑԱ- ԿԱՅՈՂ ԷՋ

EAP180-1-1-8_153R.jpg

NOTE

219

TEXT

Գազանին ծովայնոյ յորոյ բերա նոյն Հոտ անոյշ գայ . խե : Գայլոյ և աղուէսու եղբայրա նալն . կե : Գայլոյ զէշ գտանելն, և իշոյ աքա ցելն . ճզ : Գայլոյ ՚ի լերին ելանելն. ճխզ : Գողի զձմերուկ գողանալն. ճի: Եղբօր ումեմն գնալ առ Հայրն, և խոստովանիլն . ժզ : Երկուց աքլօրաց կռուումն.ճծթ: Երկուց արանց յոյժ բարեկամաց. ճծզ : Երնջուցն խայտալն, և զեզինսն խրատելն . կ : Թագաւորի դեսպանաց զսեղան կազմելն. ա : Թգրի բարեմտի զճաշ կազմելն. բ: Թգրի յարևմուտս յաթոռ ելա նելն. գ : Թգրի որդւոյ ՚ի վերջին աղքատու թի Հաաանիլն . դ : Թգրի նեղանալն ՚ի լուոց . ե :

NOTE

ժե 2 Թգրի

EAP180-1-1-8_154L.jpg

NOTE

220

TEXT

Թգրի զմի խոզ ունիլն և սիրելն. ղ Թգրի զփակեց տեսանելն. է : Թգրի միոյ մեռանիլն. և միոյ ականն. ժե: Թգրի հազար ակն ունիլն . իդ : Թագաւորի շրջիլն իվ ր իւրոյ գաւ առին. իէ : Թգրի զբարձր զսիւն կնգնելն. իը: Թգրի զգեղեցիկ զսգի ունիլն. իթ: Թգրի երիցս զերազ տեսանելն . լ: Թգրի զժառանգ ոչ ունիլն . լա : Թգրի զանիրաւութի առնելն . լբ: Թգրի միոյ սիրելի օձն . կթ: Թգրի աշտարակ շինելն . ճծը: Թռչնոց ՚ի տօնի զատկի գալն.ճկբ: Ժողովումն թռչնոց կացուցա նել թգր զսիրամարգն. ղէ: Ժողովումն թռչնոց կացուցանել զարտուտն թգր. ճծդ: Ժողվումն երեսնից նպտկցն.ճկա Իբան աւետարանին . ժբ : Իմաստնոյ աւագիրիցոյ. ճիբ : Իմաս

EAP180-1-1-8_154R.jpg

NOTE

221

TEXT

Իմաստնոյ ճարտարապետի. ճիե : Իմաստնոյ աղքատի զծոյլ որդի ունիլն . ճխա : Իշոյ ՚ի դժուարին տեղն. ճղ: Իշոյ առնուլ զյաւանակն յարօ.ձզ: Իշոյ անկանիլն ՚ի գետն . ձե : Իշոյ մեծարելն ՚ի հարսանիս . ձզ: Իշոյն աւետիս տլն վն որդւոյ. ձէ: Իշխանի որդւոյ մեռանիլն . ժա : Լուսինն խաւարի. ղ: Խլրդոյ զբուն ոչ գտանելն. ճիը: Խոզն.և բզէզն և այլ կենդանիք. ղբ : Խօսիլն եզին և ձիոյն ը միմեանս.ճիդ: Ծառ մի հնդկաց աշխարհին.ճժդ Կապիկին որ ապուզայ ասի. խա : Կապիկի զսովորուի առնուլն հզ: Կատուի զփիլոն հագնիլն . խթ : Կատուի լուսակալ լինիլն . ծ : Կենդանւոյ զորովայն լուանլն ճծե:

Կենդանւոյ անոխկալութին. ճիթ :

NOTE

ժե 3 Կնոջ

EAP180-1-1-8_155L.jpg

NOTE

222

TEXT

կնոջ երեք երեսի ջուր լինիլն. ճխը: կնոջն գնալն յէջմ, թ: կնոջ ընդ դրախտ շրջիլն. ծգ: կնոջ այրւոյ զկով մի ունիլն. հբ: կուսին Հաւատաւորի. ղթ: Հարսին հեզի և համբերողի ծդ Հարցումն ընդ աղուէսին վ արուեստի. լէ: Հինգ բան ՚ի մարդկանէ անգիտէ լի. իգ: Հիսան աշխատիլն երեք ամ բաղդատ քաղաք. ճխգ: Ձկան ՚ի ջրոյն ելանելն. ճլթ: Ձկան ՚ի կեռ գալն. ճխ: Ձմռան չորացուցնելն զբոյսս. ղա Ճանապարհորդի Հանգչիլն յաղ բերն. ձը: Մեծատանն ունողի զժառանգ զքեռորդին. ղը: Մկնց զպէհ չունիլն ազգէն. ճժէ: Միայնակեցի, նստիլն իվ ր վիմի. ժ: Միայնակեցին, ՚ի սահմանս գեղջ բնակողին. խդ: Միայ